Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՈՂԸ ԵՏ ՔԱՇԱԾ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Ստեփանակերտ- 2014

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՈՂԸ ԵՏ ՔԱՇԱԾ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ 2014

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5(2Հ)
Գ 888

Գ 888 Գրիգորյան Վ.
Քողը ետ քաշած գրառումներ/ Վ. Գրիգորյան.-
Ստեփանակերտ: Դիզակ Պլյուս, 2014.- 200 էջ:

Սույն գրքում զետեղված են հեղինակի վերջին 20 տարվա օրագրային գրառումները, որոնցում արտացոլված են այն բոլոր առանցքային իրադարձությունները, ժամանակի դեմքերն ու դեպքերը, որոնց այս կամ այն կերպ առնչված են եղել իր՝ Վ.Գրիգորյանի ապրած ուրախ կամ տխուր օրերը:

Պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների թեման հեղինակի այս գրքում ևս դոմինանտի դերում է:

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5(2Հ)

ISBN 978-99941-2-849-5
© Գրիգորյան Վ., 2013

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Օրագիրը մարդու անչա՛փ անձնական հենքի, այսպես ասած՝ ինտիմ, գրառումներն է պարունակում սովորաբար, որ հրատարակման է տրվում… սովորաբար հեղինակի մահից հետո:

Վերա Գրիգորյանը «խախտել» է այդ չգրված օրենքը, եւ, կարծում եմ, ճիշտ է վարվել: Այդ կնոջ, կուտակված ևս առավել՝ ավելին՝ մոր, տառապյա՛լ մոր, լոկ ի՛ր համար թղթին հանձնածն անգամ, որքան էլ պարադոքսալ թվա, այնքան է ներհյուսված ուրիշների՝ ընկերների, հարեւանների, գործընկերների, ավելի լայն վերցված՝ արցախցիների, հայ ժողովրդի ճակատագրով, ուրախությամբ ու տխրությամբ, որ կարդացողը մի պահ նույնիսկ մոռանում է շարադրանքի հույժ անձնական շերտերը ու տեսնում ավելի շատ ընդհանրականը…

Հավանաբար, հեղինակն ինքն էլ է զգացել դա, որի համար էլ որոշել է տարիների ընթացքում իր մտքերին եւ գլխով անցածին հաղորդակից դարձնել ուրիշներին: Օրագիրն ընթերցվում է հաճելիորեն: Չնայած փաստացի նյութում առկա ողբերգականությանը՝ այն ավելի շատ շաղախված է հույս ու լույսով վաղվա օրվա հավատով:

Ինտիմ էջերում ևս Վերա Գրիգորյանը հանդես է գալիս որպես հայրենասեր, որպես երկրի իսկական քաղաքացի, ու եթե մեկ-մեկ խիստ է արտա-

հայտվում այս կամ այն երեւույթի, անձի մասին, ապա դա անում է կոռեկտորեն՝ հիշելով, որ յուրաքանչյուր անհատի մեջ էլ սեւի կողքին ապրում է եւ սպիտակը… Թվում է մարդ ավելի անկեղծ լինել չի կարող, քան տրված է այս օրագրում: Օրագիրն այս, որ հեղինակի 16-րդ գիրքն է, թվում է ոչ միայն տիկին Վերայի, այլեւ, կարելի է ասել, Արցախի բոլոր մայրերի անցած դժվարին ճանապարհն է՝ 1992-ից մինչեւ այսօր: Ցանկանք, որ գոնե հետայսու միայն ուրախ մտքեր գրառվեն հեղինակի եւ հետագա մյուս բոլոր հայ օրագրավարների տողերում:

Թող Աստված դա անի՛ նրանց համար…

Միքայել ԲԱԼՅԱՆ

❁

Սկսվել է 1994 թվականը: Նոր տարի է… Սպարտակը նորից գնաց դիրքերը, ու չգիտեմ ինչու՝ սկսեցի մեր սարքած տոնածառից իջեցնել խաղալիքներն ու տեղավորել արկղի մեջ՝ չսպասելով հունվարի 13-ին… Տղաս գնաց, եւ ասես ինչ-որ մի թել կտրվեց սրտումս: Չեմ հասկանում, թե ինձ հետ ինչ է կատարվում: Արդեն գիշեր է, Շուրան, որ մի քիչ խմած էր, նրան ճանապարհելուց հետո պառկեց բազմոցին ու հագուստով էլ մնաց քնով անցած: Իսկ իմ քունը չի տանում: Նստել եմ սեղանի մոտ, գրիչը ձեռքս առել՝ ինքս էլ չգիտեմ ինչու: Ախր արդեն քանի՞-քանի տարի է՝ օրագիր չեմ պահում: Հարսանեկան ճամպրուկից հանեցի-ստուգեցի այն՝ վերջին գրառումը կատարել եմ… ամուսնությունից երկու շաբաթ առաջ: Ուրեմն՝ ուղիղ քսաներկու տարի չեմ գրել:

Ընտանիքը մեծ պարտավորություն է: Այն խլում է անձնական կյանքիդ գերակշիռ մասը եւ ամբողջությամբ՝ ազատ ժամանակդ: Իմ պարագայում, համենայնդեպս այդպես է եղել եւ է՛: Երկուսի համաձայնությունն է ընտանիքը կամ անհամաձայնությունը: Եթե նրա մյուս անդամները քեզ աջակիցներ են, ապա հնարավոր է ապրել եթե ոչ բացարձակ երջանիկ՝ գոնե համերաշխ: Ճակատագիրը կյանքի մեծ փորձություններով անցած, նրա

մարտահրավերներին դիմակայած-հաղթած, բազմանդամ-բազմագույն-բազմաշերտ, բայց շատ համերաշխ ընտանիք է հարս տարել ինձ: Կյանքումս հանդիպած ամենաիմաստուն կինը եղել է կեսուրս՝ Հայկուշ Գրիգորյանը, լու՛յս ոսկորներին…

Ես ու Շուրան շատ ջահել էինք, բնավորությամբ էլ անկեղծ, բայց բռնկուն…Նա մեկ-մեկ «խմում» էլ էր եւ անսթափ միջոցին ցավ պատճառում ինձ: Չլիներ կեսուրս՝ բաժանվել էինք…Այդ կնոջ խորաթորհուրդ մտքերը հիմա էլ են զարմանք ու հիացմունք պատճառում ինձ: Չեմ զղջում, որ մնացի, որ երկուսով մեր բույնը հյուսեցինք ու երկու մանկան ծնողները դարձանք: Վաղուց ենք կես խոսքից միմյանց հասկանում: Տարիներ շարունակ կիսել ենք մեր ուրախությունները, հիմա էլ ահա տագնապն ենք կիսում: Սպարտակը գնաց ու քանի օր է՝ չի երեւում, լուր չի տալիս իր մասին:

Վերջ, այսօրվանից վերսկսելու եմ գրառումներս: Դա հիմա ինձ շատ է պետք, թեեւ չգիտեմ՝ կհերիքե՞ն ուժերս, բառերս՝ արտահայտելու այն ամենն, ինչ իմ հոգում է կատարվում: Վերատադրել այնպես, ինչպես զգում եմ: Չգրառել չեմ կարող, որովհետեւ սրտումս կուտակվածը կխեղդի, նեղվելուց համբերությունս ճաք կտա, կարոտից էլ, թվում է, կմեռնեմ: Բայց ունե՞մ ես, արդյոք, մեռնելու իրավունք: Այսօր արցախցի ամեն կնոջ մեջ է ապրում այս տագնապն ու ցավը, եթե բոլորն ու-

զենան մեռնել, հողը ո՞վ կպահի, հողը պահող զավակներ ո՞վ կծնի: Բա էլ ինչի՞ համար էր այս Շարժումը, այս պատերազմը, որի մասնակիցներից մեկը իմ Սպարտակն է, քո Դավիթը, նրա Արսենը, մյուսների Վահեն, Վահանը, Վահագնը… Մեծացած, առնականացած մեր բալիկները, որ հիմա հայրենյաց զինվոր են դարձել՝ փորձության մեջ հայտնված հայրենիքի զինվոր:

Չէ, պիտի՛ դիմանամ: Եվ վարեմ օրագիրս: Այս վիճակը,այս ճանապարհը, զգում եմ, երկար է ձգվելու: Պնդաճակատ թուրքը չի ուզում հանձնվել: Մեր «կապիտուլացվող Բեռլինը» դեռ հեռուների մշուշում է…Օրագիրն ինձ կօգնի գոնե քիչ-ինչ լիցքաթափվել, կօգնի դիմանալ: Վճռված է՝ գրելու եմ:

6.01.1994

❁

Երբ հիշում եմ, թե նրանք ինչպես նայեցին ինձ, մարմինս նորից է սկսում սառչել…

Ասացին՝ Ֆիզուլու ուղղությամբ մղվող մարտերին մասնակցող միլիցիայի ջոկատների կազմում զոհվածներ ու անհայտ կորածներ կան: Մեկ օր առաջ էլ իմացել էինք, որ Սպարտակենց ջոկը ոչ թե Սարսանգ է մեկնել, ինչպես մեր տղան ասաց տնից դուրս գալու պահին, այլ հենց Ֆիզուլու

ռազմաճակատ: Շուրան լսեց թե չէ՝ Վերա, ասաց, ես գնում եմ շտաբ, կամավոր եմ գրվելու: Ասացի՝ սպասիր, ես էլ եմ գալիս, գուցե երեխայից որեւէ լուր լինի:

…Մտանք Ազատ Աբրահամյանի մոտ: Չէ, դեռ լուր չկա, բացատրեց Ազատը, հանգիստ եղեք, հենց որ նոր բան իմացանք, իսկույն զանգելու եմ: Շուրայի կամավոր ռազմաճակատ գնալու միտքը նրան դուր չեկավ: Ասաց՝ տարիքով մարդ ես, մինուճար որդիդ՝ այնտեղ, ինչո՞ւ դու էլ գնաս: Շուրան թե՝ հենց դրա համար էլ գնում եմ…Ազատը ձեռքը դրեց նրա ուսին, հորդորեց.

- Նորից եմ ասում, գնա ու սպասիր: Մի բան որ պարզվի՝ իսկույն իմաց կտամ: Ասում եմ գնա, ուրեմն՝ գնա:

Այդ պահին էլ աչքս որսաց բաժնում գտնվողների, հատկապես կանանց, իմ կողմը նետած՝ մեկը մյուսին այնքա՜ն նման հայացքները: Դրանցում խղճահարություն կար: Չգիտեմ ինչու՝ ճչացի: Ինձ բռնեցին, որ չընկնեմ: Ազատը թե՝ սրա՞ն էիր սպասում, Շուրա, դե գնա էլի, տուն տար Վերային: Չեմ հասկանում, թե ժամանակից շուտ ինչու եք իրար խառնվել: Չե՞ք հասկանում, որ հիմա ուժեղ լինել է պետք…

Չեմ շարունակում, ձեռքս դողում է: Գնամ պառկեմ: Տեսնես վաղվա օրը ինչ կբերի:

18.01.1994

❁

Այսօր էլ չհաջողվեց ոչինչ պարզել: Կես գիշերին քնից արթնացել, դուրս էի եկել պատշգամբ՝ օդ շնչելու, նայեցի վեր՝ երկինքն աստղազարդ էր: Հիշեցի, որ տղաս հատկապես ամռան ամիսներին սիրում է նայել երկնքին ու «փնտրել իր աստղը», սիրտս փուլ եկավ: Տեսնես որտեղ է եւ ինչ վիճակում: Տե՜ր Աստված, թող մեկը գա եւ ասի Սպարտակին բերել են հոսպիտալ՝ ձեռքի կամ ոտքի մեկը կտրված, բայց կենդանի, ձեռքիս մատանին հանեմ տամ իրեն՝ որպես բարի լուր բերողի:

Այդ պահին դեմքիս թեթեւ ապտակի ցավ զգացի: Շուրան էր: Արթնացել՝ անկողինս դատարկ էր գտել եւ անհանգստացել:

- Չես ամաչո՞ւմ,- ասաց,- ինչե՜ր ես դուրս տալիս…Գուցե երեխան ողջ-առողջ է, գալու է, ի՜նչ ես սուգ ու շիվանը դրել…

Հարցրի՝ բայց դու ինչպե՞ս իմացար, թե ես ինչ էի մտածում: Ասաց՝ որովհետեւ բարձրաձայն էիր մտածում…

Ինձ ներս տարավ ու ցերեկվա վազվզուքից հոգնած՝ նորից քնով անցավ, իսկ ես դեռ սեղանի մոտ նստած՝ մտածում եմ նրա խոսքի վրա. գուցե իսկապես վատ բան չմտածեմ, որպեսզի լավն առաջներս գա:

20.01.1994

❁

Այսօր ներքին գործերի նախարարությունում էինք: Երեւանի սպեցնազից եւս անհայտ կորածներ կան: Նրանցից մեկի՝ Ենգիբարյան Մամիկոնի հայր Ստյոպան եկել՝ ուզում էր որդուն որոնելու գնալ: Նախարար Իսագուլովն ու տեղակալ Ալեքսանդր Աղասարյանը, որը միաժամանակ ռազմագերիների ու պատանդների գծով հանձնաժողովի նախագահն է, խոստացան մեզ մեքենա տալ՝ Կարախանբեյլի հասնելու համար: Ականազերծող էլ են տալու... Մամիկոնի եւ Սպարտակի հետ «անհայտ կորած» Ավթանդիլյան Գառնիկի եղբայր Գագիկն էլ էր մեր կողքին: Բայց Երեւանից զանգեց գեներալ Պապոյանը եւ Ստյոպային ասաց, որ Մամիկոնին գտել են, ողջ է: Ստյոպան, մեկեն երջանկացած, գնաց: Երանի՜ քեզ՝ մտածեցի՝ տեսնելով, թե «ոտքին ոտք բուսած»՝ ինչպիսի փութկոտ քայլերով է հեռանում, համարյա վազում:

Կարախանբեյլի գնալ չհաջողվեց, բայց մի տեսակ հույսով ենք լցվել. որ Մամիկոնին գտել են, գուցե մերոնք էլ գտնվեն:

24.01.1994

❋

Աբովյանից մեր տուն զանգեց Ստյոպան: Ձայնը խզված էր, կերկերուն.

- Վերա՜ քույրիկ, աստծուն աղոթիր-աղաչիր, մի մատաղ էլ արա, որ էն վիճակում, որում Մամիկոնիս են գտել, Սպարտակին չգտնեն…

Ահն ընկել է սիրտս, հիմա չգիտեմ ինչ անել: Չէ, հենց վաղը տոմս կվերցնեմ՝ Աբովյան գնամ: Իմ աչքով կտեսնեմ ինչ է եղել տղայի հետ: Ո՞վ գիտի, գուցե Սպարտակիս էլ տեսած լինի…

27.01.1994

❋

Երանի՜ չգայի…Տասնիննամյա տղայի երեսն ամբողջովին այրված է, մի ականջի վերին՝ մյուսի ստորին կեսը, մի ձեռքի արմունկից ներքեւը չկան, մյուսի դաստակից բութ մատն է մնացել, մի ոտքից՝ ծնկից վերեւը, երկրորդի էլ կրնկից ցածը չկա: Ոչ նորմալ լսում է՝ ոչ տեսնում:

Խե՜ղճ Ստյոպա, հիմա է տեղ հասնում ասածդ… Այս ի՜նչ ահավոր բան է պատերազմը: Ուղեղումս Ռաֆֆու «Սամվելից» մի տող արթնացավ. «Մեծ գործերը մեծ էլ զոհ են պահանջում»: Տեր Աստված, պահիր որդուս, եղունգիդ տակ էլ լինի՝ պահիր-պահպանիր մինուճարիս:

28.01.1994

❋

Շուրան կողքիս քնած է: Ծանր է շնչում: Անկապ ինչ-որ բան է ասում բարկացած… Ո՞ւմ հետ է վիճում: Տեսածիս մասին լիովին չեմ պատմել նրան: Ինչո՞ւ ասեմ, որ ինձ նման եղած քունն էլ փախչի՞ աչքերից, եղած խելքն էլ կորցնի՞: Այս ի՜նչ պատիժ է: Ոչ մոռանալ է լինում, ոչ աչք կպցնել: վաղը մի բան է հարկավոր մտածել: Այսպես ո՞նց կլինի, օրերը սահում գնում են, իսկ մեզ ոչինչ դեռ չի հաջողվել պարզել:

29.01.1994

❋

Այսօր Ալիկ Աղասարյանի առանձնասենյակում էի, երբ Երեւանից զանգեց Կարինե անունով մի կապիտան եւ հայտնեց, որ ինքնաթափ մեքենայով տասնվեց դիակ են բերել, տասնչորսին հարազատները ճանաչել տարել են, երկուսին ճանաչողտիրություն անող չկա: Ասաց բոլորն էլ միլիցիայի ջոկատներից են: Անհայտ կորածների հարազատներին իմաց տվեք, գուցե տեսնել ցանկացող լինի…

Հենց այդ պահին էլ ներս մտան Գառնիկ Ավթանդիլյանի մայր Անգինն ու Գագիկ եղբայրը եւ Աղասարյանին հայտնեցին, որ ադրբեջանցի Քյարամը, որը մինչեւ Արցախյան շարժումն ապրում էր Բալ-

լուջայում, Բարդայից ռացիայով կապվել է դիրքի մեր տղաների հետ, ասել «հաքիմին» իմաց տվեք (խոսքն Անգինի անասնաբույժ ամուսնու մասին էր), որ Գաբալը (սա էլ Գառնիկի մականունն է) իրենց մոտ է, թող կապի մեջ մտնի՝ ասեմ ինչ պետք է անի: Անգինն ու տղան, չկարողանալով թաքցնել իրենց ուրախությունը, իրար փաթաթված լաց էին լինում: Երբ նրանք գնացին, ես Ալիկին ասացի, որ մեկնում եմ Երեւան՝ այն երկուսին տեսնելու…

8.02.1994

❁

Կապիտան Կարինեին գտա: Իրենց մեքենայով ինձ տարան Եռաբլուր. այնտեղ էին մի անկյունում թեթեւ-ինչ (ժամանակավոր) հողին պահ տվել տղաներին… Ձեռքերս-ոտքերս դողում էին, երբ ետ էին տանում հողե վերմակը: Կռացա, նայեցի՝ չէ, Սպարտակս չէ, ոչ էլ ինձ ծանոթ անհայտ կորածներից որեւէ մեկը:

Իսկ հարազատները գտնվեցին: Պարզվեց՝ մեկը ոսկեպարցի է, մյուսը՝ մեծայրումցի:

Թող Աստված ների ինձ, եթե ասեմ, որ անհույս գնացել էի՝ հույսի նշույլով վերադարձա…

10.02.1994

❁

Հարսիս՝ Նինելի հետ այսօր գնում էինք ավտոկայանի դիմացի շենքը (ասել էին հիմա այնտեղ է Բայիլի բանտում 3 տարի 11 ամիս նստած ու նոր փոխանակված ծովատեղցի Աբրիկ Աբրահամյանը), շենքին չհասած փոս կա, մտքով անցած՝ չնկատեցի ոտքս ինչպես ներս դրի…Եկավ «շտապ օգնության» մեքենան, տարավ հիվանդանոց, ու հիմա գիպսի մեջ է ոտքս՝ ջարդվել է: Երբ կլավանա, չգիտեմ: Ճակատագիրն ինչո՞ւ է այսպես հալածում ինձ: Տե՜ր, համբերություն տուր…

18.02.1994

❁

Մինչեւ ե՜րբ կարող եմ, թեկուզ գիպսի մեջ, այսպես, «ձեռքերս ծալած», նստել տանը: Սպարտակ, բալա՜ս, մեռնի քո մայրը, որ անզոր է, որ ձեռքովը բան չի գալիս: Որտե՞ղ ես, ի՞նչ վիճակում…

26.02.1994

❁

Թեեւ բժիշկը համաձայն չէր՝ հանել եմ տվել գիպսը: Հերն անիծած, ինչ ուզում է, թող լինի:Մի տղա կա՝ Վահագն Մելքումյան, ասում է դուք միայն բենզինի հարցը լուծեք, ես անվճար կտանեմ-բերեմ: Երեւան, որովհետեւ Աբրիկը հիմա այնտեղ է, բուժվում է, ասում են՝ նյարդային վիճակն ահավոր է…

28.02.1994

❁

Երեւանի 15-րդ թաղամասում գտա նրան: Հարցրի՝ էլի՞ հայեր կան այնտեղ, թե՝ շա՜տ: Եվ տվեց անունները. Նապոլեոն Հայրիյան, Կառլեն Հայրումյան, Ղարիբ Առստամյան…Ոչ մեկին չճանաչեցի:

- Մի տղա էլ կա՝ Սպարտակ: Ստեփանակերտից է: Ե՜ս նրա մոր…

Թունդ հայհոյեց, իսկ ես սկսեցի դողալ…

- Հարազատնե՞ր չունի էդ տղան, ինչ է…-բարկացած շարունակեց Աբրիկը,- ինչո՞ւ չեն հետաքրքրվում: Խեղճի վրա սաղ տեղ չկա, վերքեր են: Բայց ջիլը պինդ է հա՜… մաշված- մի մասն դառած էլ՝ դիմանում է… Իմ գալուց առաջ ասաց՝ երեւի մերոնք մահացել են, թե չէ կփնտրեին-գտնեին ինձ, հատկապես մայրս որ կենդանի լիներ…

Աբրիկը հանկարծ այնպես գունատվեց, ասես կաշվի տակ արյուն չկար: Հարազատներն ինձ աչքով-ունքով արին՝ հերիք է: Երբ մի կողմ քաշվեցի, ասացին՝ էլ ծպուտ չանես, երբ այդպես գունատվում է, գիտակցությունը կորցնում է…

Փշրված սրտով դուրս եկա փողոց, մի թաքնված անկյուն գտա, նստեցի, մի կուշտ լաց եղա: Ես քո տառապող ջանին մեռնեմ, այ իմ բալա, վիրավոր բալա, հիմա, երբ գտել եմ հետքդ, սարեր շուռ կտամ, որ ճարեմ քեզ:

2.03.1994

❋

Չէ, որ կողմի վրա էլ վազում եմ, ոչինչ չի ստացվում: Իմ առջեւ միայն փակ դռներ են հայտնվում… Այս ի՞նչ պատիժ է, կախարդական շրջան: Ախր հասկանում եմ, որ քանի դեռ հետքերը թարմ են, տղաներին գտնելը համեմատաբար հեշտ կլինի: Ինչքան հեռանա, երկարի ժամանակը, այնքան կբարդանա-դժվարանա որոնման գործը: Բայց միայն իմ հասկանալուց ի՞նչ օգուտ…

Խեղդվում եմ, ուրիշ ոչինչ …

4.03.1994

❁

Հերթական «բանակցությունից» եկել եմ տուն: Ձգեստապահարանը բացեցի՝ դարակից թարմ սրբիչ հանելու, աչքս ընկավ այն շրջազգեստին, որ ժամանակին Մոսկվայից իմ խնդրանքով գնել էր Ամալյա Գրիգորյանը, որի հետ միասին աշխատում ենք ինստիտուտում: Սպարտակս ինձ արգելել է հագնել այն: Ասաց՝ հագիդ լրիվ սեւ շոր չտեսնեմ: Ձեռքս առա շրջազգեստը եւ կամաց բացվող դռան ձայն լսեցի: Հետո դեմս հայտնվեց Սպարտակը՝ հոնքերն իրար բերած.

- Ձե՞մ ասել էդ դեյրան չհագնես, ինչո՞ւ ես հանել տեղից:

Մեխանիկորեն ասացի՝ հագնելու համար չեմ վերցրել եւ ուրախությունից գժված ուզում էի գրկել իրեն, երբ մեր միջեւ մի ստվեր կանգնեց՝ որդուս ծածկելով ինձնից: Ձղայնացած ձեռքս տարա, հրեցի խանգարողին ու… լսեցի հարսիս՝ Նինելի ձայնը.

- Մա՞մ, ինչո՞ւ ես հրում ինձ, եկել եմ ասելու արի ճաշենք, սեղանը պատրաստ՝ քեզ ենք սպասում:

Ներսս ասես միանգամից դատարկվեց, մնացի առանց օրգանների: Առանց սրտի: Այն իսկապես կանգ էր առել: Հասկացել էի, որ եղածն ընդամենը տեսիլք էր:

- Մա՞մ, քեզ ի՞նչ է պատահել…Պա՜պա, մաման լավ չէ…

Հարսիս ճչոցի վրա սիրտս նորից սկսեց զարկել: Աստված, ինձ ուժ տուր՝ խելքս չկորցնեմ:

5.03.1994

❋

Նախիջեւանիկի կողմերից ոմն Աբդուլլա ռացիայով մտել է կապի գիծ, մերոնց ասել՝ եթե կարողանաք գտնել Մամեդով Ահմադին, մենք կկազմակերպենք Սպարտակ Գրիգորյանի փոխանակումը նրա հետ, մենք հաստատ գիտենք, որ այդ տղան պահվում է Նամիկ Աբասովի մոտ:

Ադրբեջանի…ՊԱԿ-ի պետի՜ մոտ…Դժվար կլինի: Բայց ճարներս ինչ, պետք է փորձենք: Աղաչում եմ քեզ, Աստված, թող էդ Ահմադ կոչվածը կենդանի լինի:

18.03.1994

❁

Սիրտս ոնց էլ զգում էր: Մամեդովի դիա՛կը գտնվեց: Էլ ի՞նչ փոխանակություն… Հարությունյան Վալենտինի հետ պատահածի մասին իմացողը էլ բան կձեռնարկի՞: Թուրքերը նրա ծնողներին էլ էին խոստացել փոխանակություն, ասել էին՝ անգամ եթե մերի դիակը գտնեք, փոխանակումը տեղի կունենա: Բայց հենց սահմանի վրա, փոխանակման պահին, հետեւից կրակեցին հայ տղայի մեջքին, ու ստացվեց դիակը՝ դիակով…

20.03.1994

❁

Մարտունու շրջմիլպետ Բորիս Եսայանը զանգեց, ասաց՝ Ադրբեջանի հեռուստատեսությամբ, «Գյունուն էկրանով», հերթական տեղեկատվության մեջ այսպիսի նախադասություն է հնչել. «Լեռնային Ղարաբաղը նեյնիմ-նեյնիմն է ընկել… արդեն միլիցիոներներին է առաջին գիծ քշել»: Ուրեմն՝ մեր տղաներից նրանց ձեռքն ընկնողներ են եղել…

Գետում խեղդվողը ծղոտից էլ է բռնում: Այդ զանգով էլ հույս առանք: Տեսնենք ինչ կլինի:

24.03.1994

❋

Ադրբեջանցիներ «Ֆանտոմասն» ու Մամեդը ռացիայով կապվել են միլիցիոներ Տողա էդիկի հետ, ասել՝ Գառնիկն ու Սպարտակն իրենց մոտ են, Սպարտակը՝ ծանր վիրավոր, փոխանակություն դասավորեցեք… Հույսը մեծ էր՝ ինչպես երբեք, բայց արդյունքում նորից ջուր մաղվեց գլխներիս. պարզվեց, որ Գորխման անունով ադրբեջանցի հրամանատարը, որ պիտի փոխանակվեր, մարտի ընթացքում նույնպես սպանվել է: Բախտներս չի բերում ու վերջ:

27.03.1994

❋

Մի քանի օր առաջ լսեցինք, որ թուրքերը հինգ ազատամարտիկի մարտադաշտում մորթել են: Երեքի դիակները գտնվեցին, երկուսինը՝ Աշոտ Հովհաննիսյանինն ու Գենադի Բազիյանինը՝ ոչ: Գենան մեր շենքից է, մեր մուտքից: Անցավ ժամանակ՝ երկուսն էլ վերադարձան գերությունից: Այնպիսի բաներ պատմեց Գենան, որ փշաքաղվեցինք: Թիկունքը մերկացրեց՝ շիկացած երկաթով դաջված խաչ տեսանք: Նա բավականին նման է Օգանովսկուն (հերոս հրամանատար Սամվել Կարապետյանին) եւ թուրքերը կարծել էին, թե նա է որ կա ու հատուկ դաժանությամբ կտտանքի ենթարկել:

Վա՜յ իմ բալա, դո՞ւ ինչ վիճակում ես:

6.04.1994

❋

Կարճատեւ գերությունից ազատվեց Ակնաղբյուրի եւ շրջակա գյուղերի տղաներից բաղկացած գումարտակի հրամանատար Արշո Ղարամյանը: Ասաց՝ այնտեղ տեսել է Լյովա Դադայանին, գլխից ծանր վիրավոր վիճակում: Որպեսզի ծնողները համոզված լինեն, որ իրենց տղան իրոք կենդանի է, ռազմագերին ասել էր՝ իրենց կասես, որ մենք Չիչի անունով հավ ունենք, որի հետ մայրս «զրուցում» է՝ ինչպես մարդու հետ, քույրս էլ աղջիկ երեխա է ունեցել, նրա Շարմաղ սկեսուրն էլ անբարիշտի մեկն է…

Երանի՜ թե մեկն էլ մե՛զ փոխանցի նման մանրամասներ:

9.04.1994

❋

Ի՜նչ լավ է. նույն Լյովային (Շահեն Մկրտչյանի քրոջ տղան է) շուտ ազատեցին:

Պատմեց, որ թուրք բժիշկը վիրահատել է գլուխը, բայց հետո ամբոխը, լսելով, որ հայի են բերել, թափվել է հիվանդանոց ու ձեռքն ընկած ամեն ինչով փորձել սպանել իրեն: Միլիցիոներները մի կերպ փախցրել՝ տարել են բանտ…

Իսկ թե բանտում ինչ տանջանքների են ենթարկել, ասելու բան չէ: Ոնկներս թուլացել էին, թոքերս՝ ասես կուչ եկած մնացել:

12.04.1994

❁

Գերությունում գտնվել է հետախույզների քաջահամբավ հրամանատար Սանյան: Այդպես էլ է լինում՝ խիզախների հետ էլ են պատահում նման դեպքեր:

Սանյայի անհայտ կորած օրվանից հայրը՝ Աշոտ Մարտիրոսյանը չի սափրվել, ու հիմա պատկառելի մորուք ունի: (Ասենք՝ Շուրայինն էլ պակասը չէ: Ռոբերտինն էլ՝ Վարուժանի եղբորը: Շատերինը: Ասում են՝ երբ տղաներին գտնենք, այն ժամանակ էլ կսափրվենք):

Տղան ահավոր ծանր վիճակում է գերի ընկել: Թուրքերը չէին էլ ուզում նրան ուղղաթիռ ընդունել, ասացին՝ ինչի՞ է պետք էս ջարդուխուրդ եղածը, մեկ է, շունչը փչելու է: Բայց գտնվեց ավելի հեռատես մեկն, ով ասաց՝ վերցրեք, հայերը դրա համար էլ «բնամթերք» կամ փափուկ փող կտան…

Սանյային թուրք էլդարի հետ փոխանակեցին: Փոխանակելուց առաջ թուրքերն ասել էին՝ հայը ոտքեր չունի, ու երբ տղային տեսանք քայլելիս, մտածեցինք՝ պրոթեզով է: Բայց ահա զրույցի մի պահի նկատեցի, որ նա… քորում է ոտքը: Հարցրի՝ այդ ի՞նչ ես անում, թե՝ ինչ է եղել, ոտքս եմ քորում: Հայրն ուրախությունից քիչ էր մնում խենթանար. ուրեմն՝ որդու ոտքերը տեղու՞մ են:

13.04.1994

❋

Չէի կարծում, թե այսօր երկրորդ անգամ կբացեմ օրագիրս…

Նինելի քեռորդի Արկադին, որը «Փոքրիկ» մականունն է կրում, մի քանի օր մեր տանն էր, ասաց՝ Ժդանովի կողմով թուրքերի հետ բանակցել ենք Սպարտակի հաշվով, շահագրգիռ թուրք կա, պիտի հետը խոսենք: Ասաց՝ ինքս ինձ խոսք եմ տվել, տյոտ Վերա, փեսայիս առաջինը ե՛ս եմ գտնելու:

Երեկ գնաց, իսկ այսօր ստացանք նրա զոհվելու լուրը:

Սրան դիմանա՞լ կլինի:

13.04.1994

❋

Առավոտյան կողմ երազ տեսա: Աչքս բաց արի թե չէ՝ ժամացույցի սլաքին նայեցի. ժամը 5-ն էր, եւ ամբողջ քաղաքով մեկ հնչում էր օդային տագնապի ազդանշանը:

Երազս. երեւաց Սպարտակն ու թե՝ շուտ, շուտ, բոլորդ դուրս եկեք տնից: Տեսնելով, որ տեղից չենք շարժվում, բարկացավ. ձե՞զ հետ չեմ, շուտ արեք… Երեք անգամ կրկնեց այդպես ու անտես եղավ:

Մերոնց արթնացրի: Մենք դեռ միջանցքում՝ շենքը դղրդաց… Նինելի ճչոցի վրա շրջվեցի ետ, տե-

սա կողքից ու ոտքից արյուն է ծորում: Նրան գրկած հասցրի փողոց, եւ այդ պահին մեկը թե՝ ժողովո՜ւրդ, Շուրայի մորուքով գլուխն ընկավ զարվարդենց շլորենու վրա: Ոտքերս թուլացան, աչքերս մթնեցին: Մոտ կանգնածներն ուշքի բերեցին ինձ էլ, Նինելին էլ, որին հետո վիրակապեց Փրկարար ծառայության բուժքույրը:

Պարզվեց ի՜նչ. սարիլանջցի Վագիֆը հեծանվով անցնելիս է եղել գարաժների մոտով, եւ ինքնաթիռի նետած ռումբի բեկորից թե պայթյունի ալիքից՝ գլուխը մարմնից անջատվել՝ թռել է ծառի վրա:

Տե՜ր, փրկեա մեզ ի չարեն:

14.04.1994

❁

Տանս եղած-չեղածը ջարդուփշուր է: Ձիանդամը, երեխա՛ս կենդանի լինի, մի բարի լուր ստանամ նրանից:

Հրա՜շք. երեք իր լիովին անվնաս են մնացել. Սպարտակի նկարը (էն որ վերջին անգամ դիրքերը գնալուց առաջ հրամանատարի՝ Արկադի Բուդաղյանի հետ է նկարվել), միլիցիոների համազգեստը եւ հարսանեկան օժիտում Նինելի բերած կոնյակի շիշը. սերվանտի գլխից ընկել է հատակին, բայց չի փշրվել: Երեք առարկա՝ երեքն էլ որդուս հետ

կապված… Գուցե Աստված դրանով ինչ-որ բան է հուշում ինձ, հույս է տալիս, որ երեխաս կենդանի է: Իմ վիճակում հայտնվածը ոչ միայն հավատացյալ կդառնա, այլեւ՝ սնահավատ:

15.04.1994

❁

Մեր տանն ապրել հնարավոր չէ, առաստաղին նայում ես՝ երկինքը երեւում է: Թուրքի երեսն էլ կտվի, ռումբի էլ: Դուռ ու պատուհան չի մնացել, սռնիներից թռել փշրվել են:

Ապրի Սպարտակի քենակալը, իրենց բնակարանը ժամանակավոր տվեց մեզ, ինքն ընտանիքով տեղափոխվեց Քոլատակ:

18.04.1994

❁

Ուրիշի օջախում ծվարած, նստել մտածում եմ՝ միտքս դեպի ետ շրջած:

…Հերթական անգամ դիրքերից տուն էր եկել տղաս, լողացել-մաքրվել, քնով անցել: Լույս չկար, բայց վառարանում թեժ ճթճթում էր կրակը: Հրետակոծությանն ուշադրություն չդարձնելով (վարժվել ենք), ես էլ կողքի ընկա՝ «աչքիս որդը կոտրելու»: Մեկ էլ արթնացա ուժեղ մգլահոտից: Աչքերս

բաց արի թե չէ, վառարանի գլխի «խարույկը» տեսա…Սպարտակի վերմակը տեղից սահել, ծայրը կպել էր վառարանին: Ո՞նց էր այրվում: Ճչոցիս վրա Շուրան էլ արթնացավ: Արագ հանգցրինք հրդեհի վերածվող կրակը: Վերմակի այրվող մասն իսկույն կոխեցի ջրի մեջ:

Վերմակը կարկատել եմ: Նոր երես-աստառ կառնեմ այն ժամանակ, երբ Սպարտակս եկած լինի…

22.04.1994

❋

Սպիտակեղենը տեղում դասավորելիս, չգիտեմ ինչու, ստորին արկղադարակն էլ բացեցի եւ ձեռքս կպավ «Սալամանդեր» մակնիշի նոր (դեռ չհագած) կոշիկներին:

…Սպարտակին էին տվել: ՆԳՆ-ից: Շտապ վերցրել եկել էր, տանը փորձեց՝ ոտքը սեղմում էր: Ասաց՝ մամ, կտանես Արտաշին տաս՝ փոխի:

Շոշեցի Արտաշը ՆԳՆ-ի տնտեսական բաժնի վարիչն էր:

Հետո մեր գլուխն այնպես խառնվեց՝ կոշկի մասին մտածողն ո՞վ էր: Այնպես որ, բավականին ուշ տարա: Արտաշը փոխեց, դեռ 10 կտոր էլ օճառ ու 10 տուփ «Աստրա» տվեց: Ասաց գիտի, որ Շուրան էլ է ծխում…Հետո ավելացրեց.

- Երկու օր առաջ երազումս տեսել եմ Սպարտակին: Իբր եկել էր, ու տղերքն ուրախությունից նրան ձեռքների վրա վեր-վեր էին թռցնում… Իմ երազները կատարվող են, գիտե՞ս, ինքս կենդանի կլինեմ, կտեսնեմ թե ոչ՝ բայց նա մի օր անպայման երեւալու է, կտեսնես… Որքան էլ ուշանա՝ հույսդ չկորցնես:

Աստված քեզ շա՜տ պահի, Արտաշ տղա: Դու ոտից գլուխ բարություն ես:

25.04.1995

❁

Վերջին մի քանի օրում մեր ու դիմացի շենքից 17 ազատամարտիկ զոհվեց: Նրանցից միայն 4-ն էին հասցրել ամուսնանալ: Աստված ինչպե՞ս է հանդուրժում նման ողբերգությունը: Ու թե մե՛նք ինչպե՞ս ենք դիմանում սրան: Խելագարվել կարելի է: Թեեւ իմ որդին էլ անհայտ կորած է եւ ո՜վ գիտի՝ ինչ վիճակում, մեկ է, դժվար է նայել զավակի անշունչ մարմնի վրա մազերը փետող մորը:

27.04.1994

❁

Այսօր, ժամը 3-ին մոտ, մեր բակում հայտնվեցին պետավտոտեսչության 9 ծառայողներ՝ տեսչության պետ Վլադիմիր Թարխանյանի գլխավորությամբ: Իսկույն հասկացա, որ մեր տուն են գալիս: Սիրտս թփրտաց տեղում… Ուրեմն՝ Սպարտակից ինչ-որ լուր են ստացել…

Եկել էին խնջույքի համար անհրաժեշտ ամեն ինչով, ու դա էլ պատճառ եղավ, որ աչքներս չկտրենք Վոլոդյայից…

Իսկ նա շփոթված ասաց.

- Գիտեմ, ինչ անցավ մտքներովդ, բայց… կներեք, պարզապես եկել ենք նախօրոք շնորհավորելու ձեր Հաղթանակի տոնը: Մայիսի 9-ին տեղի է ունենալու առաջին շքահանդեսը, դե, մենք էլ մտածեցինք՝ բոլորս այնտեղ ենք լինելու, Սպարտակը՝ ոչ, գնանք ծնողներին տեսնենք, կրծքանշանն էլ փոխենք, ահա, տեսեք, սա նորն է՝ հայկականը…

Շուրան էլ թե՝ եկեք պայմանավորվենք, որ դա կանենք, երբ Սպարտակը վերադարձած կլինի, թող ինքն իր ձեռքով դա անի…

Նստեցինք, կենացներ խմեցինք: Նրանք մեզ հուսադրում էին: Շատ հուզվեցինք տղաների շնորքից եւ ուշադիր վերաբերմունքից:

3.05.1995

❁

Այս հարցը չպիտի լիներ, բայց դե տալիս եմ. ինչո՞ւ ես մեր ուզածի հակառակն անում, Տեր աստված: Չորս ժամ առաջ կոտրված սրտով (իբր մինչ էդ կոտրված չէ՞ր) տուն եկա ու հիմա, երբ այս տողերն եմ գրում, ձեռքս իսկականից դողում է: Ակնաղբյուրցի Ժորիկ Ղարամյանի և Սպարտակի քենակալ Վլադիմիր Ավանեսյանի հետ, որոնք նույնպես պետավտոտեսչությունում էին ծառայում, ես ու Շուրան գնացել էինք հերթական բանակցության ու հերթական անգամ ձեռնունայն վերադառնում էինք, երբ հենց ճանապարհին լսեցինք, որ ՆԳՆ-ի Արտաշը… մահացու վթարի է ենթարկվել: Մեքենայի գլուխն իսկույն շրջեցինք Շոշի կողմը:

Հասանք այն պահին, երբ Արմեն Իսագուլովը, գերեզմանափոսի պռնկին դրված դագաղի վրա կռացած, արտասուքն աչքերին՝ հրաժեշտ էր տալիս Արտաշին:

Բա չասե՞մ՝ ինչո՞ւ ես լավ մարդկանց շուտ տանում քեզ մոտ:

5.05.1995

❁

Չէ՜, սա արդեն ոչ թե ողբերգություն՝ այլ գե՛րողբերգություն է: Եվ ինչպե՞ս դրան դիմանա ծնողի սիրտը:

…Բերդաձորցի մտավորական՝ դպրոցի տնօրեն Սերգեյ Դավթյանի Սասուն որդին էլ է մարտում անհայտ կորել: Եվ ահա Ալիբալիի կողմերից Մամեդ անունով բանակցող մի թուրք հեռակապով մերոնց ապսպրեց հայտնել, որ տղան կենդանի է, եւ հայրը կարող է պայմանավորված ժամին ռացիայով խոսել որդու հետ: Նրանք իրոք խոսեցին միմյանց հետ, հայրը ճանաչեց որդու ձայնը: Սասունն ասաց, որ ոտքի մեկը ծնկից ցած վիրավորված է: Հայրը որդուն խոստացավ գերությունից ազատել: Խոստացավ, բայց չկարողացավ: Գորխման անունով գերի թուրք սպային հնարավոր չեղավ փոխանակել Սասունի հետ…

Ժամանակ անց հայտնի դարձավ, որ մարզային հիվանդանոցի դիարան է բերվել ութ ազատամարտիկի դիակ, եւ ոնց որ թե նրանցից մեկը Սասունը լինի…Հայրը գնաց «ճանաչման»: Տղաների մարմիններն ահավոր կերպով այրված էին, դեմքերն՝ անճանաչելի: Սերգեյի սիրտը չդիմացավ, նա ուշագնաց եղավ: Աճյունով դագաղը հասցրեց Բերդաձոր, բայց անորոշությանը չդիմանալով՝ գիշերը բացեց այն, ստուգեց դիակի… ատամնաշարը:

Բանն այն էր, որ ժամանակին Սասունի վերին ատամնաշարից չորս ատամ հանել էին: Իսկ այ դիակի ատամները լրիվ տեղում էին…Ցնցված հայրն այդ մասին հայտնեց ուր եւ ում պետք է, եւ այնտեղից խոստացան շարունակել անհայտ կորածի որոնումները:

Այս պատերազմը սանձազերծած Ադրբեջանը ե՞րբ ու ինչպե՞ս է պատասխան տալու արցախյան գողգոթայի համար:

12.05.1994

❁

Վերջապե՜ս…Թուրքը հանձն առավ իր պարտությունը: Ափսոս միայն, որ կնքվողը հրադադար է, ոչ թե հաշտության պայմանագիր: Փխրուն մի խաղաղության տեր ենք դառնում, բայց ոչինչ, ագրեսորն արդեն ճաշակեց հայի բազկի ուժն ու ծանոթացավ նրա մտքի եւ ոգու ներուժին: Հասկացավ, որ հայը կարող է այսպես կոչված՝ ադրբեջանական ֆակտորի դեմ դնել իր՝ «հայկական գործոնը» եւ ստիպել. որ նա հրադադար խնդրի…

Ի՜նչ երջանկություն. այլեւս զոհ չենք ունենա: Մնում է, որ մեր տղաներին էլ ազատենք ադրբեջանական բանտերից… Այդ ժամանակ միայն կարելի է հանգիստ շունչ քաշել:

15.05.1994

❁

Տղաների հարցով ՆԳՆ հաճախելով՝ ինձ նման շատերի (բախտակիցների) հետ եմ ծանոթացել: Տառապում ենք նույն ցավով, անհանգստանում նույն խնդրով, եւ դա արագ մտերմացրել է մեզ: Հիշում եմ, թե օրերից մի օր ուշադրություն ինչով գրավեց կանանցից մեկը, որի անունը, պարզվեց, Անտիկ է: Նա մյուսներից մի կողմ քաշված՝ հա՜ ետ ու առաջ էր քայլում՝ մրմնջալով. «Մադար գյուդարս…մադար գյուդարս»: Անվերջ-անդադար: Հասկանալ նրան դժվար չէր. իմ մանչ զավակն էլ է մեկը…

Չէ, այսպես ո՞նց կլինի: Մի բան մտածել է պետք: Պատերազմը նոր է ավարտվել, գուցե ադրբեջանական կողմը խելքի կգա եւ ազատ արձակի ռազմագերիներին: Ի վերջո, ամեն պատերազմից հետո էլ այդպես են վարվում կողմերը: Տեր Աստված, իրոք խելքի բեր նրանց, մեղք ենք:

4.08.1994

Վաղ առավոտյան մեր տուն զանգեց մի տղա ու ներկայանալով մականվամբ՝ ՑՈՐ-ի Ավազակ, հայտնեց, որ գնացած է եղել բանակցությունների, ու երեք սադախլվեցիներ՝ Զամալ, Քյամալ, Սաֆար, տվել են ստեփանակերտցի Սպարտակ Գրիգորյանի անունը… Նրանք Ավազակին հայտնել են նույն տեղեկությունները, ինչ ժամանակին ինձ՝ Աբրիկը:

- Զամալն ասաց՝ Սպարտակին Բայիլից տարել են Շուվելյան ու նորից ետ բերել, Ադրբեջանի ՆԳ նախարար Ռամիլ Ուսուբովի «ձեռքի տակ» է,- հեռախոսով պատմում էր Ավազակը (իսկական անունը՝ Բորիկ), որն անհայտ կորած ստեփանակերտցի Բենիկ Այվազյանի եղբայրն է:

Ուրեմն՝ դեպի Մեծ Այրում, որպեսզի այնտեղից էլ՝ Սադախլո…

Իմ ու Շուրայի ուսերին ասես թեւեր բուսած լինեն: Ի՜նչ հրաշալի բան է հույսը:

6.06.1995

❋

Մեծ Այրումում եմ: Մի աննման կին է ինձ «տիրություն անում»՝ Պայծառը: Մեծ Այրումի գյուղապետն է: Նրա նմանների մասին է ասված «տղամարդ-կին»:

Սպարտակի հաշվով առանձնապես շոշափելի արդյունքի չենք հասնում, բայց ղարաբաղցի մի ուրիշ տղայի մասին եմ հստակ տեղեկություն ստանում՝ Նելսոն Մնացականյանի: Բանակցություններին հետ կապ չունեցող մի թուրք է մոտենում ինձ Սադախլոյում եւ ասում՝ եթե խնդրեմ, չանախչեցի «դոխտուր ժամիկին» կհայտնե՞ք, որ իր Նելսոն տղան ինձ մոտ է: Եթե ուզում է ստանալ նրան, կտամ, բայց ոչ փոխանակությամբ՝ փողո՛վ…

Վերադարձել եմ, լուրը տեղ հասցրել, բայց ինձ թվաց, թե նրանք չհավատացին:

12.06.1995

❋

Պրիմակովը եկավ Ստեփանակերտ: Եկավ ու 78 թուրք ռազմագերու տարավ իր հետ՝ հարազատներին հանձնելու: Եկել էր բարի եւ աննախադեպ նախաձեռնությամբ՝ «Բոլորը՝ բոլորի հետ» կարգախոսով փոխանակության համար, կասկածում եմ, սակայն, թե հակառակորդ կողմը նույնքան ազնիվ կգտնվի եւ իրոք հանձնի բոլոր հայ գերյալներին՝ ինչպես դա արեցին մենք:

21.03.1996

❋

Տեղին էլ կասկածում էի: Մերոնց վերադարձրին նախ բավականին ուշ, հետո էլ՝ մաս-մաս. ապրիլի 16-ին՝ 16 հոգու, 17-ին՝14 հոգու, այսօր՝ ապրիլի 18-ին էլ՝ 13 հոգու: Ընդամենը՝ 43: Ու վե՞րջ: 78-ն ու՞ր՝ 43-ն ուր: Մեր 239 ռազմագերիներից միայն այդքանի՞ն: Էլ ի՞նչ «բոլորը՝ բոլորով»: Թուրքն այդ-պիսին եղել է, այդպիսին էլ կմնա՝ խարդախ ու խոր-ամանկ: Բայց ռուսնե՞րը: Մինչեւ ե՞րբ են նրանք ականջ կախելու թուրքական կեղծիքի առջեւ:

18.04.1996

❋

Էլի՞: Այս ի՞նչ է կատարվում…Հիմա էլ Արզու Աբ-դուլլաեւան եկավ Ստեփանակերտ ու հասավ հայ-կական կողմից թուրք գերյալի միակողմանի հանձնման: Սա ի՞նչ բազար է… Ինչո՞ւ մեր տղա-ներին ազատող չկա: Երանի՞ այն տղայի մորը, որին տարավ այդ Արզուն: Պայթում եմ, ուղղակի պայթում: Ինչքան ասում եմ լաց չլինեմ, չի ստաց-վում: Ես չե՞մ ասում՝ թուրքին ետ չտան, բայց թող մեր կո՛ղմն էլ հասնի նրան, որ գլխի դիմաց գլուխ վերադարձնեն: Թեկուզ դիակը տան՝ բայց տան: Այսպես ո՞նց կլինի՝ մենք հա մարդասիրություն անենք, իրենք մնան նույն չկամը:

4.11.1996

Ինգան մի քանի օրից պիտի ամուսնանա: Օժիտային պայուսակի համար ես ու Նինելը այսօր պտտվեցինք խանութներով՝ հարմարը չգտանք, գնացինք շուկա: Այնտեղ մեկը մատնացույց արեց մի կնոջ, ասաց՝ Սադախլոյից ապրանք է բերում, հարցրեք, անունը Ռիտա է: Ռիտան անբարեհամբույր տոնով կարճ կտրեց՝ չունեմ: Ասացի՝ ցավդ տանեմ, անհայտ կորած տղայի քրոջ հարսանիք է, օժիտի համար եմ ուզում, գուցե կարողանաս ճարել… Միանգամից փոխվեց, «խեղճացավ», ասաց՝ ես էլ եմ անհայտ կորած ունեցել ու լավ եմ հասկանում ձեզ, աստված տա՝ դուք էլ գտնեք ձերին, թեեւ… Թեեւ ինչ՝ չբացատրեց, բայց երբ գնացինք իրենց տուն ու տեսանք գտնված աղջկան՝ Ալբինային, հասկացանք ամեն ինչ:

Աղջիկը, որ այն ժամանակ՝ 1990 թվականին, ավելի շուտ աղջնակ էր, կորել էր Բաքվի հայկական ջարդերից մոր հետ փախչելու (Ղարաբաղ գալու) ճանապարհին. պահ որսալով՝ թուրքերը նրան առեւանգեցին: Ռիտան 7 տարի շարունակ աղի արցունք էր թափում դստրիկի համար, Ռուսաստանում ապրող եղբայրներին աղաչում գտնել նրան. «Գոնե դիա՞կը… Վրան լաց լինեմ՝ թաղեմ»: Բարեբախտաբար, դիակի փոխարեն գտնվեց կենդանի Ալբինան:

Աղջիկը դժվարանում էր խոսել հայերեն: Ոչ գոյականներն էր հոլովում, ոչ բայերը՝ խոնարհում… Բայց մեկ է, մայրը, բնականաբար, երջանիկ էր, որ գտել է նրան:

Թող այդպես, թող ավելի՛ վատ վիճակում՝ բայց ես էլ իմ զավակի՜ն գտնեմ: Համաձայն եմ: Երազում եմ: Տառապում եմ: Կարոտում եմ:

2.03.1997

❋

Երեք օր առաջ աղջիկս ամուսնացավ: Առանց հարսանիքի: Ինչպե՜ս էի երազում նրան մեծ շուքով հանել տնից: Սրտինս սրտումս մնաց:

10.03.1997

❋

Հենց նոր զանգեց Ինգաս: Ասաց՝ երազում եղբորն է տեսել, թութ էր մեկնում իրեն՝ ինքն էլ ուտում էր:

Հարեւանիս պատմեցի (երազներից հասկանում է), ասաց՝ եթե նորահարսն է երազում թութ ուտում, ուրեմն՝ հղիացել է:

Մի՞թե իրոք թոռնիկ եմ ունենալու: Մեր հակին կաց, Տեր Աստված, Սպարտակիս էլ որ տուն բերես, քո հավիտենական ծառան եմ:

8.04.1997

❁

Պատրաստվում եմ Մոսկվա գնալ, այնտեղից էլ՝ Նովոսիբիրսկ: Թուրքի հետ բանակցության: Միջնորդի անունը Դոխլան է, իսկ նրանն, ով պետք է կոնկրետ զբաղվի Սպարտակին փոխանակելու գործով՝ Ֆազիլ:

Գիշերը երազ տեսա՝ ընկել էի հողե խոր ու հսկայական ծագարի մեջ՝ ելնել չէր լինում: Հանկարծ հայտնվեց մի մոտոցիկլիստ եւ ինչպես կրկեսում է լինում՝ ինձ վերցրեց ու մեքենան պատերով շուրջանակի վարելով՝ հանեց փոսից: Գուցե դա նշան է, որ այս անգամ հասնելու եմ նպատակիս…

24.04.1997

❁

Այս մի գրառումը շատ ընդարձակ է լինելու, բայց ուրիշ ճար չկա: Այնքան շատ բան կա կուտակված հոգուս մեջ՝ կապված այս վերջին ուղեւորության հետ, որ եթե թղթին չհանձնեմ, կտրաքվեմ ներսից: Բաներ կան՝ անգամ Շուրային չեմ ուզում պատմել՝ հոգին ավելորդ տեղը չքրքրելու համար: Այդպիսի դեպքերում փրկիչս դառնում են թուղթն ու գրիչը:

…Ապրիլի 25-ին արդեն Երեւանում էի եւ պետք է նստեի օդանավ, բայց ձեռքիս եղած որոշ իրերի

պատճառով քարուկապի դեմ առավ թռչելս: Թույլ տալու համար ստվերային 100 դոլար պահանջեցին ինձնից: Եվ դա այն բանից հետո, երբ բացատրել էի, թե ուր եմ գնալու եւ ինչու… Մի կերպ, սրան-նրան խնդրելով հանգանակած գումար կար մոտս, որին ձեռք տալ չէի կարող. դա թուրքական կողմի պահանջած փրկագինն էր… Կարճ ասած, մեկ ուրիշ՝ աղջիկ ուղեւորի հետ Թբիլիսի տանող տաքսի նստեցի: Հայ-վրացական սահմանի մոտ տաքսիստները, երկուստեք ճաանապարհը կրճատած լինելու համար, փոխանակում են ուղեւորներին: Տեղափոխվեցինք մի մեքենա, որի «վրացի» տաքսավարը ադրբեջանցի դուրս եկավ: Ոտքերս դողում էին նստած տեղումս: Հարցրեց՝ ինչո՞ւ եմ Մոսկվա գնում, ասացի՝ ճակատագրական հիվանդ եմ, ոչ-ոք չունեմ, վիրահատվելու եմ գնում: Հավատաց թե ոչ՝ չգիտեմ: Օդանավակայանում չկարողացա անցնել ստուգման կետով. հետս ահագին ոսկի էլ կար: Ստիպված էի տաքսիստին խոստովանել իրողությունը: 15 գրամանոց ոսկե մի մատանի մեկնեցի նրան ու խնդրեցի օգնել: Ձեռքս ետ հրեց՝ ասելով՝ էդ կարգի դարդի հետեւից ես գնում, այ բաջի, բա ալլահը ինձ չի՞ պատժի, մա՞րդ չե՞մ, հիմա էլ հո կռիվ չէ… Կօգնեմ, արխային կաց: Եվ իրոք օգնեց:

Չիմացա էլ ինչպես Մոսկվայից Նովոսիբիրսկ հասա: Մինչեւ լուսանալը դեռ մի քանի ժամ կար:

Օգնեցի հավաքարար պառավին, ինձ խղճաց, իր տուն տարավ: Ձեռքիս եղած համարով զանգեցի Դոխլանին՝ իմանա, որ արդեն տեղում եմ, ասաց՝ ուշացել ես, Ֆազիլը 2 օր սպասելուց հետո մեկնել է Նովոսիբիրսկից, գնացեք Պերեսլավլ, այնտեղ կհանդիպեք:

Նորից Մոսկվա: Որտե՞ղ է այդ Պերեսլավլը: Մոսկվան մե՜ծ, ես՝ Թումանյանի Գիքորը…Գիշերն անցկացրի կիսակառույց շենքի մոտ ընկած, հսկա տրամագծով մի խողովակի մեջ: «Ապահովության համար» երկտող էի գրել, որ ստեփանակերտցի այսինչ-այնինչն եմ եւ այստեղ եմ հայտնվել անհայտ կորած ռազմագերի որդուս՝ Սպարտակ Գրիգորյանին որոնելու համար: Որպեսզի եթե տեղում, ով գիտի, ինձ հետ հանկարծ որեւէ բան պատահի (չորս կողմը բոմժերով լիքն էր), ոստիկանությունն իմանա ուր հայտնել:

Քայլում եմ: Կանանց խումբ: Ծիծաղ, բացականչություն. «Վա՜յ մամա ջան, իսկական խոխմա»: Հայերեն: Մոտենում եմ. «Ես Ղարաբաղից եմ…»: Չեն զարմանում, նույնիսկ կարծես թե առանց բացատրության հասկանում են ինձ: «Այստեղից ոչ հեռու, Կետչեւսկայա փողոցի բարձրահարկ շենքում, ղարաբաղցի մի ընտանիք կա՝ Ստեփանյան Մարտին եւ Իննա: Լավ մարդիկ են, կօգնեն ձեզ»: Զանգեցին այդ Իննային: Երբ շենքի մոտ հասա, նա արդեն ցածում սպասում էր ինձ:

Ոչ թե լավ, այլ ուղղակի հրաշալի մարդիկ են: Այնպես ջերմ դիմավորեցին ինձ եւ այնպե՜ս են հոգ տանում իմ մասին: Համարյա նորածին երեխա ունեն: Մեկ սենյականոց բնակարան է, մի ընդարձակ, մահճակալ: Մարտինն իջել՝ հատակին է քնում, ես՝ Իննայի հետ: Որքան դիմադրեցի՝ բան չստացվեց: Ուզում էի որպես երախտագիտության նշան ոսկե շղթա նվիրել Իննային, վիրավորվեցին: Չէ՜, իրոք աննման մարդիկ են: Աստված նրանց սերն ու համերաշխությունը բազմապատկի, ունեցածի մեկն էլ հազար անի:

Բա ասում են՝ հրաշք չի լինում… Մարտինի մայրը զանգեց Ղարաբաղից, թե՝ «մեր գառնաքարցի՝ քո էլ ընկեր Ռաֆիկի զոքանչ Վերան կորել է: Իր անհայտ կորած զինվոր տղայի հաշվով Մոսկվա պիտի եկած լինի, բայց արդեն քանի՜ օր է՝ լուր չկա նրանից: Նեղված հարազատները չգիտեն ինչ անել, չե՞ս կարող էդտեղ որեւէ բան պարզել»: Հրաշք չէ, բա ի՞նչ է: Ախր ո՜վ կարող է պատկերացնել նման զուգադիպություն: Երեւի այս աշխարհում պատահական ոչինչ չի լինում: Մարտինն ինձ ճանապարհում է Յարոսլավլ, որտեղից էլ ավտոբուսով պիտի գնամ Պերեսլավլ:

…Դոխլանն ասել է Ֆազիլի հասցեն, մտապահելն էլ հեշտ է. Մենդելեեւի 7, բնակարան 7: Ինձ ընդունում են նորմալ: Ի վերջո՝ փրկագնի հարց էլ կա…Երեք եղբորով տեղի օղու գործարանում են.

Յուրան՝ տնօրեն, Նազիմը՝ փոխտնօրեն, Ֆազիլն էլ արտադրամասի պետ: Կին ու երեք երեխա ունի Ֆազիլը: Երեք անգամ միջքաղաքային հեռախոսակապով կապվում է Բաքվում «խնդրով» զբաղվող անձանց հետ: Այնտեղից ասում են՝ Ղարաբաղից Սպարտակ անունով երկու գերի զինվոր կա բանտում, մեկը Մարտակերտի շրջանից է, մյուսը՝ Ասկերանի: Ասկերանցու ազգանունը Գրիգորյան է: Նրանք պայմանավորվում են, որ Ֆազիլը վաղը կմեկնի Բաքու՝ Սպարտակին տեսնելու եւ փրկագնի ու վերադարձի պահով վերջնականորեն պայմանավորվելու: Ես գնալ-գալու համար նրան 600 դոլար եմ տալիս, ինչպես նաեւ ստուգիչ երեք հարց, որպեսզի Բաքվում տա Սպարտակին ու պատասխանը բերի…

Հաջորդ օրը գնացի նրանց տուն՝ իմանալու՝ արդեն հասե՞լ է Բաքու, զանգե՞լ է այնտեղից, բա՞ն է հայտնել թե՞ ոչ…ու հանդիպեցի տիկնոջ մռայլ հայացքին: «Արի ներս գնանք, կասեմ»,- կարճ ասաց նա՝ վախ ներարկելով ինձ: Ներս մտա՝ ի՜նչ տեսնեմ. Ֆազիլի դեմքին սաղ տեղ չկա՝ այտուցներ են ու կապտուկներ…Ինչ-որ անձինք նրան ծեծջարդ են արել, սպառնացել՝ թե ուզում ես գլուխդ ուսերիդ մնա, ձեռք քաշիր այդ գործից: Նա ինձ ետ տվեց փողս… Վա՜յ իմ սեւ բախտ:

Ո՜ւր գնամ, գլուխս ո՜ր քարին տամ: Ֆաստով քաղաքը մոտիկ է, Կիեւի մարզում, տալս՝ Նորան,

այնտեղ, գնամ ֆաստով:

Տալոջս ամուսինը՝ Պյոտր Իսաեւիչ Կարապետյանը բժիշկ է, հարգված մարդ: Մոտ մի ամիս մնում եմ նրանց տանը, մտածում ենք է՛լ ինչ անել, ո՞ւմ դիմել՝ ինձ օգնելու: Մի օր էլ նա ասում է՝ Սերժ Ջիլավյանի մասին լսած կա՞ս, նա հիմա այստեղ է, գո՞ւցե գնանք մոտը: Ջիլավյանի առաջարկից քիչ է մնում խելքս կորցնեմ, ասում է՝ կարող է օդանավ վարձել եւ ինձնով հնդկացորեն ու շաքարավազ ուղարկել Ղարաբաղ… Ես ինչի՞ համար եմ հազարավոր կիլոմետրեր կտրել, սար ու ձոր ընկել, ինքն ինչի մասին է խոսում: Պյոտր Իսաեւիչը փորձում է հանգստացնել ինձ. “Успокойся, Вера джан, он же не хотел обидеть тебя! Просто предложил то, что в силах делать”. Ինձ մի կերպ հավաքում, հնարավորինս հանգիստ ասում եմ՝ ես ի վիճակի չեմ անել դա, իմ խնդիրն ուրիշ է, պիտի փորձեմ Բաքվի հետ կապվելու նոր ուղի, նոր կապեր փնտրել:

Հիմա, երբ տանն եմ եւ գրում եմ այս տողերը, ինքս էլ եմ դժվարանում հավատալ, որ կարողացա նման ռիսկի դիմել: Թեեւ…եթե պետք լինի ավելի եւս մեծ ռիսկի դիմելու, գիտեմ՝ կդիմեմ, մինչեւ աշխարհի ծայրն էլ կգնամ՝ միայն թե գտնեմ, տուն բերեմ որդուս:

20.07.1997

❁

Բախտակիցներիս մեր տուն գալն եմ հիշել ու նորից ձեռքս առել գրիչը: Եկել էին «ինձ տեսնելու»: Նրանց հայացքներում հույս կա ծվարած: Գիտեմ՝ ինչ են մտածում. եթե Վերային հաջողվել է անգամ կես քայլ առաջ գնալ որդուն գտնելու հարցում, ուրեմն՝ իրենց էլ կժպտա բախտը… Տառապյալնե՛րս, սիրելիներս, ես ձեզ ի՞նչ ասեմ, ինչպե՛ս ասեմ, որ չհիասթափեցնեմ ձեզ, ախր չի կայացել այդ քայլը, չար մարդիկ խանգարել են: Ինչպե՞ս խոսեմ, որ չկորցնեք ձեր հավատը, ախր դա է մեզ պահում ոտքի վրա: Հավատն առ այն, թե մի օր, այնուամենայնիվ, կտեսնենք մեր զավակներին: Ժենյա Մայիլյանը, Արփեն Մեհրաբյանը, Կարո Սարգսյանը, Լարիսա Սաֆարյանը, Գերասիմ Բաղդասարյանը… աչք ու ականջ լարած՝ ինձ են սպասում, իսկ ես չեմ կարողանում բացել բերանս: Արցունքները խեղդում են ինձ, սիբիրա-ուկրաինական հեռուներում անցկացրածս ահավոր օրերն եմ հիշում, եւ ետին թվով այնպե՛ս խղճում ինձ: Ես հո քարից չե՛մ, ինչքա՛ն կարելի է համբերել, դիմանալ: Ի վերջո մի կերպ հաղթահարում ինձ՝ սկսում եմ պատմել ոդիսականս… Հրաժեշտին նրանք ինձ են սիրտ տալիս, ես՝ նրանց. ուրիշ ճար չկա, պետք է նորից համբերենք ու տոկանք: Համ էլ այսպես չի լինի, այսպես բանի չենք հասնի, հարկավոր է կազ-

մակերպություն ստեղծել՝ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն, որպեսզի իրոք կազմակերպված զբաղվենք մեր ցավ ու խնդրով: Թե չէ սա ի՞նչ է, հավաքվելու տեղ էլ չունենք, որ քննարկենք, կանոնակարգենք մեր հարցերը: Թվում է՝ վատ գաղափար չէ…

21.07.1997

❁

Այսօր իսկ հետամուտ եղանք գործին: Ավելի ճիշտ՝ կոլեկտիվ մտահղացումը գործի վերածելուն: Հարցը պաշտոնական հարթություն տեղափոխելու առիթ կար. Սպայի տանը հանդիպում էր կազմակերպվված նոր քաղաքապետ ընտրված Կարեն Բաբայանի հետ, որը մինչ այդ ՆԳՆ նախարար է եղել: Էլ ո՞ւմ՝ եթե ոչ հենց նրա հետ արժե քննարկել նման հարցը: Փառք աստծո, նա հավանություն է տալիս, եւ որոշվում է, որ մեզ երկու սենյակ կհատկացվի հեռուստառադիոյի… ավերված մասնաշենքում: Ավերված է թող ավերված լինի, ընդհանուր ուժերով կարգի կգցենք, բա ձեռքերն ինչի՞ համար են:

22.07.1997

❁

Երկու համաժողով արեցինք՝ քննարկելով ապագա կազմակերպության կառուցվածքը, գործունեության նպատակները եւ ուղղությունները, վերջապես՝ կարգավիճակն ու կանոնադրությունը:

Հիմնադիր համագումար է պետք հրավիրել:

10.08.1997

❁

Շոգ օգոստոս է: Բան-ման եմ առել, պահածոյացնում էի, եկան բախտակիցներս ու թե՝ հայդա, գնում ենք համագումարը նախապատրաստելու, միության նախագահ էլ որոշել ենք ընտրել քեզ: Շփոթվեցի: Ախր դա ռիսկի հարց է, կկարողանա՞մ, արդյոք, գլխավորել մի ամբողջ կազմակերպություն: Կարող ես, կարող ես, մեր միջի ամենահամարձակն էլ, գործունյան էլ, պարզ երեւում է, դու ես, այնպես որ քննարկելու խնդիր չկա, պատրաստվիր...

15.08.1997

❁

Չեմ էլ հավատում, թե ամեն ինչ արդեն հետեւում է մնացել: Ինչ դժվար բան է այդ համագումար կոչ-վածը: Այսօր այն հավաստեց Արցախում եւս մի հասարակական կազմակերպության ծննդի մա-սին՝ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության: Ժամանակն է արդեն լի-ովին լծվել կազմակերպության գրասենյակի վե-րանորոգմանը…

17.08.1997

❁

Այսօր մեզ հանձնվեցին արդարադատության նախարարության հաստատած՝ ԱԿԱՀՄ վկայա-կանն ու կանոնադրությունը: Այսօր գրվեց վարչու-թյան անդամների կազմը հաստատող մեր առաջին հրամանը: Տեր Աստված, որքա՜ն շատ բան կա անելու: Գլո՞ւխ կհանեմ:

10.10.1998

❁

Համարյա մի տարի կլինի՝ տետրս չեմ բացել: Կանոնավոր գրել չի ստացվում: Ոչ ժամանակն է հերիքում, ոչ էլ շատ դեպքերում տրամադրությու-նը: Վազվզուքը մի կողմ, բայց երբ նախագծած

արդյունքին չես հասնում, եղածը հազիվ մոտենալն է, չարանում ես աշխարհի վրա էլ, քո վրա էլ: Պարզվում է, կազմակերպություն վարելն այնքան էլ հեշտ բան չէ: Միությանն անդամագրված արդեն հարյուրավոր ընտանիքներ ունենք, ամեն մեկն իր պահանջն է դնում… Բոլորի հետ նույն լեզվով ես խոսում՝ քեզ չեն հասկանում, վիրավորվում են, կեղծ խոստումներ տալն էլ անիմաստ է: Ախր կան բաներ, որ ոչ միայն ինձնից են կախված, ավելի շուտ՝ ինձնից չէ, որ կախված են: Կարճ ասած՝ «մեջիցս ճղվում»՝ երկու կտոր եմ լինում «վերեւի» ու «ներքեւի» միջեւ:

Բայց ասեմ, թե ձեռքս գործ չի բռնում՝ չէ՞, ընդհակառակը՝ ձվադրման գնացող ձկան պես լողակներս քարին տալով՝ գնում եմ հոսանքն ի վեր… Պարտականությունը բախտակիցներիդ պնդմամբ ստանձնել ես, ուրեմն բարի եղիր դիմանալ, հասնել արդյունքի՝ համոզում եմ ինձ: Եվ կհասնեմ: Գուցե ոչ ակնկալածի չափ, բայց կհասնեմ: Շուրան երբ մեկ-մեկ ինձ տեսնում է, չեմ թաքցնի, բարոյա-ֆիզիկապես հոգնած վիճակում, ասում է՝ գուցե իզուր գլուխդ էդ ծանրության տակ դրիր, բայց մեկ էլ ավելացնում՝ չէ, դու ուժեղ ես, կդիմանաս, ես էլ քեզ կօգնեմ ձեռքիցս եկածով: Իսկ նրա ձեռքով շատ բան է գալիս, տասից ավել արհեստի է տիրապետում: Մեզ տրված խարաբախանա սենյակներն այնպես ենք կարգի բերել, վերանորոգել,

որ տեսնողը զարմանում է: Չէ, բախտս բերել է, որ Շուրայի նման ամուսին ունեմ: Քոռանամ, Սպարատակս էլ է հոր նման, ինքնաշեն զենքեր էր պատրաստում՝ քեֆդ գար: Տեր Աստված, այս ինչ եմ ասում, զենքից քեֆ գալը ո՞րն է, ախր զենքը մահվան գործիք է: Մեղավորը թուրքն է, նա՛ մեզ ստիպեց «սիրել» զենքը…

24.10.1998

❋

ԱԿԱՀՄ մասին առաջին հեռուստահաղորդումը… Որպես նոր կազմակերպության ներկայացուցիչների՝ իմ ու վարչության անդամների հետ հարցազրույց անցկացրեց հեռուստալրագրող Նարինե Աղաբալյանը: Խելոք ու շնորհքով աղջիկ է, մեզ լավ է հասկանում: Ամուսինն՝ էդմոնը, պատերազմում զոհվել է… Շատ ափսոս:

29.10.1998

❋

Բախտակիցներով, նորաստեղծ կազմակերպության վարչության անդամներով հավաքվել էինք մեր տանը՝ մի գավաթ սուրճ վայելելու եւ մտածելու, նախագծելու, թե ինչից պիտի սկսենք գործը:

Առանց այն էլ մեր հոգիները տակնուվրա էին, կազմակերպության ղեկավարի դերն ինձ վստահելն էլ մի կողմից էր լարված հոգեվիճակի մեջ դրել ինձ… Ինչեւէ: Մատուցեցի սուրճի գավաթիկները: Նրանք խոսում էին՝ սովորականից շատ դանդաղ (մտածեցի՝ երեւի հաճույքը երկարաձգելու համար) օգտվելով տոնուսը բարձրացնող հաճելի ըմպելիքից: Ինքս դեռ ձեռք չէի տվել գավաթիկիս: Երբ վերջապես ինքս էլ տեղավորվեցի սեղանի շուրջ ու համտեսեցի սուրճը, «աչքերս ճակատս թռան»: Այն ահավոր…աղի էր: Հասկացա, որ շաքարավազի փոխարեն աղ եմ լցրել սրճեփի մեջ: Ընկերուհիներիս հարցրի՝ ձե՞րն էլ է այսպիսին: Ցիծաղեցին՝ գլխով հաստատական նշան անելով: Բարկացա՝ բա ինչո՞ւ ձայն չեք հանում: Ասացին՝ ի՞նչ է լինելու որ… թող մի անգամ էլ այսպես խմենք: Ինչ է, չե՞նք հասկանում, թե հիմա ինչ է կատարվում քեզ հետ… Ով էլ լինի, կհուզվի, կորցնի իրեն: Մի՛ մտածիր, ամեն ինչ լավ է լինելու, սարի պես կանգնած ենք թիկունքիդ, դու միայն ասա՝ ինչ անենք…

Խելք-խելքի տալով՝ կազմեցինք մեր առաջին աշխատանքային պլանը:

21.11.1998

❁

Նորից Սադախլոյում էի: Նորից՝ Սպարտակի հետ կապվելու համար «կանալ» փնտրելիս: Եվ նորից՝ ապարդյուն ջանքեր: Բայց փոխարենը մեկ ուրիշի համար նորից ուրախալի լուր բերեցի՝ նույն Մնացականյանների… Թուրքն ինձ հաղորդեց Նելսոնի «հատուկ նշաններով» ապսպրանքը՝ հավատալու համար, որ ինքն իրոք ողջ է եւ սպասում է, թե երբ կգան ազատելու. «Ես ու մեծ մաման տան ոսկեղենը թաքցրել ենք պադվալում դրված մեջտեղի ուշատի ցորնի մեջ, իսկ զայիմն ու դոկումենտները՝ սարայի վառարանում: Տանը խարջելի փողն էլ երրորդ սենյակի մահճակալին դարսված՝ չօգտագործվող յորղան-դոշակի ծալքի մեջ է՝ բարձի տակ»:

Այս անգամ ծնողները լիովին հավատացին, որ խոսքն իրո՛ք իրենց տղայի մասին է: Վստահ եմ՝ անպայման կգնան ազատելու:

10.12.1998

❁

Նստել մտածում էի՝ այսպես չի լինի, մենք կամ կենդանի պիտի գտնենք մեր տղաներին, կամ էլ, քոռանա՜մ, նրանց դիակները: Կարող էր, չէ՞, որեւէ մեկը զոհված լիներ այնպիսի հանգամանքներում, որ մերոնք ժամանակին կարողացած չլինեն տեր

կանգնել դիակին: Պատերազմում ամեն ինչ էլ լինում է: Դիակի որոնումներ պետք է անցկացնել հատկապես այն վայրերում, որոնք առավել երկար են օկուպացված մնացել թուրքի ձեռքին:

Ինքս իմ մտածածից փշաքաղվելով՝ գլուխս դրել էի աշխատասեղանին, երբ զնգաց հեռախոսը: Ժորան էր Մարտակերտից: Նրա Կամո եւ Արմեն տղաներն էլ են անհայտ կորածների ցուցակում: Ասաց՝ Մարտակերտի մատույցներից մեկում բուլդոզերիստն աշխատելիս հողում դիակ է հայտնաբերել: Հասկացող մարդ է եղել, իսկույն Ժորային հայտնել է այդ մասին: Թռա այնտեղ: Ոչ, մեր որդիներից չէր: Երեւի օրեր առաջ անձրեւ էր տեղացել, փոսիկներում դեռ քիչումիչ ջուր կար, ափերով հավաքեցինք, դրանով հող ու ցեխից որոշ չափով մաքրեցինք զոհվածի շորերը՝ բլուզից մնացածը, գլխարկը, կիսագուլպաները, կոշիկը (մյուսը ոտքին չէր), զինվորական գոտին եւ այլն: Մտածեցինք՝ գուցե դրանց ձեւից, գույն ու նախշից որեւէ մեկը կճանաչի իր զավակին:

Մարտակերտից եկել լվացվել՝ հող ու փոշուց ազատվել ենք: Շուրան մի կերպ քնով է անցել, իսկ իմ կոպը կոպին չի մոտենում: Վաղը նորից պիտի այդ շրջանը գնանք: Քնել, ուժ հավաքել է պետք, բայց ինչ անեմ, երբ քունս չի տանում:

14.05.1999

❁

Ճա՜կատս կտրվի, որ շան ճակատ է…Շատ ծանր բեռ եմ առել ուսերիս: Այսօր ծննդյանս օրն էր, իսկ ես՝ որտեղ էի եւ ինչ բանի…

Մեծ խմբով Մաղավուզի բարձունքներում էինք: Մեզ հետ էին ՆԳՆ Ստեփանակերտի քաղաքային բաժնից գնդապետ Միքայել Հայրյանը, հեռուստաօպերատոր Արտավազդը, լրագրող նույն Նարինեն, անգամ Ազգային ժողովից կար ներկայացուցիչ: Շրջվարչակազմի ղեկավար Սեւակ Արծրունին մեքենա տվեց, որ մեզ տեղ հասցնի:

Ժամանակին ահավոր դաժան մարտեր են ծավալվել այստեղ: Եվ զոհեր ենք ունեցել, եւ անհայտ կորածներ: Մեկը մեզ՝ ԱԿԱՀՄ-ականներիս, հայտնել էր, թե կոնկրետ որտեղ պետք է որոնում իրականացնել…

Թեթեւ-ինչ հողով արված կամ ուղղակի քարերով ծածկված, ցեխոտ 5 դիակ... Արտավազդն ուշադիր նկարահանեց կմախքի, հագուստի ամեն մի մասը, զոհվածին պատկանող առարկան, ամե՜ն-ամեն ինչ: Մտածում ենք դրանք իդենտիֆիկացիայի տալ…

15.05.1999

❁

Այսօր առաջին անգամ պետականորեն ու հանդիսավորությամբ նշեցինք ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օրը: Բարձր ներկայացուցչությամբ. երկրի նախագահ Ա.Ղուկասյան, Ազգային ժողովի նախագահ Օ.Եսայան /որը հանդես եկավ, պիտի խոստովանեմ, ցնցող ելույթով, մեկ բան է, երբ մե՛նք ենք խոսում մեր տղաների, մեր խնդիրների մասին եւ ուրիշ բան՝ երբ բարձրագույն պաշտոնյան է հրապարակավ եւ ի ականջ բոլորի՝ մեծի ու փոքրի, յուրայինի եւ օտարի (այդպիսիք էլ էին ներկա հանդիսությանը, օրինակ՝ ԿԽՄԿ ներկայացուցչությունից եւ այլն), պատերազմից 5 տարի անց ասում. «Մեզ համար պատերազմը չի վերջացել՝ քանի դեռ տուն չի դարձել մեր վերջին զիվորը»: Զուգադիպորեն թե նախատեսված՝ հուշահամլիրում էին եւ Մոսկվայից ժամանած մեր տաղանդավոր դերասանը՝ Արմեն Ջիգարխանյանն ու հեռուստատեսային «Կինոճանապարհորդությունների ակումբ» հեռուստահաղորդաշարի հեղինակ ու վարող Սենկեւիչը: Նրանք նկարահանումներ արեցին եւ խոստացան, որ մեզ վերաբերող կադրերը «հում» վիճակում էլ լինի՝ կուղարկեն մեզ…

Սերժ Սարգսյանը մի մե՜ծ ու գեղեցիկ ծաղկեպսակ էր ուղարկել. կարմիր մեխակներ, կենտրո-

նում՝ սպիտակներից կազմված խաչ ու սիրտ: Մեր մայրական ցավի հանդեպ ՀՀ ՆԳՆ եւ ԱԱ նախարարի նման ուշադրությունն ու հարգանքը ցնցել է յուրաքանչյուրիս: Աստված քեզ 100 տարվա կյանք տա, Սերժ ջան, դու բոլորից շատ ես հասկանում մեզ, շատ էլ օգնում:

29.06.1999

❁

Գործերը շատ են, ես՝ վազվզուքի մեջ: Երեւան էլ եմ գնում-գալիս:

Քանի օր է՝ չէի եղել գրասենյակում: Այսօր եկա եւ սենյակիս դուռը բացելուց շեմին թափված լուցկու ծողիկներ տեսա: Ասես հատուկ շարված լինեին, մեկ գծի վրա…Հավաքեցի, աղբարկղը նետեցի:

Նոր էի տեղավորվել աթոռին, ներս մտավ մի երիտասարդ ու թե՝ լուցկուս հատիկներն ո՞ւր են, ի՞նչ եք արել: Ապշած իրեն էի նայում:

- Էդպե՞ս եք կազմակերպություն պահում, գիտե՞ք քանի օր եմ եկել-գնացել… Ամեն անգամ մի լուցկի եմ թողել, որ հաշիվը չխառնեմ:

Բարկացա.

- Բայց դուք ո՞վ եք, որ հաշիվ եք պահանջում ինձնից: Գործուղման էի, չկայի:

Ներկայացավ.

- Իմ անունը Մաքսիմ է: Ես պիտի Ռուսաստան գնամ, 8 օր առաջ պիտի ճանապարհված լինեի, ձեզ չգտա՝ գնալս ձգձգվեց: Ես ադրբեջաբական բանտում եմ նստած եղել: Բայիլում: Գլխովս անցածի մասին որ պատմեմ՝ կփշաքաղվեք: Շատ են տանջել: Ոչ միայն ինձ… Հա, երբ իմացա, որ այսպիսի կազմակերպություն կա, մտածեցի՝ գնամ հայտնեմ, որ մերոնցից էնտեղ դեռ կան, շատ կան: Թուրքի ասելուն էլ, պնդելուն էլ չհավատաք, մտածեցեք տղաներին ազատելու մասին: Ես էստեղ չեմ կարող ապրել, չորս երեխա ունեմ, առողջական խնդիրներ էլ… Լավ, ես գնացի: Մեղք են տղաները, աչքները հայրենիքի ճանապարհին են, ականջները՝ հարազատ ձայնի, մի բան արեք…

- Չէ, մի քանի րոպե էլ հատկացրու մեզ,-պահանջեցի ես,- պատմիր՝ ինչպե՞ս ես ազատվել…

- Երկար պատմություն է, կարճ ասեմ: Բանտապահներին մեկ-մեկ փոխում են: Եկած նորերից մեկը ինձ ճանաչեց. «Արա, Մախսիմ, էդ տո՞ւ ես»,- հարցրեց, երբ ես հերթական ծեծից հետո չէի կարողանում գլուխս հատակից բարձրացնել: Մի կերպ բաց արի աչքերս ու վրաս կռացած տեսա Աֆղանստանում ինձ հետ միասին կռված ընկերոջս… Ասաց՝ ձեն չհանես, մի քանի օր «ձեռքիս տակ կնայեմ քեզ»՝ ուժ հավաքես, հետո կհաջողացնեմ կանալիզացիայով փախչես: Ելքի մոտ քեզ մեքենա է սպասելու… Կտանեն մոտեցնեն

սահմանին, դրանից դենն արդեն դու՝ եւ հայի քո աստվածը, ճակատիդ թե գրված է, գարդաշ, կանցնես ձերոնց կողմը: էդպես եմ ազատվել: Թուրքի մեջ էլ, ճիշտ է՝ քիչ, բայց մարդիկ կան:

Նա գնաց, իսկ ես, աթոռին կպած, չէի կարողանում ուշքի գալ:

Որոշել եմ առավոտյան վարչության անդամներին հավաքել ու հայտնել (ինչպես միշտ) տեղի ունեցածի մասին:

5.07.1999

❁

Ի՜նչ լավ է տանը…Անգամ եթե տարիներ առաջ ռումբի թողած հետքերն են դեռ բնակարանիդ առաստաղին ու պատերին:

Նալչիկից եմ վերադարձել: Այնտեղ մասնակցում էի «Մարդկանց առեւանգման, պատանդման ու վաճառքի պրոբլեմները եւ իրավապաշտպան գործունեության հեռանկարները» թեմայով երկօրյա (հուլիսի 3-4) կոնֆերանսին: Այնտեղ իմ ելույթի լեյտմոտիվը «բոլորին՝ բոլորով» կարգախոսն Ադրբեջանի կողմից անտեսվելու փաստն էր: Ասացի ազգամիջյան հակամարտություններն էլ, պատերազմներն էլ ի վերջո ավարտ են ունենում, եւ այդ ավարտը պետք է սկսվի հենց ռազմագերիներ-

րին տուն արձակելուց, սակայն արդեն լրացել է մեր ու Ադրբեջանի միջեւ կնքված հրադադարի 5 տարին, իսկ մեր տղաները դեռ տառապում են ճաղերի ետեւ:

7.07.1999

❁

Ցերեկվա պատահածից հետո չեմ կարողանում ուշքս գլուխս հավաքել: Այս էլ ինձ ապշահար անելու երկրորդ դեպքը:

…Նա մուտքից ներս մտավ ու թե՝ ճի՞շտ եմ եկել, ինձ «Անհայտ կորածների կոմիտեն» է պետք: Ներկայացավ «Լենա Սաֆարյան»: Հին Մարաղայից եմ, ասաց: Եկել եմ իմ աչքով մի անգամ էլ տեսնեմ մեր Ղարաբաղը: Թուրքի գլուխը թա՜ղեմ, մեզ ասում էին՝ էլ Ղարաբաղ չկա: Մոտերքում հո տղամարդ չկա…

Բարձրացրեց բլուզն ու մայկան: Աստվա՜ծ իմ, կրծքի պտուկները չկային: Օխախոտով բազմանվագ այրել էին թուրքերն, ասելով՝ որ երեխա կերակրել չկարողանաս… Կոնքուհետույքին էլ՝ նույն այրվածադաջվածքով խաչեր…

1992 թվականի ապրիլի 10-ին Մարաղայի ողբերգության զոհերից էր լինելու, եթե դիակների արանքում ուշագնաց ու վիրավոր ընկած՝ անգիտակցաբար չշարժվեր, եւ թուրքերը չնկատեին

իրեն: Նկատեցին ու գերի տարան: Բազմաթիվ կտտանքներից հետո մի ծեր մարդ նրան խղճացել՝ տարել է իրենց տուն, որ հարմար պահը գալուց վաճառի Լենայի հարազատներին: Այդպես էլ ստացվել է: Կրասնոդարի երկրամասում ապրող եղբայրներին հաջողվել է դուրս գալ քրոջ հետքի վրա ու պատկառելի գումարով գնել:

Ես զանգեցի հեռուստատեսության ղեկավար Գարիկ Գրիգորյանին, որ օպերատոր ուղարկի՝ նկարահանելու Լենային ու նրա կրածի ապացույցները, բայց պարզվեց, որ ազատ կամերա չկա, օպերատորները շրջաններում էին: Փորձեցի գտնել լուսանկարիչ Ռուդիկին՝ գոնե նկարի, նա էլ քաղաքից դուրս թաղման էր: Լենան մեզ մոտ մնաց 3 ժամ: Հարցրեց՝ ծեր անհայտ կորածների թվում Զարիֆան ու Նազիլյա՞ն էլ կան:

- Երբ մեզ Մինգեչաուրից տարել էին Բաքվի Վոլոդարսկին, միասին էինք:

Ասացի՝ մենք Զարիֆա չունենք, ի՞նչ Զարիֆա, Զարիֆան թուրքի անուն է: Քիչ անց թանգարանի նկարները դիտելիս նա գոչեց. «Բա ասում եք՝ չունեք… Ահա՛ Զարիֆան: Գիտե՞ք՝ ի՛նչ համարձակն է: Էս էլ՝ Նազիլյան»: Մատը դրել էր սկզբում Զինա Գրիգորյանի, հետո էլ՝ Նադյա Բաղդասարյանի նկարի վրա: Մինչեւ հոգուս խորքը ցնցվել էի: Ուրեմն՝ Զինան ու Նադյան ո՞ղջ են: Փա՛ռքդ շատ, Աստված, մեր հույսն, ուրեմն, անտեղի չէ, մենք ող-

ջեր ունե՛նք այնտեղ, շա՛տ ունենք: Պահի՛ր նրանց, Տե՛ր, գուցե մի օր գազանների մեջ կարթնանա խիղճը, եւ նրանք ազատ կարձակվեն:

15.07.1999

❁

Մինչեւ այսօր կարգին ոչ ուտել եմ կարողանում, ոչ խմել: Երբեմն հագուստս անգամ չեմ հանում: Անընդհատ աչքիս առջեւն է Հասանղայայում տեսածս… Եվ այնուամենայնիվ, սրտիս խորքում շնորհակալ եմ այն մարդուց (անունը տալ չեմ ուզում, հասկանում եմ, որ պետք չէ), ով հնարավորություն տվեց մեզ լինել այնտեղ: Մենք փաստավավերագրական ֆիլմ ենք պատրաստում՝ այդ նկարներով հանդերձ: Նպատակ ունեմ ռազմագերիների ու պատանդների հարցերով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ խոսել դրանց եւ մեր անհայտ կորած տղաների մասին, այն մասին, թե որքան անմարդկային է մեր հակառակորդը, որը հնարավորություն չի տվել ու չի տալիս մարտադաշտից հանել ու մարդավարի թաղել զոհերին…

20.08.1999

❁

Ոտքերս տժժում են: Ձախ ոտքիս թրոմբի ցավն արթնացել՝ ցավազրկիչով էլ չի անցնում: Ամբողջ օրը ոտքի վրա եմ եղել: Մարտակերտի շրջանում:

Երկու ամիս կլինի, զբաղված եմ տղաների կենսագրություններն ու մարտական կյանքին վերաբերող տեղեկությունների հավաքմամբ՝ յուրաքանչյուրի «անձնական գործն» ստեղծելու, քարտադարան հիմնելու նպատակով: Լինում եմ շրջզինկոմիսարիատներում, վարչակազմերում, գյուղապետարաններում. այցելում անհայտ կորած ազատամարտիկ ունեցող ընտանիքներին, հավաքում փաստաթղթերը, ճշտում տեղեկությունները…

Այնքան հոգնած եմ, որ անգամ լոգանք ընդունելու ուժ չունեմ: Հերն անիծած, առավոտյան կլողանամ, մաքրվեմ քրտինք ու փոշուց: Կարեւորն այն է, որ գրեցի գրելիքս: Թողնեմ հետո-ին՝ կամ կմոռանամ, կամ ով գիտի ինչ:

14.09.1999

❁

Չորս օր Ումուբլվում էինք: Այնտեղ է Շահումյանի շրջանի վարչակազմի ժամանակավոր նստավայրը:

…Հանդիպում ենք վարչակազմի ղեկավար Ռոբերտ Այդինյանի ու շրջանի զինկոմի հետ: Արխիվներից հանում-հավաքում եւ ճշտում ենք անհայտ կորած ազատամարտիկներ ու խաղաղ բնակիչներ ունեցող ընտանիքների տվյալները: Հաշվառում ենք, թե քանի երեխա կա նման յուրաքանչյուր ընտանիքում ու թե նրանցից ով ինչով է զբաղված: Այսինքն՝ շարունակում ենք լրացնել կազմակերպության քարտադարանը:

Պատուհանից երեւում է Սարսանգի կապույտ «հայելին»: Գունագեղ աշնան խաղաղ օր է, իսկ ինձ թվում է, թե պայթյուններ եմ լսում… Ժամանակին այստեղ ինչպիսի՜ դաժան մարտեր են ընթացել: Թշնամին մինչեւ ատամները զինված՝ կատաղի գրոհներ էր ձեռնարկում Սարսանգին տիրանալու համար: Քանի՜-քանիսը զոհվեցին մերոնցից, հավանաբար՝ անհայտ կորածներ էլ եղան: Խնդիրն այնքան հէկը չէր, որքան՝ ջուրը. Թարթառի ջուրը, որ նախկինում բոլ-բոլ կենդանություն էր տալիս թուրքերի բամբակի պլանտացիաներին: Ձեր եփածն է, դե կերեք…

Մարմինս՝ ոնց որ ջարդված: Ճանապարհ գնալը

դժվար եմ տանում, բայց ինչ արած, գնալ պետք է. մարդկանց տեղերը պիտի իմանանք, որպեսզի մարդասիրական օգնությունը ճիշտ հասցեով տեղ հասցնենք:

26.09.1999

❁

Երեկ ԼՂՀ մշակույթի նախարար Արմեն Սարգսյանը զանգեց. «Տիկին Վերա, կարո՞ք եք ձեր մեքենայով չորս հոգու տանել հասցնել Ուլուբաբ»: Մերժել չէի կարող. այս տարի մեր Հունիսի 29-ի միջոցառումը ինքն էր ղեկավարել, բացի այդ էլ՝ ինչո՞ւ մերժեմ, մեր մեքենան «ՈՒԱԶ» է եւ հարկավոր դեպքում ի զորու է բարձրանալ անգամ սարերը: Շուրան նույնիսկ ուրախացավ. Ուլուբաբը նրա մոր ծննդավայրն է եղել…Ասում եմ «եղել». որովհետեւ ավելի քան երեսուն տարի է՝ այն լրիվ մարդաթափ է:

Սիրուն աշուն է, սեպտեմբերի վերջ: Արի ու տես, որ սարահարթը բարձրանալիս մառախուղը պատեց չորս կողմը, վաղուց մշտական երթեւեկող չունեցող, քարուքանդ ճանապարհն էլ տեղ-տեղ ջրաեւ ցեխափոսերով էր լի: Դրանցից մեկում մեքենան տնկվեց-մնաց: Հարկավոր էր ճյուղեր կտրտել, գցել անիվների տակ: Արի ու տես, որ մեր «փողկապավոր» հյուրերից երկուսը բնավ մտադիր չէին

ցեխոտվելու: Տեսնում էի՝ Շուրան բարկանում է… Չորսից մեկը Երվանդ Միրզոյանն է՝ բացսիրտ ու կատակասեր մի մարդ, մեծ Հայրենականի իսկական մարտական հրամանատարներից է, որի մասին հենց պատերազմի ժամանակ բանակային թերթերն են գրել (միջանկյալ ասեմ, որ վախճանվելուց առաջ այդ մարդը հուշերի գիրք է տպագրել՝ «Իմ հարսանիքում ես չեմ պարել» վերնագրով): Հենց այդ Երվանդ Իսակովիչն էլ ինձ «պոդդերժկա» արեց. «Ճիշտ է ասում, էլի, տղերք, եթե ուզում ենք տեղ հասնել, բոլորս էլ պիտի իջնենք, մեքենան հանենք ցեխից»: Իջան, հանեցին, շարունակեցինք ճանապարհը: Ասացի, չէ՞, Ուլուբաբը վաղուց է լքված բնակավայր հանդիսանում, նրա բնակիչներից ոմանք քաղաք են գաղթել, իսկ մեծ մասն իջել-բնավորվել է նոր Նորագյուղում: Ինչո՞ւ ենք գնում այնտեղ: Չտվածս հարցի պատասխանն իմացա, երբ մեքենան հասավ մի կիսավեր եկեղեցու թե մատուռի: Պարզվեց՝ խմբում Հայաստանից ժամանած հնագետներ կան…Մնացածն արդեն հասկանալի էր ինձ:

Հոգնած ու չարչարված անգամ՝ ղարաբաղյան աշունով չհիանալն անհնար էր: Հոնիները կախել էին կարմիրով բեռնված ճյուղերը, մոշենու արտասովոր խոշոր հատիկները դեռ հեռվից էին «աչքդ մտնում», վայրի տանձի կաթուկի բուրմունքով համեմված էր օդը: Մի շիշ «քաշովի» օղի դրվեց մեջ-

տեղ, Երվանդ Միրզոյանը գրպանից հանեց մի վարունգ, միջից կիսեց, դանակով հանեց միջուկները՝ ու եղավ երկու «բաժակ», դրանցով էլ տղամարդիկ կիսավեր ու լքված հոգեւոր տան պատի մոտ դատարկեցին շիշը:

29. 09.1999

❁

Շոգ օգոստոս է: Այսօր Հասանղայայում էինք: Նորից՝ որոնումների: Այստեղ մեր զոհերը, թերեւս, ավելի շատ են եղել, քան մեկ այլ վայրում: «Արաբո» ջոկատի 79 մարտիկներ այստեղ են անհայտ կորել... Նրանցից 30-ը Արցախից էին, որոնց թվում՝ Ժորա Կարապետյանի ու Հենրիխ Մնացականյանի երկուական տղաները. առաջինի Կամոն ու Արմենը, երկրորդի Արտակն ու Սպարտակը:

Դեմարկացիոն գիծ ասացին թե ինչ...մի խոսքով՝ սահմանները միմյանցից բաժանող չեզոք գոտու տարածք պիտի մտնենք: Կանալի մոտ դիակներ կան: Բայց ինչպես գնանք, երբ դաշտն ականապատված է: Մեզ ականների տեղն իմացող հրամանատար են հատկացնում: Նա ժամանակին կռվել է այդ տեղերում, նաեւ ծանոթ է ականների տեղադրվածությանը: Տղամարդու լայն քայլերով, շախմատաձեւ առաջ ենք շարժվում շատ զգուշո-

րեն: Այս ու այնտեղ ցուցանակներ են տնկված՝ Осторожно, мина!

Տե՜ր Աստված, 17 դիակ: Գանգեր, ոսկորներ՝ վիրավորվածության, խոշտանգվածության պարզ հետքերով: Մեկի ոտքին այրումով խաչ կա դաջված: Աչքերս մթնում են, գլուխս՝ պտտվում: Օպերատոր չկա հետներս, եղածը լուսանկարչական ապարատ է՝ նկարում ենք տեսածը: Ուրիշ ի՜նչ կարելի է անել նման պայմաններում, երբ վստահ չես անգամ՝ կհաջողվի՞ ականապատ դաշտով անվնաս էլ վերադառնալ:

9.10.1999

❁

Որոնողական աշխատանքը տանում է Գյուլլիջայի, Ալիբալիի, Ֆիզուլիի կողմերը: Այս վերջինում 4 դիակ է հայտնաբերվել, ուզում էի իմ աչքով տեսնել, գուցե ինչ-որ նշան լինի՝ ճանաչեմ որեւէ մեկին: Լեզուս չորանա, ախր Սպարտակս էլ է այդ ուղղությունում կռվել… Իրարամերժ լուրերով բավարարել չեմ կարող, գետում խեղդվողը ծղոտից էլ է բռնում: Չեմ թաքցնում. եթե տղաս չկա, հաջողվի գո՜նե դիակը գտնեմ, տուն բերեմ…

Տուն եմ եկել ձեռնունայն: Մի կողմից էլ ուրախ եմ, որ չեմ ճանաչել ոչ-ոքի: Հույսը մեռնում է վերջինը…

11.10.1999

Սերժ Ազատիչն էր Ստեփանակերտում: Սպասում էինք ԱԿԱՀՄ նրա գալուն՝ ուշանում էր: Գիտենիք, որ դա «իրենից չէ», ինքը շատ պունկտուալ մարդ է: Անհանգստանում էինք, մեկ էլ զանգեցին, թե Երեւանում վատ բան է կատարվել, Սարգսյանը շտապ այնտեղ է մեկնել ուղղաթիռով: Երեկոյան միացրինք հեռուստացույցը եւ «Հայլուրով» ի՜նչ տեսանք. Ազգային ժողովի դահլիճում, ուղիղ նիստի ժամանակ, ինչ-որ սրիկաներ գնդակահարում են երկրի՝ այդտեղ գտնվող ղեկավարներին՝ Վ.Սարգսյանին. Կ.Դեմիրճյանին, մեր Լեոնարդ Պետրոսյանին եւ էլի մի մի քանի հոգու: Ի՜նչ ահավոր է: Հավանաբար, այդպես ենք տանուլ տվել ծովից-ծով Հայաստանը: Այս ի՞նչ ժողովուրդ ենք, հակասական ժողովուրդ. ճակատագրական վտանգի պահին միասնանում -բռունցք ենք դառնում, խաղաղ ժամանակ՝ մեր իսկ ձեռքով կտրում այն ճյուղը, որի վրա նստած ենք…

27.10.1999

❋

Ոչ, եկել եմ այն եզրակացության, որ այս կարգի որոնողական աշխատանքը մեզ հաջողություն ապահովել չի կարող: Գտանք, հավաքեցինք, նմուշներ բերեցինք՝ հետո՞… Ի՞նչ օգուտ՝ եթե Հայաստանում իդենտիֆիկացման լաբորատորիա գոյություն չունի: Մնում է նորից առաջնորդվել կենդանության վերաբերյալ լուրերով գնալ դրա՛նց հետքերով:

Հայի Աստված, ինչ մեզ համար չարեցիր այս տարիներին, արա մեր դուռն արդեն ծեծող 2000 թվականին: Ամեն:

28.12.1999

❋

Մեր երեխաներից 120-ի համար առաջին անգամ նվերերով տոնածառ կազմակերպեցինք թիվ 3 դպրոցի դահլիճում: Ինչպիսի՜ բավականություն է տեսնել փոքրիկների աչքերում ճառագող ուրախությունը, երբ Ձմեռ պապը, գավազանը ձեռքին, խոսում-պարում էր նրանց հետ…

31.12.1999

❁

Այս տարվա տոնածառն էլ շատ լավ անցավ: Ամանորը տոնեցինք հունվարի 3-ին: Նվերներն առատ էին, ուրախությունը՝ մեծ:

4.01.2000

❁

Աշոտ Սարգսյանը եկավ ու թե՝ ի՞նչ եք նստել, վեր կացեք, գնում ենք Շուշի: Ի՞նչ կա: Ո՞նց թե ինչ, չե՞ք ուզում մկրտվել… Ուրախացանք: Ասացինք՝ բա կնքահայրն ո՞վ է լինելու: Թե՝ ինձ հավա՞ն չեք… Հավատադարձությանն ու դրա քարոզչության կարեւորությանը Աշոտը մեծ տեղ է տալիս՝ մեծ էլ ջանքեր հատկացնում: Այդ թեմաներով մարդկանց հետ կարողանում է խոսել մի այնպիսի լեզվով, որ ականջից լսում ես: Բծախնդրության չափ խիստ է ազգային ավանդույթների պահպանման, հայ տղաների եւ հատկապես աղջիկների պահվածքի հարցերում: Ընդ որում՝ դա անում է ոչ միայն պաշտոնական պարտականությունների, այլեւ՝ սեփական խղճի թելադրանքով:

Կարճ ասած՝ մենք հիմա մկրտված՝ սուրբ Խաչի հետ ենք, մեր ազգային հավատքի աջի տակ: Աստված հաջողություն տա բոլորիս, մեր ցավին էլ դարման գտնի. տղաները տուն գան…

18.01.2000

Մի քանի օր շարունակ Արցախի հեռուստատեսություն էի գնում: Մաղավուզում օպերատոր Արտավազդի նկարահանած կադրերով ռեժիսոր Հրայր Ավետիսյանի հետ փաստավավերագրական ֆիլմի վրա էինք աշխատում: Եվ ահա այն պատրաստ է, շատ ապրի Հրայրը: Կոչել ենք «Սպասեցեք մեզ»: Հենց հեռուստատեսությունում էլ տեղի ունեցավ ժապավենի շնորհանդեսը, որին մասնակցելու եկավ արտգործնախարարի տեղակալ Աշոտ Ղուլյանը:

1.03.2000

Կանանց առաջիկա տոնի առթիվ մեզ շնորհավորելու համար այսօր կազմակերպության գրասենյակ եկավ երկրի նախագահը՝ Արկադի Ղուկասյան՝ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի եւ ԼՂՀ նախագահի խորհրդական, ԱԺ պատգամավոր Ժաննա Գալստյանի հետ: «Սպասեցեք մեզ» ֆիլմը դիտելուց հետո նրանք առաջարկեցին առաջին հրապարակային ցուցադրումն իրականացնել հանդիսավոր պայմաններում՝ Սպայի տանը: Նման գնահատման եւ ուշադրության համար ինձ երախտապարտ զգացի:

6.03.2000

❁

Այսօր՝ Ռազմագերիների միջազգային օրը, Սպայի տանը տեղի ունեցավ «Սպասեցեք մեզ»-ի առաջին ցուցադրումը: Սպայի տանը ներկա էր ՀՀ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Ռիմա Առաքելյանի գլխավորած պատվիրակությունը: Մինչ ֆիլմի ցուցադրումն սկսվելը միջոցառումը վարող՝ մշակույթի նախարար Արմեն Սարգսյանը բացման խոսք ասաց, հետո ելույթ ունեցան պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը եւ Ռիման: Դահլիճը լեփ-լեցուն էր: Ցուցադրումն ավարտվելուց մարդիկ հուզմունքից կարկամել էին…

11.04.2000

❁

Ամեն մի ծրագիր կյանքի կոչելու համար հարկ է լինում դռներ ծեծել, իշխանավորների դիմել, բարեգործների, կարճ ասած՝ նյարդերս սղոցելով եմ առաջ տանում գործը: Այդուհանդերձ՝ շնորհակալ եմ բոլորից: Այսպես թե այնպես, վաղ թե ուշ՝ ընդառաջում են, նպաստում հարցերի լուծմանը: Այդ թվում՝ եւ Արկադի Ղուկասյանը: Դե, երկրի նախագահի մոտ ընկնելը ջրի ճամփա չէ…

Այսօր նա ինքը եկավ մեզ մոտ, ասաց, որ հասկանում է մեր ցավը, ու որ եթե միայն հայկական

կողմից լիներ կախված՝ տղաները վաղուց կլինեին ազատված... Մեր հակառակորդն, ասաց, մարդկային ոչինչ չունի, չի ուզում տեղի տալ, բարի կամք դրսեւորել, դրա համար էլ գործը տեղից չի շարժվում: Խոստացավ ուշադրության կենտրոնում պահել անհայտ կորածների ընտանիքներին սատարելու, կարիքավորներին բնակարանով ապահովելու եւ մյուս հարցերը: Դիտեց մեր պատրաստած փաստավավերագրական ֆիլմը՝ «Սպասեցեք մեզ»:

Ավելի ուշ, Սպայի տանը կայացած՝ այդ ֆիլմի պրեմիերային էլ էր ներկա երկրի մյուս ղեկավարների հետ: Բանն այն է, որ այս օրը՝ ապրիլի 11-ը, Ռազմագերիների եւ պատանդների պաշտպանության միջազգային օրն է:

Մեր առաջին ֆիլմն էլ, որ կոչվում է «Անունդ՝ հայտնի, ճակատագիրդ՝ անհայտ», հեռուստաեթեր է դուրս եկել երեք ու կես ամիս առաջ՝ փետրվարի 23-ին (Հայրենիքի պաշտպանի օրը):

14.04.2000

❁

Վիտալի Բալասանյանի ուղեկցությամբ մեզ մոտ՝ ԱԿԱՀՄ գրասենյակ եկան ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ Անջեյ Կասպրշիկն ու մյուսները: Գալիս են, խոսում ու գնում, ի՞նչ է առաջ ընկնում: Մեր խնդրով՝ ոչինչ: Երեկոյան հեռուստատեսությամբ Կասպրշիկը հարցազրույց տվեց: Իր խոսքում, շնորհակալ եմ, կարեւորեց ԱԿԱՀՄ նման կազմակերպության գոյությունն ու գործունեությունը, բայց եւ նշեց, որ շատ ավելի լավ կլիներ՝ եթե այն պատերազմի ժամանակ կամ էլ անմիջապես հետո ստեղծված լիներ, որովհետեւ թարմ հետքերով արդյունքի հասնելն ավելի հեշտ է… Քիչ էր մնում ասեի՝ այդպես խոսելն էլ է հեշտ, ոչ թե սեփական՝ այլ ուրիշի ցավի մասին… Թեեւ ընդունել է պետք, որ փաստորեն ինքը ճիշտ է, թարմ հետքերի հաշվով ճիշտ է ասում: Դա մենք էլ գիտենք:

5.05.2000

❁

Սերժ Սարգսյանը մեզ բոլորից շատ է օգնում: Անհայտ կորած ազատամարտիկների 200 ընտանիքի համար 32 կիլոգրամանոց ծանրոցներ է ուղարկել (սննդամթերք), ու մենք այն տարել բաժանել ենք ըստ հասցեների: Սեյրան Օհանյանը նույն-

պես. 40 ընտանիքի հաշվով 22 կիլոգրամանոց էլի սննդամթերքային ծանրոցներ է ապահովել Միության առավել կարիքավոր ընտանիքների համար:

Մեր երկրորդ ֆիլմը, որ կրում է «Անունդ հայտնի՝ ճակատագիրդ անհայտ» վերնագիրը, ցերեկով ցուցադրվեց Սպայի տանը, երեկոյան էլ՝ ԼՂՀ հեռուստատեսությամբ: Ֆիլմում կադրից դուրս հնչում է Ռուդոլֆ Մարտիրոսյանի (որին ցուցադրումից հետո մեր մայրերից Անգին Աղաջանյանը կնքեց «Արցախի Լեւիտան» անվամբ) ձայնը:

24.06.2000

❁

Սեփական տուն-օջախից սա էլ երկրորդ տեւական բաժանումս էր, որ, փառք Աստծո, վերջապես ավարտվեց: Կարոտից մեռնում էի:

…Փարիզ մեկնեցի հուլիսի 1-ին: Գնում էի Շառլ Ազնավուրի օգնությանը դիմելու… ի՞նչ միամտություն՝ առանց նախապես իր հետ պայմանավորվելու: Տեղ հասնելուց պարզվեց, որ Ազնավուրը Փարիզում չէ ու չի էլ լինի երկար ժամանակ: Մտածում էի՝ աշխարհահռչակ արվեստագետ է եւ հայրենասեր հայ, որ խնդրեմ աղաչեմ, գուցե կարողանա իր հեղինակությամբ ազդել Մուսլիմ Մագոմաեւի,

Ռուստամ Իբրահիբեկովի, նույնիսկ Փոլադ Բյուլբ-յուլօղլու վրա, որպեսզի նրանք էլ ազդեցության իրենց լծակը գործադրեն, Ադրբեջանի իշխանու-թյուններին համոզեն ազատություն շնորհել գոնե մեկ կամ երկու հայ ռազմագերու: Դա էլ՝ երկրորդ սխալս, որովհետեւ դեռ հարց է, թե նրանք իրո՞ք կուզենային լսել նույնիսկ Ազնավուրի նման մեկին, եւ ամենակարեւորը՝ կլսե՞ր, արդյոք, իշխանու-թյունը արտերկրում ապրող ստեղծագործող իր, թեկուզեւ բարձր, մտավորականներին: Ինչեւէ:

Ասված էր՝ ինձ օդանավակայանում դիմավորե-լու կգա «Յառաջ» թերթի խմբագիր Ռաֆֆի Արաքս Հերմոնը, բայց օդանավը վայրէջք կատարեց, իսկ նա չկար…Ու չերեւաց: Մնացել էի գլուխս կորց-րած, ոչ ծանոթ ունեի, ոչ լեզու գիտեի: Մոտեցան ուղեկիցներս՝ Ռուբիկ Գալուստյանն ու Հակոբ Գու-յումճյանը: Պարոն Հակոբն ասաց՝ մի մտածեք, տիկին, կգնանք մեր տուն, հետո կորոշենք ինչ ձեռնարկել: Նա երկու արկղ ծիրան էր բերել իր հետ (ասաց՝ հայկական ծիրանի համն ուրի՜շ է), օգնեցի հասցնել տաքսիների կանգառ:

Տիկին Վասիլիկին ինձ ջերմ ընդունեց:

- Վասիլիկի,- կնոջը դիմեց պարոն Հակոբը,-կու-զե՞ս իմանալ ինչով էի զբաղված Արցախում:

Դիտեցինք մի տեսաժապավեն. Ստեփանակեր-տի կոշկի ֆաբրիկայում ֆրանսահայերի օգնու-թյամբ բացվում է նոր արտադրամաս, որը զինվո-

ական կոշիկներ ու համազգեստ պետք է կարի բանակի համար: Գույումճյանի կողքին վարչապետ Դանիելյանն է: Կինը թե՝ բա ինչո՞ւ երկրի մյուս ղեկավարները ներկա չէին, նա էլ բացատրեց, որ այդ օրը՝ հունիսի 29-ին, ուրիշ կարեւոր միջոցառում էլ կար՝ Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրն էին նշելու գնացել: Այնքան էի ցնցվել, որ արցունքներս չկարողացա պահել: Ասացի՝ նրանք հենց ի՛մ կազմակերպած միջոցառմանն էին եկել, որովհետեւ ես ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահն եմ... Բայց ինչո՞ւ, դու ի՞նչ կապ ունես նրանց հետ՝ մտերմական դու-ի անցնելով՝ հարցեց տիկին Վասիլիկին: Ասացի՝ իմ միակ որդին էլ է ռազմագերի...Այդպես բացահայտվեց Փարիզյան այցիս նպատակը: Պարոն Գույումճյանն ասաց՝ մենք պետք է դիմենք քարոզչության օգնությանը, գնանք ռադիոտուն՝ Հակոբ Պալյանի մոտ: Վերջինս ինձ հետ հարցազրույց վարեց, եւ հաջորդ օրերին չէր լռում գույումճյանների տան հեռախոսը. ֆրանսահայերն իրենց բարոյական զորակցությունն էին հայտնում, շատերն անգամ տուն այցելեցին:

Եղանք շատ տեղերում, շատերի հետ խոսեցինք: Մեծահարուստ Էդվարդ Ջրբաշյանը մի ինքնաթիռ պնդուկով եւ ընկույզով չամիչ առաջարկեց, կողքին մի հայ տղամարդ էլ կար, նա էլ՝ շքեղ ավտո-

մեքենա, ասաց՝ վարորդս Ձեզ հետ կարող է այն Ստամբուլով հասցնել Երեւան: Նայեցի պարոն Հակոբին, նա գլխով արեց, ու ես պահի տակ համաձայնվեցի: Նրանք զբաղվեցին փաստաթղթերը լրացնելով, իսկ մենք վերադարձանք տուն: Գիշերը երազ տեսա. Սպարտակս մռայլ կշտամբում էր ինձ.«Այդ ինչի՞ վրա ես, մամ…Մենք բանտում փտում ենք, փոխարենը որ մեզ ազատես…»: Խոսքը չավարտած՝ անհետացավ, ես էլ վեր թռա անկողնումս ու մինչ լույս աչքիս քուն չեկավ: Առավոտյան գնացինք Ձրբաշյանի մոտ, ու ես ասացի, որ հրաժարվում եմ մեքենայից: Դժվարանում էին ինձ հասկանալ, ես էլ չխորացա: Հետագա օրերն անցկացրի Փարիզի նույն արվարձանում՝ Ալֆորվիլում, ապրող Խաչատուր Դուդաքյանի տանը: Նրանք բնակարանային ավելի լայն հնարավորությունների տեր էին: Տանը միայն իրենք էին՝ պարոն Խաչատուրն ու տիկինը՝ Ալիսը:

Ծանոթացել էի եւ Գլամարի փոխքաղաքապետ Հակոբ Արթինյանի հետ: Ի՞նչ բյուրեղ մարդ է… Հրաժեշտին բոլորն ուզում էին ինչ-որ բաներ նվիրել ինձ, բայց ես վերցրի ընդամենը մի քանի կտոր հագուստեղեն ու սեղանիկի մի ծածկոց, ասացի՝ սա մեր գրասենյակի սեղանիկի վրա կգցեմ՝որպես հիշատակ… Շորերն էլ բաժանեցի մեր վարչության անդամներին: Շնորհակալ եմ ինձ՝ հանկարծահաս եւ ինչ-որ տեղ պատահական հյուրիս հյուրընկա-

լած այդ լավ մարդկանց, բայց կարծում եմ, որ միայն սեփական հարկի տակ ապրած յուրաքանչյուր օրն է արժանի երկրպագման…

25.07.2000

❁

Թուրքերի հետ հեռախոսակապով բանակցությունների՝ մեկը մյուսի գլխին եկող ծախսերս փակելու համար մոտ երեք ամիս է՝ շուկա եմ գնում եւ… ումի՞ց պիտի ամաչեմ՝ բանջարեղենի, մյուս գյուղապրանքների վերավաճառքով զբաղվում: Միակ որդուս կորցրած՝ պատերազմի տարիներին հո չէի հարստացել: Լավ ապրանքի գնման իմ անփոփոխ հասցեներն ունեմ. լոբին՝ քարինտակցիներից, մեղրը՝ բերդաձորցիներից, պանիրը՝ գառնաքարցիներից, ձուն՝ նորագյուղցիներից, կարտոֆիլը՝ ավետարանոցցիներից, կանաչեղենը՝ քարաշենցիներից եւ այլն: Կանաչու մեծ փնջերը փոքրացնում՝ քանակն ավելացնում էի… Իզուր չի ասված, թե գետում խեղդվողը ծղոտից էլ է բռնում:

Մի անգամ էլ կապույտ աչքերով մի մարդ մոտեցավ ու թե՝ տիկին (կանաչի վերավաճառող «տիկին»), եթե խնդրեմ, երկու փունջ մաքրած չե՞ք տա ինձ, գնի կրկնակին կվճարեմ: Ոչ այնքան նրա խոստացածի, որքան այրմարդու համար ոչ սովո-

ական խնդրանքի պատճառով ասացի՝ լավ: Երբ եկավ կանաչին վերցնելու, ընկերոջն ասաց. «Սպարտակ, տոպրակը կպահե՞ս՝ փնջերը տեղավորեմ»: Սիրտս ծուլ եղավ... Մարդը նկատեց դա, հարցրեց. «Ձեզ ի՞նչ պատահեց, տիկին»: Արցունքներս չկարողացա զսպել, ասացի՝ միակ որդուս անունն էլ է Սպարտակ, նա պատերազմում անհայտ կորել է, պարզապես լսեցի անունն ու...

Այդպես ծանոթացանք ես ու Միքայել Հաջյանը: Հետագայում իմացա, որ նրա ընկերոջ լրիվ անուն-ազգանունը Սպարտակ Ղարաբաղցյան է: Երբ ստեղծեցինք մեր կազմակերպությունը, պարոն Հաջյանն այցելեց մեր գրասենյակ, ծանոթացավ վարչության անդամների հետ, դարձավ ԱԿԱՀՄ բարեկամներից մեկը:

Հեռուն չգնամ. հենց այսօր Միքայել Գրիգորեւիչը մեզ օգնեց քաղաքականապես գրագետ ձեւով շարադրել անհայտ կորածների մայրերի անունից Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւին հղվող նամակը: Ընդհանրապես խելոք մարդ է ու լավ խորհրդատու:

2.12. 2000

❋

Ես արդեն 2 թոռնիկ ունեմ… Սպարտակիս մի խոսքը հիշեցի:

Մեր այգում մի թթենի ունենք՝ երեք հսկա ճյուղերով: Սպարտակն ասաց՝ մամ, տես, հա՜, էս ծառից ինչ ճյուղ էլ որ կտրելու լինեք՝ ջահելացնելու համար, էն մեկին ձեռք չտաք, թողեք ավելի հաստանա, ուժեղանա, դրանից իմ ու քույրիկիս ապագա երեխաների ճոճաթոռն եմ կախելու՝ ճինջեխ ածեն: Եվ ահա այսօր, հուլիսյան տապ օրով, երկինքը մեկեն մթնեց ու հորդ անձրեւ տեղաց՝ հետն էլ կայծակ: Վերջինս կպավ թթենուն ու կոտրեց ճյուղերից երկուսը, բայց Սպարտակի ասած ճյուղին ոչինչ չեղավ: Կարծես Աստծո մատն է այս ամենում:

28.07.2000

❋

Ինչպիսի՜ անակնկալ. Ստեփանակերտում են զույգ Հակոբները. Գույումճյանն ու Արթինյանը: Երբ զանգեցին, դժվարանում էի հավատալ ականջներիս: Բնականաբար, նրանց հրավիրեցի մեր տուն: Երբ տեսան ռումբի պայթյունից վնասված առաստաղը եւ ընդհանրապես բնակարանի ընդհանուր աննախանձելի վիճակը, հուզվեցին մինչեւ հոգու խորքը: Վերհիշեցինք փարիզյան

որոշ մանրամասներ…Մի բանում համամիտ էինք. եթե հրաժարված չլինեի մեքենայից, այն կարելի էր վաճառել Երեւանում (հայկական շուկայում լավ գին ուներ) եւ հնարավորության դեպքում գումարը ծառայեցնել որպես փրկագին…Հայի ետին խելք:

Նրանք եղան մեր հուշաթանգարանում: Սեղանիկներից մեկի վրա տեսան փարիզյան «արժանահիշատակ» ծածկոցը: Պարոն Արթինյանն ասաց՝ ես խեղդվում եմ, տիկին, Ձեր ազնվությունից… Չեմ թաքցնի, ինձ դուր եկավ նրա գնահատականը:

15.08.2000

❋

Հինգերորդ օրն է՝ նոր ուսումնական տարվա շեմին դպրոցական նոր պայուսակներ ու գրենական պիտույքներ ենք բաժանում անհայտ կորած ազատամարտիկների 90 երեխաների: Անցած օգոստոսին էլ նույնն արել ենք 120 երեխայի համար: Դրանում մեզ օգնել է Կարմիր Խաչի Ստեփանակերտի գրասենյակը:

20.08.2000

❁

Այսօր հայ ավետարանչական ընկերակցության Ստեփանակերտի գրասենյակից 20 երեխայի հաշվով տրիկոտաժե ներքնազգեստներ ստացանք: Երեխաներին հրավիրեցինք մեր գրասենյակ ու բաժանեցինք:

1.09.2000

❁

Ստեփանակերտում եւ շրջաններում անկողնուն գամված 67 հիվանդ ունենք: Մի քանի անգամ նրանց այցելել ու սննդամթերքներ ու փափուկ ծածկոցներ ենք հանձնել: Երանի չէ՞ր հնարավորությունն ավելի մեծ լիներ՝ ավելիով կարողանայինք օգնել:

18.10.2000

❁

Անկողնուն գամված 67 հիվանդ ունենք միության անդամների թվից: Մի քանի անգամ այցելել ենք նրանց, սննդամթերք ու փափուկ ծածկոցներ նվիրել:

19.10.2000

❋

Պառկել էի քնելու, չգիտեմ ինչու հիշեցի Գարեգին Բ կաթողիկոսի այցը մեր գրասենյակ: Երբ շրջեց թանգարանում, շատ ազդվեց: Ասաց՝ կծգտի կապվել թուրքերի հոգեւոր հովիվ Ալլահշուքյուր Փաշազադեի հետ եւ շոշափել ռազմագերիների հարցը, ինչ հնարավոր լինի՝ կանեմ, ասաց, հրաժեշտին էլ օրհնեց մեզ ու համբերության կոչեց:

Հիմա, վերհիշելով այդ պահը, հոգուս մի տեսակ հանգստություն իջավ: Երեւի սուրբ խոսքի զորությունից է: Թվում է, ի տարբերություն շատ գիշերների, հիմա կհաջողվի քնել:

4.11.2000

❋

Դիմել էի սոցապնախարարություն՝ հագուստեղեն ու լվացքի պարագաներ տան մեզ: Շատ ապրեն, տվեցին՝ մենք էլ բաժանեցինք կազմակերպության անդամ 239 ընտանիքի: Ամեն անգամ, երբ հաջողվում է նման գործողություն իրականացնել, գոնե մի քանի օրով հոգեկան հանգիստ եմ զգում:

16.11.2000

❁

Որոշել ենք տղաների հիշատակն ու մեր սպասումը խորհրդանշող հուշարձան կառուցել: Դրա համար, հուշարձանի լավագույն մակետի համար, մրցույթ ենք հայտարարել: Այն անցկացվեց երեք նվագով: Ուզում ենք ընտրել իրոք ամենալավը: Ի վերջո, մրցանակը շահեց քանդակագործ Յուրի Հովհաննիսյանը: Նրա քանդակում շղթայակապ որդուն մոր պատկերով օգնության է հասնում Աստծո առաքած հրեշտակը:

30.11.2000

❁

Պահանջ եմ զգում մեր տառապանքի եւ գործի մասին գիրք գրել: Պատերազմում անհայտ կորածների պրոբլեմն էլ է մեր ժամանակակից պատմության մի մասը եւ այն հնչեցնել է պետք աշխարհի ականջին: Մեր ցավը մեզնից խոր ո՞վ կարող է ապրել ու արտացոլել: Գիտեմ, որ լրագրող Նվարդ Սողոմոնյանն զբաղվում է այդ թեմայով, գիրք էլ ունի, ինչ կա որ, իրենն՝ իրենը, իմս՝ իմը… Կարող եմ նույնիսկ խնդրել նրան, որ ինձ օգնի՝ պատրաստենք գիրքը. ես լրագրող չեմ, բայց ցավի տիրոջ իմ ասելիքն ունեմ:

5.01.2000

❁

Մի քանի օր առաջ՝ հունվարի 29-ին, Երեւանից զանգեց ՀՀ ազգային անվտանգության եւ ներքին գործոց նախարարի (Սերժ Սարգսյան) աշխատակազմի ղեկավար Մարատ Մուսայելյանը եւ ասաց, որ պարոն Սարգսյանի ցուցումով ԿամԱՁ բեռնատարով, որն ունի նաեւ բեռնված կցորդ, հումանիտար օգնություն է ուղարկվել Արցախ՝ հատուկ Անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների համար, պատրաստվեցեք ժամանակին դիմավորել վարորդներին: Այդ օրը մինչեւ գիշերվա ժամը 1-ն սպասեցինք, բայց բեռնատարը չերեւաց: Անցավ հաջորդ օրն էլ՝ չկա… Արդեն լուրջ անհանգստացանք: Մարատ Շմավոնովիչը նորից զանգեց՝ Վերա, ինչո՞ւ ձայն չեք հանում, ստացե՞լ եք բեռը: Ոչ: Լավ, դուք զանգեք-հետաքրքրվեցեք մինչեւ Եղցահող, ես՝ մինչեւ Գորիս, տեսնենք ինչ է պատահել: Ահավոր ձյուն էր եկել, հետո էլ գետինն այնպես էր սառել, որ ճանապարհները փակվել էին, մեքենաներ գլորվել ձորը, վթարներ տեղի ունեցել: Թվով երրորդ զանգով Մարատը հայտնեց. «Բեռը Խնձորեսկ-Քարաշեն կարճուղու կենտրոնական հատվածում է: Մի դատարկ ԿամԱՁ էլ ինքներդ վերցրեք եւ ուղեւորվեցեք այնտեղ, Գորիսից, արդեն պայմանավորվել ենք, Ազգային անվտանգության պետ Օնիկ Սաֆարյանն է գալու»,- ու

դրեց լսափողը: Այլեւս չկասկածեցի, որ վատ բան է պատահել: ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանի հանձնարարությամբ մեքենան տրամադրվեց, եւ քրոջս ամուսնու՝ Արցախյան պատերազմի վիրավոր Արամայիս Աղաջանյանի հետ ճանապարհվեցինք Գորիս: Մեծ դժվարությամբ հասանք տեղ:

Միացյալ խմբով պատահարի վայր գնացինք: ԿամԱԶը սառցապատ ու խորդուբորդ ճանապարհից դուրս թռչելով՝ 35 մետրի չափ գլորվել էր զառիթափով ու հետհարվածից շրջվել դիմացի բլրակի ստորոտում... Արնաշաղախ վարորդները դեռ տեղում ընկած էին: Արդյունաբերական ապրանքներն ու մթերային արկղերն աջ ու ձախ թափված էին գետնին, մի զգալի մասը՝ փշրված: Շրջակա գյուղերի բնակիչները, որ մեզնից շուտ էին իմացել վթարի մասին, հասցրել էին բավականին քաշել տանել ամեն ինչից... Սաֆարյանի ներկայությամբ արագ ակտեր կազմեցինք, ինչ հնարավոր էր կամ իմաստ ուներ հավաքել՝ հավաքեցինք եւ այդ ամենը վերաբեռնելով արդեն մեր տարած բեռնատարին՝ հասցրինք Ստեփանակերտ:

3.02.2001

❁

Արդեն շաբաթ է անցել դեպքից, բայց հիմա էլ չեմ կարողանում ժպիտս պահել, երբ հիշում եմ, թե ինչպես ապրանքը բաժանեցինք անհայտ կորածների ընտանիքներին:

…Ապրանքը բերելը բերեցինք, բայց… Այն ուշ երեկոյան հասցրինք կազմակերպության գրասենյակ, իսկ գրասենյակը դեռ վերանորոգված չէր, դռների վրա ոչ մի փական չկար, կիսավեր տարածքում էինք: Ի՞նչ անել, «անտերունչ» բարիքն այստեղից էլ կքաշեն տանեն… Որոշեցինք անհայտ կորած ազատամարտիկ Արսեն Աբալյանի հայր Սերգեյին այդ գիշեր պահակ կարգել ապրանքի վրա, որի շարքում մի հեռուստացույց էլ կար, այն իսկույն միացրել՝ պարզել էինք՝ աշխատո՞ւմ է, թե՞ ոչ: Աշխատում էր: Ես ու Շուրան գնացինք տուն, բայց աչքիս քուն չեկավ. իսկ եթե Սերգեյ քեռին հանկարծ քնով անցնի… Ասացի՝ չէ, Շուրա, վեր կաց, գնանք: Դեռ աստիճանների վրա՝ լսեցինք Սերգեյի խռմփոցի ձայնը… Հեռուստացույցի կապույտ էկրանը լուռ ու դատարկ էր, «պահակը»՝ Մորփեոսի գրկում: Տեղում էլ լուսացրինք գիշերը, հետո զանգեցինք հասցեներով ու կեսօրից հետո, երբ մարդիկ եկան, սկսեցինք բարիքը բաժանել հստակ կազմած ցուցակներով: Աստված Սերժ Սարգսյանին երկու կյանք տա: Նրա սրտով ղեկա-

վարի առաջին անգամ եմ հանդիպում իմ կյանքում:

Իսկ ընդհանրապես, արժե, որ տեղի ունեցած իրադարձության վերաբերյալ գրելիքս վերջացնեմ ժողովրդական խոսքով՝ լավ է՝ երբ ամեն ինչ լավ է ավարտվում:

8.02.2001

❋

Օրերս Թբիլիսիում էի, մասնակցում էի Ղարաբաղյան հակամարտության գոտում անհայտ կորածների որոնման աշխատանքային խմբի (ղեկավար՝ Յուլյա Մախարաշվիլի) երկօրյա նիստին: Եղավ պահ, երբ ադրբեջանական կողմից Համլետ Բադալովը Ադրբեջանի իմ կոլեգա Թամարա Այուբովայի ներկայությամբ ասաց՝ մենք տեղեկացել ենք Ձեր որդու՝ Սպարտակի (նա Սայադ Շուրաեւիչ Գրիգորյան անվան տակ է պահվում) որտեղ գտնվելու մասին եւ կարող ենք փրկագին տալով ում պետք է՝ ազատել նրան, բայց՝ մի պայմանով. եթե դուք էլ գտնեք ու մեզ տաք իմ կամ Թամարա խանումի տղային: Բադալովի տղայի ճակատագրի մասին ոչինչ ինձ հատնի չէր, բայց որ Այուբովայի Վադիմ որդին զոհվել էր՝ հաստատ էր… Ասացի՝ ես այստեղ եմ բոլոր սպարտակների համար եւ խոսում եմ ոչ միայն իմ որդու ազատագրության

մասին: Այնպես էի լարված, այնքան վատ էի զգում ինձ, որ կտրուկ թողի դահլիճը՝ ուշքս հավաքելու: Այս ի՜նչ լաբիրինթոսում եմ…

16.02.2001

❁

Տարիներ առաջ, դեռ խորհրդային օրոք, բանաստեղծություններ էի գրում, որոնք, հիմա եմ հասկանում, ոտանավորիկներ էին… Հանգավորած պարզունակ տողեր՝ սիրո, երազանքի եւ… է՞լ ինչի մասին պիտի գրեր երիտասարդ աղջիկը: Ավելի ուշ, երբ ամուսնացա, Շուրային եղբայր եկող Լազր Գասպարյանը, որ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր, հետո էլ պատասխանատու քարտուղար էր աշխատում, ինձ հասկացրեց, որ իսկական պոեզիան դա չէ, ու ես թողեցի գրելը: Բայց ահա, քանի-քանի տարի անց, ճակատագրի բերումով իմ լեզվին ՑԱՎՆ է սկսել ծաղկել բանաստեղծության լեզվով… Ի՞նչ անեմ: Գրում եմ կասկածելով. իսկ եթե նորի՞ց բանի պետք չլինեն…Հետո էլ պատասխանում եմ. իսկ դու ինչո՞ւ ես ուզում, որ ինչ-որ բան ասվի, դրա՞ համար ես գրում: Իհարկե՝ ոչ: Այն էլ հիմա՝ այս տարիքում: Չէ, ուղղակի գալիս են մտքերն ու տողավորվում, եւ այդ տողերը միակն են, որտեղ ինձ համարյա կազմա-

բանորեն տեսանելի են դառնում էմոցիաներս: Սկսում եմ ինձ ճանաչել դրանցում, ինձ ու վիճակս: Ներքին վիճակի մասին եմ խոսում:

Գրում եմ, լավ էլ նկատելով, որ ամենաքիչը տեխնիկական առումով սայթաքումներ ունեմ, դե, գրող չեմ, ոչ էլ գրականագիտություն եմ ուսումնասիրել: Հասկանում եմ, որ անթերի չեն գրածներս, բայց կանգ առնել չեմ կարողանում: Երբ ներքին մենակություն եմ զգում, որը փարատել հնարավոր չի լինում ոչնչով, ինձ փրկում են միայն այդ…այ, հիմա էլ չգիտեմ՝ ասեմ «ոտանավորնե՞րը», թե՞ «բանաստեղծությունները»: Վա՜յ, Լազր Հաշիմիչ, այս ինչ օյին դրեցիր գլխիս…

Լավ, կգնամ թերթի խմբագրություն: Բայց ո՞ւմ մոտ: Երեւի Նվարդ Ավագյանի՝ եւ բնաստեղծուհի է, եւ կոռեկտ անձնավորություն: Կտամ՝ կարդա, ինչ կա՝ թող այն էլ ասի: Իմ ձեռքին գրիչ դնողը իմ ու բախտակիցներիս ցավն է:

19.02.2001

❁

Այսօր զավեշտական դեպք պատահեց: Օգնություն էինք տարել Հադրութ: Բաժանելուց հետո գնացինք մեր ներկայացուցչի՝ Փիրուզի տանը մի կտոր հաց ուտելու: Անծանոթներ էլ կային՝ հիմնականում կանայք: Ես սովորություն ունեմ այցերի

ժամանակ Շուրային ներկայացնել որպես կազմակերպության վարորդի (իրականում հենց այդ գործն էլ կատարում է՝ առանց հաստիքի ու վարձատրման, արդեն քանի՞ տարի…): Բացառություն չեղավ այդ օրն էլ: Երբ կենացները «բարակեցին», ասացի՝ եկեք այս բաժակն էլ բարձրացնենք մեր վարորդի պատվին ու տեսա, թե ինչպես կանայք բազմանշանակ հայացքներ փոխանակեցին: Դու մի ասա՝ Արցախի հեռուստատեսության օպերատոր Սոս Մայիլյանն էլ էր նկատել դա, ինձ աչքով արեց ու բարձրաձայն թե՝ տիկին Վերա, հասկացա՞ր սրանց հայացքների իմաստը, մտածեցին, թե Շուրան սիրեկանդ է: Ա՜յ ժողովուրդ, ասաց, էս մարդը էս կնկա հալալ-զուլալ, մադար-գյուդար ամուսինն է, չգիտեիք՝ իմացեք: Կանայք շատ շփոթվեցին: Հետո բոլորս ծիծաղեցինք, ու «քեֆը» շարունակվեց ուրախ նոտայի վրա: Վա՜յ ձեր ինչն եմ ասել…

4.03.2001

❁

Զանգեց պարոն Հաջյանը. «Տիկին Վերա, գիտեմ, որ փողի նեղություն եք քաշում, Ձեզ օգնելու շանս կա: Սփյուռքից (Կանադայից) խումբ է եկել Արցախ, մեկ տասնյակի չափ հայեր են, վճարովի սկզբունքով նրանց բնակարաններում էլ են տեղա-

վորում, տանն ունե՞ք նման հնարավորություն»: Տակ տվի, գլուխ տվի, ասացի՝ լավ, ես ու ամուսինս կջանանք հնարավորինս գոհացնել նրանց:

Զրմուղը չէր աշխատում, ձորի աղբյուրից էինք ջուր բերում թե խմելու, թե տնտեսական կարիքների համար: Օրերն անցնում էին, հյուրերը՝ հյուրեր: Նրանց տարանք Գանձասար՝ մասնակցեցին պատարագին: Վանքի բակում հանդիպեցի եղբորս աներձագ, զոհված էռնեստի կնոջը՝ Աիդային: Ասաց՝ ամուսնու ծնված օրն է ու լավ սեղան է գցել, ամբողջ խմբով մեզ իրենց տուն հրավիրեց: Հյուրերս կերան-խմեցին, ու ճանապարհվեցինք ետ՝ Ստեփանակերտ: Տան փոքրի ձեռքին սիմվոլիկ 1 դոլար էլ չէին դրել… Ախր գիտեի՞ն ում հարկի տակ են հյուրընկալվում:

Անշուշտ, գիտեին եւ այն, որ մեր միակ տղա զավակը ռազմաճակատի առաջին գծում է եղել, այնտեղ էլ անհայտ կորել է: Ամուսիններով կաշվից դուրս էինք գալիս, անհնարինը հնարավոր դարձնում՝ նրանց լավ սպասարկելու համար: Սովորական կերակուրներից բացի, ղարաբաղյան հատուկ ուտեստներ էինք մատուցում, մտածելով՝ թող ճանաչեն հայի արցախական տեսակին, մեր արքուբարքի, ապրուստ-կենցաղի մասին պատկերացում կազմեն:

Ինչեւէ: Եկավ Կանադա վերադառնալու օրը՝ եւ նրանք հավաքեցին իրենց շորուշիրթերն ու գնա-

ցին… Կախման կետն այստեղ նշանակում է, որ ոչ մի կոպեկ էլ (դե, «կոպեկ» ասելու ենք սովոր) չվճարեցին: Զանգեցի պարոն Հաջյանին, պատմեցի, զայրացած ասաց՝ ի՞նչ մարդիկ դուրս եկան դրանք, ինչպե՞ս կարող էին այդչափ անշնորհք-անշնորհակալ լինել, չէ՞ որ նախապես գիտեին, ասվել էր, որ որպես մասնավոր հյուրանոցի՝ պետք է վճարեն:

Անցած լինի… Իրենց հալալ: Պարզապես սոսկալի հիասթափվում ես նման «հայրենակիցներից»:

12.08.2001

Շատ ապրի Նվարդը, չմերժեց: Ընդառաջեց, օգնեց. նյութերը դաս-դասեցինք, ամենակարեւոր ասելիքը երկրորդականից ջոկեցինք… Կարճ ասած՝ թափած ջանքի համար շնորհակալ եմ նրանից: Գիրքը շուտով լույս է տեսնելու: Վերնագրել ենք «Անհայտ ճակատագրեր՝ ահագնացող տագնապ»: Ի դեպ, այնտեղ զետեղել ենք եւ մեր կազմակերպության մի քանի նամակներ, որոնք ժամանակին ուղարկել ենք տարբեր բարձր ատյանների հասցեներով: Միաժամանակ ԱՀ նախագահ Հեյդար Ալիեւին ու ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին հղված նամակում շարադրած մեր պահանջ-

ներն ադրբեջանական կողմին հետեւյալն են. հայ ռազմագերիների մի մասը դեռ ողջ է, եւ հարկավոր է դրսեւորել բարի կամք, ազատել նրանց՝ անկախ դատական ատյանների կայացրած վճիռներից, հայկական կողմին հանձնել բանտերում մահացած ռազմագերիների աճյունները, ապահովել ականապատված չեզոք տարածքներում մնացած՝ զոհվածների աճյունների անձեռնմխելիությունը, լուծել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի հարակից տարածքներում հայ եւ ադրբեջանցի զինվորների անհայտ թաղման վայրերի համատեղ որոնման ու հետազոտման, հայտնաբերված աճյունների իսկության պարզման հարցերը եւ այլն:

Մինչ այդ էլ ենք գրեթե նույն բովանդակությամբ նամակ գրել Ալիեւին, բայց նա չի արձագանքել: Երեւի չարձագանքի այս անգամ էլ…Գլուխը քարը:

22.04.2001

❋

Հարազատներին տեսնելու համար Պյատիգորսկից Ստեփանակերտ ժամանած Ժաննա անունով մի կին, իմանալով ով եմ, հայտնեց, որ ինքը Պյատիգորսկ է բռնագաղթել Բաքվի հայտնի դեպքերի ժամանակ եւ որ Սեդոյ մականվամբ իր ամուսինը Պյատիգորսկում շատ ադրբեջանցիների գիտի,

որոնք պահպանում են կապը Բաքվի հետ: «Եկեք մեզ մոտ, խոսեք նրանց հետ, գուցե կկարողանան ինչ-որ բանով օգնել Ձեզ»,- ասաց:

…Պյատիգորսկում եմ: Տեսա, խոսեցի հետները: Մեկը կա, բարի տղա է երեւում, Դողմար է անունը, ասաց կխոսեմ մոտիկներիս հետ, ստուգեն տեսնեն «որտեղ ինչ» կա…Իմացավ: Կարդաց իմ ներկայացրած ցուցակը, որտեղ գրել էի տղաներից նրանց անունները, ում մասին որոշակի եւ համեմատաբար թարմ տեղեկություններ ունեինք, կարդաց ու չգիտեմ ինչու ասաց՝ նա այստեղ չէ… Ո՞վ՝ հարցրի: Ասաց՝ կարո՞ղ եք դրանց նկարները բերել: Վերադարձա Ստեփանակերտ, վերցրի նկարներն ու տարա: Նայեց-նայեց ու նորից թե՝ չէ, նա այստեղ չէ: Ո՞վ՝ հարցրի համբերությունս կորցրած: Դողմարը թե՝ ձերոնցից մեկը կա Բաքվում: Սերգեյ Շահենի Բալայան: Բայց նա Ձեր ցուցակում չէ:

Հայրենիք վերադառնալով իմացա, որ այդ տղան զոհված է համարվում: Որ իբր նույնիսկ թաղված է… Օ՜, պատերազմ: Այդ ի՜նչ ես անում մեզ հետ:

Սպարտակիս նկարը տեսնելով՝ նույն Դողմարն ասաց. «Սրան հատուկ հանցագործ են համարում, որովհետեւ միլիցիոներ է եղել…Սրան չեն ազատի, չէ: Մենք նրա մասին դեռ Բաքվում՝ հեռուստատեսությամբ ենք լսել…Նա է, այո, լավ հիշում եմ»: Նա

խոսում էր, իսկ իմ ոտքերը՝ դողում, շունչս կտրվում: Չասացի, որ իմ տղան է: Ինչ իմանամ՝ ինչպես կարծագանքեին, հետեւանքն ինչ կլիներ…

31.05.2001

❁

Լուր ենք առել, թե անհայտ կորած Համլետ Վարդանյանը կենդանի է եւ նրան Բաքվի «Գյուլիստան» ռեստորանում, պահնորդի հսկողության տակ, թառ նվագել են տալիս (մեր հայրենակիցը շատ լավ թառ նվագել գիտի): Ա՜խ, մեկը լիներ՝ Բաքու ընկներ, ստուգեր…

5.06.2001

❁

Վաղուց էի մտադիր հրատարակել մեծ ու գունավոր օրացույց, որը միաժամանակ կներկայացներ, ըստ ծննդյան ամիսների, մեր անհայտ կորած ազատամարտիկներին: Ամեն ծրագրված չէ, սակայն, որ կարող է դյուրին ստացվել…Ես դա իմ կաշվի վրա շատ եմ զգացել: Ապրի Սերժ Սարգսյանը, նա՛ ֆինանսավորեց: Գլուխ եմ խոնարհում այդ մարդու առջեւ, այնքան լա՜վ է հասկանում մեր ցավը, անչափ ուշադիր է եւ կարեկից մեր հոգս ու խնդիրներին:

Օրացույցն ահա վերջապես սեղանիս է: Գլուխս այս գիշեր հանգիստ կդնեմ բարձին:

26.06.2001

Այսօր ԱԿԱՀՄ գրասենյակում էին Ավստրալիայից ժամանած տեր եւ տիկին Իսկանդարյանները: Ամուսինը՝ Վարուժանը, ԼՂՀ մշտական ներկայացուցիչն է այդ երկրում, կինն էլ՝ Սիլվիան, մի շատ հաճելի անձնավորություն է: Սրտին շատ մոտ է ընդունում մեր ցավը…

Հանգամանքների բերումով այդ պահին գրասենյակում էր եւ ադրբեջանական գերությունից ազատված Նելսոն Մնացականյանը: Իսկանդարյանների խնդրանքով բոլորս միասին նկարվեցինք…

11.05.2002

Մայիսը կիսվել է արդեն: Կարկառն էլ վարարած է: «Սպասում» ֆիլմի համար անհայտ կորած ազատամարտիկների 20 երեխայի հետ գետափին էինք այսօր: Օպերատորը ՆԳՆ աշխատող Արայիկ Միրզոյանն է, ռեժիսորը՝ մեր անդավաճան Հրայրը: Պարզվեց, որ մայիսի 24-ը Ավթանդիլյան Գառնիկի որդի Հրաչի ծննդյան տարեդարձն է: Նա դեռ չէր

ծնվել, երբ հայրն անհայտ կորավ մարտում… Երեխան ոտանավոր արտասանեց այդ մասին: Ցնցող էր: Այդպիսի պահերի համար է ասված՝ լցվել եմ, լալ չեմ կարող… Ախր ինչպե՞ս լաց լինեի երեխաների ներկայությամբ: Արցունքներս դեպի ներսս էին հոսում: Տեր Աստված, տուն բեր Հրաչիկի եւ մյուսների հայրերին: Նրանց էլ՝ ովքեր դեռ չէին հասցրել հայր դառնալ:

Խորոված արեցինք, փոքրիկները գետում լողացան: Սիրտդ մի փոքր հանգստանում է, երբ ժպիտ ես տեսնում նրանց դեմքներին, լսում ուրախ ծիծաղը:

24.05. 2002

❁

Տղաների համար նոր՝ յուրատիպ-յուրատեսք անձնական գործեր եմ պատրաստել: Անձը ներկայացնող, կոշտ ու կարմիր կազմով փաստաթուղթ՝ նկարով, հակիրճ մարտական կենսագրությամբ՝ մի էջում, եւ մյուսում՝ երկտուն բանաստեղծություն կարոտի ու վերադարձի թեմայով:

Այսօր, տղաների Հիշատակի օրվա հանդիսությունից հետո, ծնողները եկան գրասենյակ, ու յուրաքանչյուրի ձեռքին դրեցի իր անհայտ կորած հարազատի այդ ոչ անկարեւոր փաստաթուղթը:

Պատրաստել էինք երկուական հատ, որպեսզի

մեկն էլ մնար մեզ մոտ: Հիմա հարկավոր դեպքում էլ չենք քրքրի արխիվը, պե՞տք է՝ ձեռքդ մեկնիր ու վերցրու որինն ուզում ես…

29.06.2002

❁

Սրտիցս ասես ծանր քար ընկած լինի…

Նվարդ Արամովնան կարդաց, ասաց՝ անթերի չեն, բայց անկեղծ են: Սրանք բոլո՞րն են՝ հարցրեց: Ասացի՝ ոչ, երկու-երեք տետր էլ ունեմ: Թե՝ բերեք, տեսնենք, սրանք, չեմ թաքցնի, խմբագրման կարիք ունեն: Ոչ այնքան խոր՝ բայց ունեն: Դուք տարիներ առա՞ջ էլ էիք եկել այստեղ, թե՞ սխալվում եմ: Ասացի՝ չեք սխալվում, բայց հիմա այն չէ, ինչ այն ժամանակ էր… Ներքուստ խեղդվում էի: Հասկացավ ինչ էի ուզում ասել: Բերեք կարդանք, կրկնեց ու ժպտալով ավելացրեց՝ եթե սրանցից վատը չլինեն՝ կարելի է գրքով էլ տպագրել: Հենց մեր տպարանում…

Շուրայից գաղտնի էի գրում, բայց մինչեւ ե՞րբ պիտի թաքցնեի: Հայտնեցի օրվա նորությունս ու սպասում էի նրա ծուռ ժպիտին: Հիմա կասի՝ պա՜հ-պա՜հ-պահ, չգիտեի, որ նոր Սիլվա Կապուտիկյանի հետ եմ ապրում…Բնավորության այդպիսի գիծ ունի՝ առանց թույնի ձեռ առնել: Բայց ո՜վ զարմանք, նա հանգիստ ասաց՝ ինչ կա որ, դու հո

մենակ մեր մասին չես գրում, մերոնց բոլորի անունից ես գրում…

Հետո խոստովանեց, որ ձեռքն է ընկել տետրերիցս մեկն ու կարդացել է…Ապրես, Շուրա ջան, այսօր քո մեջ նոր մարդու հայտնաբերեցի:

13.10. 2002

❋

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության գանձապետական համակարգի ներքին աուդիտի վարչության պետ Մուրադ Հարությունյանը եկել էր Ստեփանակերտ: Լսել էր մեր հուշաթանգարանի մասին եւ այցելեց: Խորապես ազդվել հուզվել էր: Տեսնելով նոր տպագրված «Անհայտ ճակատագրեր. ահագնացող տագնապ» գրքիս տպաքանակը, ասաց կարող է օգնել այն Հայաստանում տարածել-վաճառելուն:

Շատ ապրի, իրոք օգնեց: Շնորհակալություն նրան, գրքի վաճառքից ստացված գումարով էլ հենց կհրատարակեմ չափածոս:

15.11.2002

❁

Այսօր ԼՂՀ գրողների միությունում տեղի ունեցավ «Տառապանքը ազգություն չի ճանաչում» եւ «Հույսը ճանապարհին» ժողովածուներիս շնորհանդեսը: Հատկապես երկրորդը, որ չափածո է, հուզել էր բոլորին: Արտահայտվեցին Վարդան Հակոբյանը, Սոկրատ Խանյանը, Յուրի Հովհաննիսյանը, Սերգեյ Դավթյանը, Սիլվա Խաչատրյանը եւ ուրիշներ: ՑՕՐ-ից մի ջութակահար զինվոր էր եկել, շատ լավ նվագեց «Մարտիկի երգը»: Մարդկանց աչքերում արցունքն էր լճացել: Ախր այդ երգը համահունչ է մեր ապաբախտ տղաների կարոտին՝ առ հայրենիքը: Վերջում, երբ խոսքը տվեցին ինձ, ասացի՝ բոլորից շնորհակալ եմ ոչ այնքան մեծարման ու բարի խոսքերի համար, որքան՝ մեր ցավն ըմբռնելու… Շեշտեցի, որ եթե չլիներ այդ ցավը, այսքան տարիներ անց գրիչ չէի առնի ձեռքս, որ քանի դեռ որդիս տուն չի վերադարձել՝ իմ գործն ու այդ գրիչն են ինձ ոտքի վրա պահողը:

Աստված վկա, իրոք այդպես է:

20.12.2002

❁

Այս տարի Սերժ Ազատովիչի ու Սեյրան Մուշեղովիչի հովանավորությամբ լույս տեսան իմ «Եվ դարից երկար ձգվում է տունդարձի օրը» եւ «Տառապանքը ազգություն չի ճանաչում» գրքերը: Անչափ շնորհակալ եմ նրանցից: Հասկանում են, գիտեն, որ միայն իմ ցավի մասին չէ, որ գրում եմ: Եվ որ գրել պետք է՝ նույնպես հասկանում են:

28.12.2002

❁

Հեռուստատեսությամբ ցուցադրվեց մեր նոր՝ «Կարոտից առած ցավ՝ կարոտ հուշեր» ֆիլմը. ամեն տարի մեկ թեմատիկ փաստավավերագրական ֆիլմ պատրաստելը դարձել է կազմակերպության գործունեության «ատրիբուտներից» մեկը…

25.06.2003

❁

Այ, հիմա գլուխս հանգիստ կդնեմ բարձին: Երեխաներին ճանապարհեցի Երեւան, որպեսզի այնտեղից էլ թռչեն Կիպրոս…

20 հոգի են: Բոլորն էլ՝ անհայտ կորած ազատա-

մարտիկների զավակներ: Ամառ է, արձակուրդ, թող մի լավ հանգստանան, միջերկրականի յոդով հարուստ օդը շնչեն, ամրանան, մի քիչ էլ «աշխարհ տեսնեն»՝ գան: Մեկ այլ խմբի էլ Հունաստան էինք ուղարկել, շատ գոհ վերադարձան: Հայաստանյան ճամբարների մասին չեմ խոսում, դրանք կան ու կան:

5.07. 2003

❋

Սպայի տանը կայացավ մեր «Գթասրտության ժամանակը» փաստագրական ֆիլմի պրեմիերան: Դահլիճում ասեղ գցելու տեղ չկար… Քանի որ ցուցադրումը համընկավ կազմակերպության 5-ամյա հոբելյանը նշելու հետ, միջոցառման բոլոր մասնակիցներին, շուրջ 1000 հոգու, բաժանել էինք այդ նպատակով լույս ընծայած բրոշյուր: Ֆիլմի ստեղծման պատմությունը բավականին հետաքրքիր է:

Սցենարը գրել է «Արցախ» թերթի գլխ. խմբագրի առաջին տեղակալ, բանաստեղծուհի եւ արձակագիր Նվարդ Ավագյանը, ռեժիսորն էլ մեր նույն Հրայրն է: Իսկ այ թե ով պետք է կադրից դուրս հնչեցներ տեքստը՝ դարձել էր խնդիր: Բանն այն էր, որ նպատակ ունեինք ֆիլմը հնչեցնել երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն ու անգլերեն: Տիտղոսա-

թերթի վրա հենց այդպես էլ գրված է: Սակայն իրականում հասնել այդ ամենին չկարողացանք: Դա անելու համար որոշակի գումար էր պահանջվում, որն, ավա՜ղ… Որոշեցինք այդ բացը «լրացնել» կարդացողի ձայնով, ինչի համար պետք եղավ դիմել, թեեւ ինքներս էլ չէինք հավատում մեր բռնած գործի հաջողությանը, ոչ այլ ոքի, քան՝ Սոս Սարգսյանին: Նվարդ Արամովնան հավատացրեց, որ բեմարվեստի՝ նրա նման հսկան ու նրա նման մեծ հայը չի կարող մերժել հայրենյաց՝ ոչ իրենց կամքով անհայտ կորուսյալ զավակների խնդիրը էկրանից հնչեցնելու խնդրանքը…Այդպես էլ եղավ, Վարպետը հանձն առավ կատարել գործը ու թեեւ շատ հիվանդ էր՝ արեց այն:

Պրեմիերային ներկա էին պետության, կառավարության ղեկավարները, իշխանության մյուս թեւերի պատասխանատուները, հյուրեր Հայաստանից ու Սփյուռքից: Ֆիլմի մասին խոսեցին շատերը: Բոլորի ելույթներն էլ ավարտվում էին նույն մաղթանքով՝ համբերություն ձեզ ու բարի վերադարձ տղաներին…

5.10. 2003

❁

Ես ու Ռիմա Առաքելյանը Թբիլիսի էինք գնացել՝ էլի ռազմագերիների հիմնահարցով խորհրդակցության մասնակցելու: Վերադառնալուց Երեւանի օդանավակայանում ականատեսը դարձանք 3 ադրբեջանցու յուրայիններին հանձնելու փաստի: Այ այդպես է. մերոնք հա բարի կամք են դրսեւորում, իսկ նրանք՝ «մեզ մոտ հայ գերի չկա»… Մինչեւ ե՞րբ ենք հանդուրժելու այդ սուտն էլ, անարդարությունն էլ: Ինչեւէ, ես էլ, հայաստանցի իմ կոլեգան էլ տուն գնալու կապակցությամբ շնորհավորեցինք (սրտանց) այդ տղաներին եւ միաժամանակ խնդրեցինք հայրենիք հասնելուց հետաքրքրվեն մերոնց ճակատագրով… Խոստացան, բայց դե… ժողովուրդն ինչպե՞ս է ասում՝ ձյան վրա գրիր, արեւին դեմ արա…

10.11.2003

❁

Լրացել էր կյանքիս 50 տարին… Ե՜րբ թռավ այդքան ժամանակը: Մեր «աղջիկները» հանգանակ արին ու ոսկե մատանի նվիրեցին, ինչպես ընդունված է հայության մեջ՝ մասնակիցների «ցուցակով» հանդերձ: Մատանին տուն չտարա, «բիրկան» էլ չպոկեցի, վարչության անդամներին ասա-

ցի՝ այստեղ կպահեմ այնքան, մինչեւ մեր տղաներից մեկը երեւա, ու հարսանիքին նվիրեմ իրեն…

Հետո ինչե՞ր չանցան գլխովս: Այս աշխարհում բազում բարեկամներ ունեցող ամենալավ մարդուն անգամ կարող է, չէ՞, բաժին ընկնել առնվազն մեկ չարակամ… Ես գուցե «ամենալավը» չեմ, բայց որ վատն էլ չեմ, հաստատ է: Իմ բաժին չարակամը, գիտակցաբար թե անգիտակցորեն, ժամանակին շատ ցավ ու անհանգստություն պատճառեց ինձ: Այնքան՝ որ իրավապահ մարմինների հետ անգամ գործ ունեցա: Իմ գործունեությունը, սակայն, միշտ այնքան է լինում թափանցիկ եւ օրինական, որ ամիսների քաշքշուկից հետո կայացված վերջնավճիռն իմ օգտին եղավ: Մինչ այդ, սակայն, երբ իրավապահները եկան գրասենյակ, «հայտնաբերեցին» վերոնշյալ մատանին: Ես նրանց բացատրեցի, որ այն աշխատանքային ընկերներիս հոբելյանական նվերն է: Հարցրին՝ իսկ ինչո՞ւ է այստեղ, ինչո՞ւ տուն չեք տարել: Ցույց տվի գրասենյակի պահեստում նույնպես խնամքով պահվող հարսանեկան զգեստը եւ ասացի այն, ինչի մասին արդեն գրել եմ վերը:

Նրանք ցնցվել էին: Դա հիմա էլ, կարծում եմ, կարող են հաստատել այն ժամանակ ԼՂՀ գլխավոր դատախազության քննչական բաժնի ավագ դատախազ, արդարադատության առաջին կարգի խորհրդական Յուրի Ստեփանյանն ու նույն դա-

տախազության պետական շահերի պաշտպանության բաժնի դատախազ Արմեն Սարգսյանը:

4. 04. 2004

❋

Երեկ «քաշքշուկի» մասին վերհիշելուց ոնց էր՝ բաց թողեցի մի կարեւոր հանգամանք: Դատից տառացիորեն մի քանի օր առաջ մեր փոստը նամակ բերեց Արցախի ԿԿ Ստ.Շահումյանի անվան երիտասարդական միության անունից: Ես, որ հանձնվողը չեմ, կարդալուց լաց եղա: Ուրախությունից՝ առ այն, որ աշխարհի արդարամիտ մարդիկ, այնուամենայնիվ, ավելի շատ են, քան անարդարները: Այդպես չլիներ, աշխարհը փուլ կգար հիմնովին: Հետո իմացա, որ այդ կազմակերպության ներկայացուցիչները ներկա էին լինում դատական նիստերին եւ ծանոթ էին իմ «գործի» ընթացքին: Նամակում (այն պահում եմ «գործին» վերաբերող մյուս թղթերի հետ) ասված է հետեւյալը (մեջբերում եմ ամբողջությամբ). «Մենք հիացած ենք Ձեր անկոտրում կամքով ու անսպառ եռանդով: Այս օրերին, երբ Դուք փոշու մեջ կորած՝ զբաղված եք անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի շինարարությամբ, անհեթեթ ասեկոսություններով վրդովում են որդեկորույս

մոր հոգին, որը լի է վշտերով ու տագնապներով: Կարելի է հասկանալ սոցիալական շատ ծանր վիճակի մեջ գտնվող մեր ժողովրդին, սակայն ճշմարտությունը միայն մեկ երես ունի՝ փաստը կատարած գործն է: Համբերություն ու համառություն Ձեզ՝ անհայտության մեջ գտնվող որդիներին տուն բերող կածանի մացառուտները հաղթահարելու գործում:

Ստի ու խարդախության ոտքը, բարեբախտաբար, կարճ է լինում:

Մենք մեծ հավատով սպասում ենք անհայտության մեջ գտնվող մեր հարազատներին»:

5.04.2004

❁

Չորս տարի է՝ կռվում ենք (կարծում եմ, այս դեպքում ճիշտ բառը հենց սա է) տղաների հուշարձանի համար: Տեղի հարցն ու ֆինանսավորումը հա՜ ձգձգվում է: Իշխանությունների մտքինն ինչ է, չեմ հասկանում: Մայրերը պայթում են, ես էլ չգիտեմ ինչպես համբերության կոչեմ նրանց, ինչպես հորդորեմ պատկան այրերին՝ հարցն ի վերջո լուծեն: Նյարդերս ասես սղոցված լինեն: Շուրան բողոքում է՝ արդեն տանն էլ հանգիստ խոսել չես կարողանում…Ճիշտ է ասում:

14.05.2004

❁

«ՑԱՎ. Մուշկապատ». մեր այս կարճամետրաժ ֆիլմում մուշկապատցի Շահմուրադը պատմում է ադրբեջանախորհրդային օմոնի կողմից իր կալանավորվելու եւ Բայիլի բանտում անցկացրած օրերի մասին: Նույն ֆիլմում հանդես է գալիս մուշկապատցի մեկ այլ նախկին կալանավոր՝ տեղիս հայրենապաշտպան ջոկատի հրամանատար Նորայր Հովսեփյանը. նկարագրում է ազերիների կողմից իրեն բաժին հասած կտտանքները: Նրա կինն էլ պատմում է, թե ինչպես է 7 գյուղերից գումար հանգանակել՝ ամուսնուն ազատելուն անհրաժեշտ փրկագնի համար: Այդ ֆիլմը թուրքական կողմի դաժանությունը մերկացնող հզոր վկայություն է: Նորայրը վերադառնալուց գյուղապետ էր աշխատում, բայց բանտում խարխլված առողջության պատճառով երկար կյանք չունեցավ. վախճանվեց 46 տարեկանում: Երեք տղաներից ոչ մեկին դեռ չէր պսակել…

24.06.2004

❁

Իշխանության ներկայացուցիչներից եկել էին գրասենյակ՝ խոսելու (ընդամենն էլի խոսելու՜) հուշարձանի հարցով: Բաղդասարյան Գերասիմը, մենք Գարո ենք ասում (նրա անհայտ կորած տղան սպա է եղել) եւ Շուրան այլեւս չդիմանալով՝ ի դեպ սրտի նոպա ունեցավ և հազիվ կարողացավ ասել. «Ինչո՞ւ եք «հայոց հարց» սարքում… Որքա՞ն կարելի է ձգձգել: Մեր տղաներն էլ են զինվոր եղել, նրանցից ոչ-ոք հիմա ռեստորանում նստած բարիքներ չի վայելում, ոչ էլ ենթակա է տաք անկողնում հանգիստ մեռնելու: Նրանք հիմա՛ էլ են զինվոր… Վախկոտ կամ դավաճան որ լինեին, Ադրբեջանի հեռուստատեսությամբ տասն անգամ ցույց տված կլինեին, չե՞ք հասկանում: Մրցույթով անցած հուշարձանը եթե չի ստացվում, նրանք, ինչ է, գոնե մի խաչքարի՞ էլ չեն արժանի»:

Այդ գաղափարից իսկույն կառչեցին: Բա ո՜նց, համեմատել իսկ չի կարելի. խաչքարը մի ահագին էժան կնստի…

Դե, ինչ. մենք հոգնել ենք: Հոգնել ենք պատերազմելուց: Պատերազմած երկրում ենք ապրում, էժանով պիտի բավարարվենք: Հոգնե՜լ ենք: Գիտեմ՝ բայց ինչ արած…

Չերկարացնեմ. այսօր Խաչքարի ու միաժամանակ հուշաթանգարանի բացումը եղավ: Հանդի-

սավորությունից գանգատվելու տեղ չունեմ. ամեն ինչ տեղը տեղին էր: Երկրի նախագահն անձամբ կտրեց ժապավենն ու մի կողմ քաշեց քողը: Արարողությանը ներկա էին իշխանության բոլոր թեւերի ներկայացուցիչները: Շատ ժողովուրդ կար՝ ծով…Դրա համար էլ ենք շնորհակալ թե՛ պետության ու կառավարության ղեկավարներից, թե՛ մեր հասարակայնությունից: Ոնց որ մեր սիրտը խրված փշերից մեկը հանեն…

29.06.2004

❋

Այսօր տղաների հուշաթանգարան այցելեցին նախագահ Ղուկասյանը, Ժաննա Գալստյանը, Սեյրան Օհանյանը եւ այլ բարձրաստիճան անձինք: Կազմակերպության աշխատանքային սենյակներում եւ հուշասրահում լինելուց, հստակ կանոնակարգված մեր արխիվին, ստեղծած կինոդարանին, հուշաթանգարանի ցուցանմուշներին ծանոթանալուց հետո Արկադի Արշավիրովիչն ասաց. «Մենք հասարակական շատ կազմակերպությունների ենք ֆինանսական միջոցներ տրամադրել, բայց ոչ մեկում աշխատանքի նման ծավալի չենք հանդիպել… Տիկին Վերա, պատրաստ ենք ձեզ աջակցելու հետագա ծրագրերում»:

25.07.2004

❋

Երեւի այսպես է լինում, երբ ասում են՝ այսինչի խոսքը գործից չի տարբերվում: Երկրի նախագահն իր խոստումը կատարելու առաջին քայլն արեց. բարեգործական կանալի օգնությամբ մեզ փոխանցեց 500 (հինգ հարյուր) եվրո: Շնորհակալություն նրան էլ, այն բարեգործին էլ, ով հայապահության գործին է ծառայեցնում վաստակածի մի մասը:

1.08.2004

❋

Հուշաթանգարանը վերակառուցելու-վերանորոգելու եւ կահավորելու համար մոտ 2 միլիոն պարտք էի մնացել առեւտրի ու շինարարական կազմակերպություններին: Դա այն դեպքում, երբ սեւագործ բանվորների դերում հաճախ մենք ենք հանդես եկել՝ վարչության անդամներն ու կազմակերպության անդամներից ոմանք: Չորս տարուց հետո վերջապես երկրի ղեկավարի ցուցումով այդ գումարը պետբյուջեից հատկացվեց մեզ, ու պարտքը մարեցինք:

Ես շնորհակալ եմ հատկապես առետրի այն կետերի տերերին, ովքեր համբերատար սպասեցին խնդրի լուծմանը՝ շատերն անգամ չհիշեցնելով դրա մասին… Չո՜րս տարի: Շուկայական հարաբե-

ությունների պայմաններում: Լինելով սեփական-նատեր: Մանվելը, Շուրիկը, Բորյան… Ումից շի-նանյութեր եմ վերցրել:

Նախագահ Ղուկասյանը մեզ մի անգամ էլ օգ-նեց 2 հազար դոլարի չափով: Մեր մուտքերի 1 դրամն անգամ ֆիքսում ենք հաշվապահական գր-քերում: Գլուխը հանգիստ բարձին դնելը լավ բան է, բացի այդ էլ եթե կազմակերպություն ես, պար-տավոր ես հաշիվ-հաշվառքդ կանոնակարգած պահել: Մանկուց չեմ կարող տանել անփութու-թյունը: Նախ ծնողներս են (հատկապես մայրս) ինձ այդպես սովորեցրել, հետո՝ կյանքի հանգամանք-ները…

10.11.2004

❁

Այսօր այնպիսի մի բան պատահեց, որ ցնցեց ինձ մինչեւ հոգուս խորքը: Մեր գրասենյակ եկավ մի մարդ: Ասաց հադրութցի է: Սուրիկ Աթայան: Աչքե-րում մի տեսակ տխրամածություն կար: Կարծեցի անհայտ կորածի հարազատ է, դրա համար է մեզ մոտ եկել, բայց մեկ էլ մտածեցի. եթե նման բան լի-ներ, վաղուց կիմանայի, Հադրութի շրջանում մեր ներկայացուցիչը՝ Փիրուզան ասած կլիներ: Չէ, այստեղ ուրիշ բան կա, ինչ՝ պարզ չէ, բայց որ այս մարդն էլ է կորուստ ունեցել, չեմ կասկածում:

Զրուցեցինք, բացվեց: Ասաց՝ ժամանակին, այո, մեծ ցավ է ապրել. իր երեխաների մորն է կորցրել… Հուսադրեց՝ դուք դիակները չեք տեսել, գուցե դեռ կերեւան, դիմանալ ու սպասել է պետք: Երեւում էր՝ սրտառուչ մարդ է: Այդ պահին ներս մտավ մերոնցից մեկը ու թե՝ ծնունդդ շնորհավոր, Վերա (մայիսի 15-ը իրոք ծննդյանս օրն է): Հադրութցի այցելուն ասաց՝ կներեք, ես մի քանի րոպեով դուրս գամ, գործ ունեմ, հետո կշարունակենք զրույցը, ասելու բան ունեմ: Ժամանակ անց վերադարձավ ստվարաթղթե մի տուփ ձեռքին եւ իմ կողմը մեկնելով՝ ասաց. «Սա էլ իմ կողմից, տիկին Վերա, Ձեր ծննդյան կապակցությամբ»: Այնքան անսպասելի էր դա, որ առաջին պահ հապաղեցի շնորհակալություն հայտնել… Բայց առավել զարմանալին դեռ առջեւում էր: Դիմելով ինձ ու Շուրային՝ Սուրիկը հարցրեց.«Կարելի՞ է ձեր տուն հյուր գալ»: Ամուսիններով իրար նայեցինք: Դե, հայ մարդ ենք, հո չէինք ասելու «չէ»:

Երբ հասանք մեր հինգհարկանի շենքի բակը, հյուրն սկսեց հետաքրքրվել շենքի ջրամատակարարման համակարգով, ինչն ավելի մեծ տարակուսանքի մեջ գցեց մեզ: Իսկ նա, ինքն իրեն մտմտալով՝ թե դա լավ է, ուրեմն՝ հնարավոր է: Ի՞նչն է հնարավոր: Ասաց՝ սրտանց ուզում եմ մի լավ գործ անել ձեզ համար, ա՜յ այն ազատ տեղը ձեր կորած տղայի հիշատակին մի աղբյուր-հուշարձան կա-

ռուցել… Առաջարկից շատ հուզվեցինք, բայց ես մերժեցի: Ասացի այս թաղում չորս տասնյակից ավել զոհվածներ ու անհայտ կորածներ կան, ես չեմ կարող իմ տղային առանձնացնել նրանցից, եթե նման բան կառուցվելու լինի՝ պետք է վերաբերի բոլորին, իսկ դա մեծ գումար է պահանջելու: Մի պահ մտածելուց հետո հյուրն ասաց՝ ավելի լավ, թող լինի բոլորի համար… բայց կառուցել անպայման պետք է, մեծ թաղ է: Ու առ այսօր հույսով ենք, որ մեր թաղամասում ևս կկառուցվի հուշարձան-աղբյուր:

15.05. 2006

❋

Մի կին եկավ մեզ մոտ՝ գրասենյակ: Արզիկ Մինասյան: Նախկին լենինավանցի: Ասաց՝ Ալվարդ Ալեքսանյանի եղբոր կինն է: Ալվարդի նկարն էլ, «անձնական գործն» էլ մեզ մոտ կա: Անհայտ կորել է 1992 թվականի ապրիլի 10-ի Մարաղայի ողբերգական իրադարձությունների ժամանակ: Թուրքերը հանկարծակի խուժել են գյուղ, եւ ծնողները հազիվ հասցրել են հարսին, երեխաներին ու 23 ամյա դստերն՝ Ալվարդին թաքցնել տանիքի տակ: Իրենք ծվարել են բակի չորանոցում, որպեսզի թշնամին մտածի, որ տանը միայն երկուսով են:

Տանիքում գտնվողները տեսան, թե գազաններն ինչպես տանկի տակ տրորեցին հարեւանին՝ Բախշի Մովսիսյանին, մյուսի՝ Բորիսի գլուխը կտրեցին սղոցով… Մարաղացիներին գերության քշելիս տեսան: Ալվարդի հորն ու մորն էլ սպանեցին: Դա էլ տսնելով՝ 23-ամյա օրիորդն իրեն չկարողացավ տիրապետել՝ իջավ տանիքից ու ճչալով վազեց հոգին ավանդող ծնողների կողմը: «Լավ էլ սիրունն է,- գոչեցին թուրքերը,- էս էլ մեր պարգեւայինը»: Ալվարդին գերի տարան:

Զարմանալ կարելի է, թե ճակատագիրը երբեմն ինչ խաղեր կարող է խաղալ մարդկանց գլխին: Ալվարդի եղբայր, Արզիկի էլ տեգր՝ ազատամարտիկ Արթուրը կռվում անհայտ կորավ, բայց նախախնամության կամքով որպես ռազմագերի՝ հայտնվեց Միր-Բաշիրի շրջանի Խորուլու գյուղում, որին մերձակա մեկ այլ գյուղում պահվում էր քույրը: Վերջինս համեմատաբար խղճով մարդու տան էր ապրում, քանզի այդ թուրքն օգնեց, որ քույր ու եղբայր հանդիպեն իրար: Եվ Ալվարդը կազմակերպեց Ասկյար անունով թուրքի տնից Արթուրի փախուստը: Եվ տղային հաջողվեց հասնել Թալիշի մեր առաջապահ պոստին… Թե հետո ինչ է եղել իր՝ Ալվարդի հետ, ոչ-ոք չգիտի: Արզիկի ամուսնուն զոհվելու բախտ էր վիճակված… «Արթեն բի՛լեթ ըմ յեր կալալ, Ռուսաստան ըմ քինում…»,- արցունքն աչքին՝ ասաց Արզիկը:

Տեր աստված, ի՜նչ ողբերգությունների միջով է անցել եւ անցնում այս ժողովուրդը: Մեկս մյուսի տառապանքին նայելով՝ դիմանալու կամք ենք թելադրում մեզ:

18.07.2006

❁

Տեր Աստված, ի՜նչ կլինի այնպես անես, որ վաղաժամ մահ չլինի: Անհայտ կորած ազատամարտիկների կանանցից արդեն շատերը չկան… Եվ խնդիրն այն է, որ դրանք տարիքի հետ կապված մահեր չեն: Գրեթե որպես կանոն՝ վախճանվում են ծանր հիվանդություններից: Հիմնականում՝ սիրտանոթայինից, դիաբետից, օնկոյից: Թող բժիշկներն ինչպես ուզում են բացատրեն, ես դա կապում եմ նյարդային համակարգի վաղաժամ քայքայման հետ: Արդեն կորցրել ենք 84 ծնողի՝ հիմնականում կանանց: Բայց վերջին դեպքը ահավոր ձեւով է ցնցել մեզ: Անհայտ կորած ազատամարտիկ Անատոլի Պետրոսյանի տիկնոջ՝ Կարինեի մահը նկատի ունեմ:

…Այդ օրը եկավ գրասենյակ, բայց չկարողացավ բարձրանալ սանդուղքի աստիճաններով, շնչահեղձ էր լինում: Օգնեցինք, բարձրացրինք: Պատմեց, որ վատ է զգացել՝ դիմել բժշկի, ու պարզվել է, որ սրտային լուրջ հիվանդություն ունի, փրկության միակ ելքը վիրահատությունն է. որը մեծ գու-

մար արժե… Ինչո՞վ կարող էինք օգնել: Մտածել էր պետք, դռներ ծեծել, օգնության համար ատյաններ-ի դիմել, իսկ դա ժամանակ էր պահանջում: Վարչության անդամներով որոշեցինք գոնե մեկ-երկու «օրվա ծախսի» գումար տալ: Չհրկիզվող պահարանում այդ պահին ընդամենը մի 10 հազարանոց կար, տվեցինք, ճանապարհեցինք, իսկ երկու ժամ անց մահվան լուրն առանք: Սրտի նոպան նոր ուժով էր կրկնվել…

Երեխաները մնացել են երկկողմանի որբ: Հատկապես Մարատը, որ դեռահասության տարիքում է… Տեր, մեզ ազատիր այս իրոք կենաց ու մահու պատերազմից, հենց այնպես չենք ասում, որ այն մեզ համար դեռ չի վերջացել:

16. 09.2006

❁

Իմացել եմ, որ մեր որոնողական աշխատանքի մասին լսելով, Հասանղայայի՝ մեզ հետաքրքրող տարածքը թուրքերն առավել անմատչելի են դարձրել, իրենց կողմից ավելի պնդացրել, չգիտեմ որքանով է ճիշտ՝ իբր երրորդ զատիչ գիծ էլ են քաշել, ականները խտացրել: Այնքան՝ որ նույնիսկ ԵԱՀԿ ներկայացուցիչներին չի հաջողվում լինել այնտեղ:

17. 09.2006

❁

Մեզ այսօր այցելեցին, ԱԿԱՀՄ սրահներում շրջեցին Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ անհայտ կորածների հիմնախնդիրներով զեկուցող, հոլանդացի սենատոր Լեո Պլացվոետը եւ վեհաժողովի կոմիտեի քարտուղար Մարկ Հեվիլեն:

Զրուցեցին վարչության անդամների հետ: Ուշադիր լսում էին: Եվրոպացուն հատուկ քաղաքավարության դրսեւորում էր թե ավելին՝ չգիտե: Է՞հ, այդպես գալիս-խոսում-գնում են, արդյունքում՝ մեզ համար ոչ մի տեղաշարժ:

18.09.2006

❁

Գրեթե ամեն տարի ստիպված ենք լինում փոխել՝ թարմացնել վարչության անդամների ցուցակը: 7 հոգու արդեն անվերադարձ կորցրել ենք… էլի սիրտ-անոթային եւ օնկո-հիվանդություններից: Ցավը, կարոտն ու սպասումը սպանում են նրանց:

15.10.2006

❁

Վերջերս մեկ-երկու տեղից լուր էինք առել, թե Թուրքիայում Ադրբեջանից տարված հայ բանտարկյալներ կան: Խելքից հեռու բան չէր՝ եթե նկատի ունենանք երկու երկրների եղբայրական կապն ու «ընդհանուր հետաքրքրությունը» մեր նկատմամբ… Ամիս չանցած էլ զանգեց մեր քաղաքի կին մտավորականներից մեկն ու պնդեց հանդիպման վրա: Ասաց՝ ինչ ասելու եմ, հեռախոսի բան չէ: Հանդիպեցինք:

Պատմեց, որ իր բարեկամներից մեկը գործով Ատամբուլում է եղել, եւ այնտեղ մեկը հատուկ ցանցապատ ցանկապատի ետեւից լսելով իր հայերեն խոսքը, հարցրել է՝ ո՞ր կողմի հայ ես, ախպեր… Լսելով Ղարաբաղի անունը, աղաչել է՝ ես բալլուջեցի Գաբալն եմ, հարազատներիս կասեք, որ կենդանի եմ, չգիտեմ ինչու, մեզ հապշտապ այստեղ են տեղափոխել Բաքվից:

Սիրտս ասես կանգ առավ: Ականջներումս խշշոց էի զգում, երբ զրուցընկերուհիս հարցրեց. «Գաբալ անունով անհայտ կորած ունե՞ք»: Ասացի՝ Գաբալն անուն չէ, դա որդուս գործընկերոջ ու մարատական ընկերոջ՝ Գառնիկ Աղաջանյանի մականունն է…

Մտածում էի՝ ի՞նչ անել: Միայն բառացի տեղեկության վրա հիմնվել չէի կարող, հարկավոր էր

ինչ-որ ձեւով ճշտել փաստը, որպեսզի հիմք ունենայի դիմել համապատասխան մարմնի… Վարչության անդամներին պատմեցի այդ մասին, Ժաննա Թավրիզյանն ասաց. «Կլխա՜վտ շոռ տամ, Վերա, էլհա մեր մաչի սրտավը տուվըս, եր կաց քյինի էտ պրիշակը, տես հինչըս կարում անիս… Բալի լհա մին պեն կտեռնա՝ մնըցըծներեն հղեն էլ պեց անե»: Անհայտ կորած ազատամարտիկ Ռազմիկի մոր աղաչանքը զանց առնել չկարողացա, թեեւ նման ուղևորությունների դառը համը չէի մոռացել:

…Ստամբուլում եմ: Որպես զբոսաշրջիկ: Այլ հնարավորություն չկար ինձ համար: Հետս միայն լուսանկարչական ապարատ է, նույնիսկ գրանցող սարք չեմ վերցրել. մեկ է, օտար օդանավակայանում ստուգման ժամանակ ինձնից խլելու էին: Ընդհանուր ծանոթ եմ գտել, հետը շրջում եմ «որոշակի» վայրերով, խոսում մարդկանց հետ, ովքեր կարող էին ինչ-որ տեղեկության տեր լինել ինձ հետաքրքրող հարցում: Տեղացի մի հայի հետ մոտենում ենք մի շենքի, որը հիմնականում պարսպապատ է: Ասում է՝ այստեղ էլ են պահում կալանավորներին, բայց ներս մտնել կարող են միայն դրա համար հատուկ թույլտվություն ունեցողները, «Կարմիր խաչի» նման միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները եւ այլն: Կալանավորներին աշխատանքի տանում-բերում են ուժեղ հսկողության տակ, այն էլ, չգիտես ինչու, ոչ

միշտ նույն ժամերին…

Օրերն անցնում են, իսկ ինձ չի հաջողվում ոչ մի արդյունքի հասնել: Այս էլ հերթական հիասթափություն: Ստեփանակերտ եմ վերադառնում ներքուստ փշրված:

Կախարդական շրջան ենք ընկել՝ դուրս գալ չկա:

9.11.2006

❁

Այսօր՝ Ռազմագերիների միջազգային օրը, մեզ մոտ հանդիսավոր արարողություն էր. բուժկետ բացեցինք… Այն սպասարկելու է անհայտ կորած ազատամատիկների հարազատներին: Հիվանդներ շատ ունենք, դե գոնե նվազագույն բժշկական օգնություն կկազմակերպենք նրանց համար: Բուժկետի բացմանը ներկա էր անձամբ առողջապահության նախարար Զոյա Լազարյանը: Բուժկետի համար դեղորայք եւ բժշկական այլ պարագաներ էին բերել: Նվերներից հատկապես ուրախացրեց արյան ճնշումը չափող գործիքի առկայությունը: Մեր ճակատագիրն ու վիճակն այնպիսին է, որ նույնիսկ ժողովի կամ ցանկացած հարցի քննարկման ժամանակ կարող է մեկնումեկը վատ զգալ իրեն, առաջին օգնության համար անհրաժեշտ

բժշկական միջոցներ ձեռքի տակ ունենալը շատ լավ է: Պայմանավորվել ենք, որ հանրապետական հիվանդանոցից բժիշկներ՝ թերապեւտ Լյուբա Հարությունյանը, վիրաբույժ Արմո Գրիգորյանը եւ էնդոսկոպիստ Արամ Գրիգորյանը ամիսը մեկ անգամ լինեն բուժկետում եւ ընդունեն մեր հիվանդներին, լսեն նրանց բողոքները, խորհուրդներ տան, ստացիոնար բուժման անհրաժեշտության դեպքում՝ ուղեգրեն հիվանդանոց՝ անվճար բուժման եւ այլն:

Մենք հիպերտենզիայով տառապող մի քանի հիվանդ ունենք, եւ ուղղակի բացմանը բուժքույր Մարինե Գրիգորյանը, որը միաժամանակ անհայտ կորած ազատամարտիկ Կարո Գրիգորյանի կինն է, չափեց իրեն վատ զգացած Անգին Աղաջանյանի՝ անհայտ կորած ազատամարտիկ Գառնիկի մոր ճնշումը, որը բարձրացել հասել էր 220/120-ի… Գուցե՝ հուզմունքից, գուցե դրանից անկախ՝ չգիտեմ: Ժամանակին դեղ ընդունեց, եւ վտանգը կանխվեց: Չէ, իրոք ճիշտ ենք արել՝ բուժկետը բացելով: Լազարյանին շնորհակալություն՝ մեզ հասկանալու եւ ընդառաջելու համար: Նաեւ բոլոր նրանց, ովքեր պարտավորվել են անվճար կատարել հավելյալ գործը…

11.04.2007

❋

Լույս տեսավ մեր կազմակերպության պաշտոնաթերթի անդրանիկ համարը: Կոչել ենք «Հույսի ճանապարհ»… Մեզ այդ առնչությամբ շատերն են շնորհավորել՝ պետական այրերից սկսած՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներով ավարտած: Արցախի ժուռնալիստների միության նախագահ Կիմ Գաբրիելյանի շնորհավորական խոսքում ասված է. «Ցանկացած նոր պարբերականի ծնունդ նշանակալից երեւույթ է Արցախի մշակութային կյանքում: «Հույսի Ճանապարհ»-ի պարագայում դա մի քիչ ավելին է, քանզի լրատվամիջոցի սոսկական առաքելությունից բացի, թերթը նաեւ փարոսի դեր պիտի կատարի անհայտ կորած ազատամարտիկների համար: Թող թերթ-փարոսի այդ լույսը առատ լինի անհայտ կորածների տունդարձի ճանապարհին: Հուսանք ու հավատանք»:

29.04.2007

❋

Հաղթանակի հերթական տոնակատարությունից տուն եմ եկել ու թեեւ հոգնած՝ հանգստանալ չեմ ուզում: Ավելի լավ է շարադրեմ երեկվա եղածի մասին: Մեզ մոտ՝ գրասենյակում մեծ ուրախություն էր. վերջապես ավարտել ենք մեր անհայտ կորած

հերոս տղաներից մեկի՝ պռոշյանցի Կարոտ Մկրտչյանի անվան գրադարանի կայացումն ու կահավորումը: Արդեն հազարին մոտ գրքեր ունենք՝ հիմնականում հայրենասիրական եւ պատմա-քաղաքական գրականություն: Կարոտը ֆիդայական ջոկատի շատ խելոք ու կորովի հրամանատար է եղել, կռվել է շատ տեղերում, անհայտ կորել է Շահումյանի շրջանում մղված դաժանագույն մարտերից մեկում:

Թեւե նեղվածք էր՝ շատ մարդ էր ներկա բացմանը: Հուզիչ ելույթներ եղան: Իսկ ժապավենը կտրեց անձամբ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, բնականաբար՝ ԱԿԱՀՄ նախագահի հետ միասին:

9.05.2007

Այսօր տեղի ունեցավ մեր ռազմահայրենասիրական կաբինետի բացումը: Վաղուց էի ուզում անել դա: Որպեսզի դրսից այս թանգարանն այցելողն իմանա, որ մեր 239 անհայտ կորած ազատամարտիկները մաս ու միավորն են եղել հաղթական բանակի, այն փոքրաթիվ բանակի, որը կարողացավ ոչ միայն դիմակայել՝ այլեւ հրադադար խնդրել տալ թե կենդանի ուժի ու թե տեխնիկայի թվաքանակով իրեն բազմիցս գերազանցող թշնամուն:

Մենք այս թանգարանն ստեղծել ենք ոչ թե «թաշկինակ բռնելու»՝ լաց լինելու համար, այլ ցույց տալու, որ այն մեր ազատամարտի տարեգրության մի մասն է եւ մեր հակառակորդի անմարդկային էությունն ու պահվածքը մերկացնող հզոր փաստ. պատերազմն ավարտվելուց սովորաբար, միջազգայնորեն գործող համապատասխան օրենքի, գերիներին բաց են թողնում տուն, իսկ Ադրբեջանը դա չի անում:

Կաբինետում ներկայացված են բանակի անցած հերոսական ուղին. մարտական դրվագներով լուսանկարներ, Արցախի հերոսների դիմանկարները եւ այլն:

Ժամավենը կտրեցինք երկուսով՝ ԼՂՀ նորանշանակ Պաշտպանության նախարար Մովսես Հակոբյանն ու ես: Ներկա էին պետական ու կառավարական այրեր, սպաներ, ուսանողներ, հ/կ ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ:

28.06.2007

❁

Շատ եմ հուզված: Երեկ հերթական անգամ պետական մակարդակով նշեցինք Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օրը, իսկ այսօր «Հույսի ճանապարհում» կարդացի շուշեցի երկու լավ մտավորականների՝ հումանիտար քոլեջի

տնօրեն Ալբերտ Խաչատրյանի եւ ԼՂՀ վաստակավոր ուսուցիչ Լարիսա Ղազարյանի բարեմաղթանքի խոսքը՝ թերթի առաջին համարի հետ կապված: Գրել են. «Մենք սրտի թրթիռով ընթերցեցինք «Հույսի ճանապարհի» անդրանիկ համարը: Ողջունելի է կազմակերպության ու նրա ղեկավարի՝ Վերա Գրիգորյանի պրպտումներով լեցուն գործունեությունը: Բազմաթիվ հետաքրքիր ձեռնարկումների շարքը համալրվեց եւս մեկով. սեփական ամբիոն՝ մամուլ ունենալու նախաձեռնությամբ: «Հույսի ճանապարհ» անվանումը առանձնակի խորհուրդ ունի, այն երկար սպասումի, համբերության, ուժի, կամքի, արիության առհավատչյան է:

Թող խանձարուրում գտնվող «Հույսի Ճանապարհը» առնականանա, ծավալվի ու դառնա թշնամու ճիրաններում գտնվող հայորդիների տունդարձի պողոտա…

Օնունդդ շնորհավոր, «Հույսի Ճանապարհ:

Թող հայ մտքի սլացքը բազմապատկվի:»:

30.06.2007

❁

Տարիներն անցնում են, անհայտ կորած մեր տղաների երեխաները՝ մեծանում, մեծ կյանք մտնում: Հոգեկան բավարարություն եմ զգում, երբ մտածում եմ, որ եղել են պահեր՝ սատարել ենք նրանց, ինչ-որ խնդիր լուծել ընտանիքի համար: Բա էլ ո՞ր օրվա համար է կազմակերպությունը: Վարչության անդամներով արդեն մասնակցել ենք 38 հոգու պսակադրությանը: Որպես կանոն՝ կազմակերպության անունից ոսկե մատանի ենք նվիրում նորապսակներին: Երկու ընտանիքի համար նույնիսկ երկուական ոսկի գնեցինք. անհայտ կորած ազատամարտիկներ Մովսես Օհանյանի Իգոր եւ Արթուր, Գրիգորի Ալուխանյանի՝ Մարատ եւ Ռոման որդիների համար: Թող տղաների բախտն իրենց հայրերին բաժին ընկածից հեռու լինի, թող ապրեն առանց անհաջողության ու տառապանքի:

5.07.2007

❁

Այսօր իմացա, որ «Ազգ» թերթը իր հուլիսյան համարներից մեկում տեղեկատվություն է տպագրել մեր թերթի անդրանիկ համարի մասին:

«Ուշագրավ է, որ Միությունը,- գրել է «Ազգը»,- ունի նաեւ իր օրհներգը, որի հեղինակը ԼՂՀ պե-

տական օրհներգի հեղինակ Արմեն Նասիբյանն է: Իսկ տեքստն էլ պատկանում է վերոհիշյալ Միության ստեղծման նախաձեռնող, կազմակերպող եւ նախագահ-տնօրեն Վերա Գրիգորյանին»:

7.09.2007

❋

Նոր ենք ըստ էության զգում հուշաթանգարանի գոյության նշանակությունը, մեր կատարածի արժեքը: Գնալով ընդլայնվում է թանգարան այցելողների թիվը: Այնտեղ արդեն հայրենյաց դասեր են անցնում...զինվորական եւ ուսանողա-աշակերտական կոնտինգենտի հետ: Արդեն մտածում եմ անհայտ կորած ազատամարտիկների թեմայով օրինակելի շարադրությունների մրցույթ հայտարարելու մասին: Այս հարցով կդիմեմ քաղաքապետարանի կրթության բաժնին: Կարծում եմ, կընդառաջեն: Թող արտահայտվեն երեխաները: Դա կլինի տղաների հասցրած կատարածն ու հիշատակը մոռացության չտալու միջոց:

24.01.2008

Այսօր պատահեց մի բան, որի մասին հիշելուց հիմա էլ եմ փշաքաղվում: Մարտունու մի բնակչուհի, ներկայացավ «Ռայա» (այնքան հուզվել էինք, որ ազգանունը չհարցրի էլ), երկու եւս սեւազգեստ կնոջ հետ եկավ մեր գրասենյակ: Ասաց՝ ամուսնուս փակ դագաղը պատերազմի ժամանակ հանձնել ենք հողին, բայց օրերս ադրբեջանական բանտից (Բայիլից) տուն վերադարձած կաղարծեցի մի 17 տարեկան տղա (ժամանակ առաջ արոտի տարած ոչխարներին փնտրելիս վրա հասած թանձր մշուշում ձիով սխալմամբ հայտնվել էր հակառակորդի տարածքում ու գերվել) եկավ մեր տուն ու թե՝ Ռաֆիկ ձյաձյան խնդրել է ձեզ հայտնել, որ ինքը կենդանի է…

- Այնքան անսպասելի էր, որ հարցրի՝ Ռա՞ֆիկն ով է, այ տղա, ո՞ւմ մասին ես խոսում: Թե՝ քո ամուսնու, Ռայա տյոտ, դու (տվեց ամուսնուս ազգանունը) Ռաֆիկի կինը չե՞ս: Աչքերս մի պահ մթնեցին, ոտքերս թուլացան: Ասացի՝ մտածո՞ւմ ես ինչ ես ասում, իմ ամուսինը զոհվել է: Չէ, ասաց, նա կենդանի է, բանտում ես ամբողջ ժամանակ իրենց կամերայում եմ եղել: Երեւի գիտեր է, որ չեք հավատալու, ասաց՝ մերոնց որ ասես՝ թոնրում հաց թխելիս սխալվել՝ ծհանի սառը ծայրի տեղ շիկացած մասից եմ բռնել ու այրել աջ ձեռքիս բիլա-

կը, այ, տես՝ սպին հիմա էլ կա… Էս որ ասես, կինս կիմանա, որ իրոք կամ, չեմ մեռել: Տյոտա ջան, ես նրան խոսք եմ տվել ու չէի կարող տեղ չհասցնել նրա աղաչանքը: Սկեսուրս որ լսեց այդքանը, ինֆարկտ խփեց, անդամալույծ դարձավ…

Այդ հանդիպմանը ներկա էին եւ մեր աշխատակից Գայանեն ու այն ժամանակ լույս տեսնող մեր «Հույսի ժանապարհ» թերթի խմբագիր Ռոբերտ Եսայանը: Բոլորս էլ ցնցվել էինք: Ի՞նչ ասեինք այդ կնոջը: Պատերազմում ամեն ինչ էլ պատահում է, բայց տուժած կողմ ու իշխանություն՝ միասին որ տարիներով պատեպատ ենք խփվել, կարողացե՞լ ենք հաջողության հասնել: Թուրքը հա՜ ժխտում է մերոնց առկայությունն այնտեղ: Խորհուրդ տվեցի դիմել Կարմիր խաչին…Գուցե նրա՛նց հաջողվի մի բան անել՝ ասացի:

9.02.2008

❁

Գառնիկ Աղաջանյանի մոր՝ Անգինի համար քաղցկեղն այլեւս ժամանակ չէր թողել… Գնացինք տեսության: Ավելի ճիշտ՝ հրաժեշտի… Մի քանի ժամ հետո հոգին Աստծուն էր ավանդելու: Դժվարանում էր խոսել: Սկզբում չճանաչեց ինձ: Սիրտս սեղմվել՝ խեղդում էր: Այնքան ուժեղ, արիական

Անգին ստվեր էր մնացել՝ այն էլ էր հալվում: Մեր կազմակերպության, վարչության ամենաակտիվ անդամն է եղել: Ինչե՞ր չենք տարել նրա հետ, ախր Սպարտակն ու Գառնիկն էլ իրենց հերթին են ընկերներ եղել, նույն համակարգում ծառայել, կողքկողքի կռվել, նույն մարտում էլ անհայտ կորել: Չորս օրից հետո պիտի նշենք մեր տղաների հիշատակի հերթական տարեդարձը, եւ առաջին անգամ՝ այնտեղ ներկա չի լինի Անգինը…

Հիվանդի ծանր շնչառությունը մի պահ ընդհատվեց, ու մենք լսեցինք նրա պարզ ձայնը.

- Մատաղ ինիմ քեզ, Գագի՞կ, ծեր լոխճին ցավը տանիմ, յեշեցեք հա՞, մեյդս վեր տրած էլ ինի, 29-ին կքյինաք հուշարձանեն կոշտը, ժղուվուրթեն նհետ նշիք տղորցը օրը… Սկանումը՞ք, անպայման կքյինաք…

Հոգեհանգստի սեղանին սեղանապետն այդ մասին բարձրաձայնեց, եւ մարդիկ շատ հուզվեցին լսածից: Այս ի՞նչ ժողովուրդ, ինչպիսի՞ հրաշք մայրեր ունենք: Հենց դրանում է թաքնված հաղթանակի արմատը:

24.06.2008

❁

Այսօր՝ Անհայտ կորածների միջազգային օրը, մեզ՝ վարչության կազմին ու կազմակերպության եւս մի քանի անդամի, ընդհանուր թվով՝ 16 հոգու, ընդունեց ԿԽՄԿ Ստեփանակերտի գրասենյակի ղեկավար Ժակ Բարբերիսը:

Դիտեցինք «Արաբո» ջոկատի տղաների ճակատագիրը մասնակիորեն ներկայացնող՝ զարհուրելի փաստավավերագրական ժապավենը: Տղաների դիակների հետ ի՞նչ են արել թուրք գազանները… Նկատեցինք, որ նույն դիակները, կիսով չափ իրար գլխի տված՝ ընկած երեւում են մի քանի տեղում… Սրիկանե՞ր, դիակներով էլ են կեղծարարություն անում: Մենք հո գիտենք, թե հենց վերջին մարտում ջոկատն իրականում քանի հոգուց է եղել կազմված, եւ որ բացառված չէ, թե նրանցից կարող են լինել եւ կենդանի մնացածներ:

Պարոն Բարբերիսն ասաց, որ ԿԽՄԿ-ի գլխավոր նպատակն է պահպանել տուժածների կյանքն ու առողջությունը, թեթեւացնել նրանց վիճակը եւ ապահովել, որ հակամարտության (այս բառից գժվում եմ՝ մեր պարագայում ժամանակակից երկամյա լայնածավալ պատերազմը մեղմորեն կոչել հակամարտությո՞ւն) հետեւանքները (հիվանդություններ, վնասվածքներ, տարերք) վտանգի տակ չդնեն նրանց կյանքն ու ապագան:

Խոսեցինք այն մասին, որ ԿԽՄԿ-ն չպետք է իր տեսադաշտից դուրս թողնի մարդկանց կենսունակությունը վերականգնելու արմատական նպատակը: Որ անհայտ կորածների ընտանիքներին, հարազատներին օգնություն կարելի է տրամադրել տարբեր ձեւերով՝ ոչ միշտ սննդամթերքով կամ դրամական գումարով: Բարբերիսն ասաց՝ հարկավոր է շեշտը դնել կենսական ծառայությունների մատուցման ավելի օպտիմալ ձեւի վրա, այնպիսի օգնության, որը վերարտադրողական հատկություն ունենա… Դեռ պարզ չեմ պատկերացնում, թե կոնկրետ ինչի մեջ պետք է արտահայտվի դա, բայց հարցի նման դրվածքի հետ լիովին համաձայն եմ. միանվագ թեթեւ օգնությունները տան Կերակրողին կորցրած ընտանիքի համար խնդիր չեն լուծում:

30.08.2008

❁

Այսօր ներկա էի մայրաքաղաքի թիվ 12 դպրոցի հերթական ուսումնական տարվա Առաջին զանգին: Ամեն տարի կրկնվող արարողությունը, մեկ է, հետաքրքիր էր: Եվ ամենահետաքրքիրը երեխաների հուզմունքն է, որ փոխանցվում է նաեւ մեզ: Միջոցառմանը ներկայացել էինք խմբով. ՀՄՊ եւ

աշխատանքի վետերանների միության նախագահ Ա. Մարտիրոսյանը, թոշակառու բժիշկ Ե.Աթայանը, սպաներ ԼՂՀ ՊԲ ուսումնական հրետանային դիվիզիոնից, ՊԲ քիմծառայությունից եւ այլոք:

Ինչպես միշտ՝ նման պարագայում, Սպարտակիս Առաջին զանգը հիշեցի…Թող էլ պատերազմի երես չտեսնենք, այդ մանուկները թող երջանիկ ապագա ունենան:

1.09.2008

❋

Մեծ Բրիտանիայի խորհրդարանի լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսը Արցախում էր… 67-րդ այցով: Միայն հիանալ կարելի է արդեն շատ տարեց այդ կնոջ կենսունակությամբ եւ հայ ժողովրդի ու մասնավորապես նրա արցախյան հատվածի հանդեպ անդավաճան նվիրվածությամբ: Աստված օրհնի Ձեզ ու Ձեր շառավիղներին, լեդի: Բարոնուհու այս մեկ այցը կապված էր իր ստեղծած եւ իր անունը կրող Վերականգնողական կենտրոնի 10-ամյա հոբելյանի հետ:

Տես որ, սակայն, նա մեր հուշաթանգարան էլ եկավ: Պիտի շեշտեմ՝ ոչ առաջին անգամ… Ուրախացավ նոր ցուցանմուշներ տեսնելով: Տառացիորեն ասաց հետեւյալը. «Գլուխ եմ խոնարհում, Վե-

րա, այս տղաների ու Ձեր առջեւ: Այս հուշաթանգարանը վկայում է այն մասին, որ հայ ժողովուրդն այս հողի վրա ապրել է դարեր ի վեր»: Ասացի՝ բարոնուհի, մեր սիրելի հարազատ, մեր ավագ քույր, այդ մե՛նք պետք է խոնարհենք, եւ խոնարհում ենք, գլուխներս Ձեզ պես պատմական անձի (այո, Ձեր անունն, իրոք, արդեն պատկանում է պատմությանը, համենայնդեպս՝ հայ ժողովրդի պատմությանը՝ անժխտելիորեն) մեծության ու վեհանձնության առջեւ…Ամոթ էլ է ասելը, բայց հուզմունքից քիչ էր մնում լաց լինեի, ախր այդ կինը մի անբացատրելի ձեւով է անվերադարձ մերված մեր ցավին ու խնդիրներին:

23.09.2008

❁

Արցախ են ժամանել կանադահայ բարերարներ Ձենեթ ու Քեթրին Զաքարյանները եւ Մկրտիչ Մալխասյանը: Եկել են պատերազմից տուժած Զրաբերդ գյուղի վերակառուցմանն օժանդակելու:

Այցելեցին մեր թանգարան: Գլուխ խոնարհեցին տղաների նկարների, ցուցանմուշ-մասունքների առջեւ, խոստացան աջակցել օրացույցի, թերթի լույսընծայմանը: Խոստման տերը կմնան թե ոչ՝ չեմ կարող ասել, բայց բոլոր դեպքերում հաճելի է,

երբ զգում ես, որ ցավդ կամ խնդիրդ հասկանում է անգամ դրսից եկածը (ինքս ինձ հետ ինչո՞ւ անկեղծ չլինեմ. երբեմն ավելի՝ քան ներսիններից ոմանք):

Ի՜նչ արած, կյանք է…

24.09.2008

❁

Հոկտեմբերը մեզ համար Ծննդյան ամիս է, 10-ը՝ ծննդյան օր. 1998թ, այդ օրը ստեղծվեց, իրավական ուժ ստացավ մեր կազմակերպությունը: Իսկ այս տարվա հոկտեմբերը հատկանշական է նաեւ նրանով, որ լրանում է ԱԿԱՀՄ գործառնության ու գործունեության 10 տարին…

Շատ բովանդակալից ու պատկառելի ձեւով նշեցինք մեր սրտին թանկ այդ հոբելյանը: Ներկա էին պետության, օրենսդիր ու գործադիր իշխանության առաջին դեմքերը, պատասխանատու աշխատողներ, քաղաքական ու հասարակական գործիչներ, հյուրեր Հայաստանից եւ հեռու ու մոտ արտասահմանից: Զեկուցումս, որում, ինչպես հայելու մեջ՝ արտացոլել էի տաս տարում մեր արածթողածը, ընդունվեց ջերմորեն: Առավել հուզիչ էր մեր պատրաստած «Տասնամյա գոտեմարտ՝ ժամանակի հետ» փաստավավերագրական կինոժապավենը:

Ա՜խ, տղաներ, տղաներ, երանի հնարավոր լիներ՝ ձեր հեռուներից տեսնեիք ու իմանայիք այս ամենի մասին: Որպես դիմակայության դեղ, մեր տառապող տղերք:

10.10.2008

❋

Օրերս ներկա էի «Հայրենյաց պաշտպան» երիտասարդական ճամբարի հանդիսավոր փակմանը: Առաջին փորձն է: Շուրջ 100 ապագա զինվորներ են հանգստացել ու կոփվել այստեղ: Նրանց հետ պարապել են ԼՂՀ պաշտպանության բանակի սպաները: Ֆիզիկապես կոփվել ու ռազմական պատրաստություն են ստացել ճամբարականները:

Որպես Բանակ-հասարակություն համակարգող խորհրդի անդամ՝ նրանց կոչեցի ամբողջ կյանքում ձգտել գործուն հայրենասեր լինելուն, նվիրեցի «Հույսի ճանապարհ»-ի նոր լույս տեսած՝ հերթական համարը եւ իմ գրքերից որոշները: Աստված, պահիր, պահպանիր իմ երկրի խաղաղությունն ու այս դեռահասներին, պատանիներին, թող կատարվի նրանցից յուրաքանչյուրի նվիրական երազանքը:

15.10.2008

❋

Այսօր հոգիս տակնուվրա եղավ: Բժշկական քոլեջի քույրական կուրսերից էին ծանոթանալու եկել հուշաթանգարանին, ու երբ բոլոր սենյակները շրջելուց հետո մտան այնտեղ ու դիտեցին բոլոր ցուցանմուշները, աղջիկներից մեկն ուղղակի երդման պես ասաց. «Աստված չանի՝ նորից պատերազմ լինի, բայց եթե լինի, ես առաջին իսկ օրից կլինեմ կռվող զինվորի կողքին, որպեսզի երբ տղաները վիրավորվեն՝ նրանց ժամանակին առաջին օգնություն ցույց տամ ու հանեմ կրակի գծից»: Չգիտեմ ինչու՝ այդ պահին ինձ թվաց, թե որդուս հետ ճիշտ հակառակն է եղել, այսինքն՝ երբ վիրավորվել է, կողքին դարմանող չի եղել…Հետո ուշքի եկա ու մտքումս կշտամբեցի ինձ. դու գիտես, հրամանատարն էլ, ընկերներն էլ պատմել են, որ նա թեժ մարտում գոռալով առաջ է անցել՝ կրակելով հակառակորդի վրա… Ու եթե արդեն վիրավորված՝ ընկել է, ապա կողքին հայտնվել կարող էր միայն թշնամու սանիտարը: Տեր Աստված, այս ինչե՞ր եմ գրում, մտքերս ասես գինովցածի մտքեր լինեն…

Ուսանողների համար ցուցադրեցինք մեր պատրաստած փաստագրական ֆիլմերից: Նրանց խոհուն հայացքներն ու աչքերում լճացած արցունքը խոսքից ավելին ասացին ինձ: Ապրեք, երեխաներ,

թող երբեք պատերազմի ձայն չլսեք: Ձեր գործի գիտակը դարձեք, ու թող լինի այնպես, որ միայն խաղաղ օրերի տկարներին բուժօգնություն ցույց տաք:

16.10.2008

❁

Առավոտ եկա գրասենյակ թե չէ՝ աշխատասեղանիս «Ազատ Արցախ» թերթի այսօրվա համարը տեսա: Բացեցի եւ այնտեղ տպագրված տեսա ԼՂՀ ԱԿԱՀՄ «Հայրենիք եւ Հավատ» մեդալի հիմնադրման մասին Որոշման տեքստը: Գործի սկիզբը դրված է, մնում է այն ավարտին հասցնելը:

Կհասցնե՛մ: Քար էլ պետք լինի կրծելու՝ կկրծեմ, բայց կհասցնեմ:

16.12.2008

❁

Լուր առանք, թե առաջածորցի անհայտ կորած ազատամարտիկ Մհեր Թեւոսյանի ուսանողուհի դուստրերից մեկը՝ Դիանան, Երեւանում մահացու ելքով վրաերթի է ենթարկվել, մյուսն էլ՝ Ինգան, ծանր վիրավորված է: Ասացին՝ մայրն ու եղբայրը մեկնել են. դիակը հնարավոր չէ բերել: Հուղարկավորությունը տեղի է ունենալու Երեւանում:

Երեք հոգով՝ ես, Շուրան ու Ժաննա Թավրիզյանը, փութացինք Առաջածոր՝ Միերի մոր մոտ… Տեսարանն ավելի քան ծանր էր. մահացածի տատը ճակատագրի երկրորդ հարվածից իրեն փետում էր… Ցավակցեցինք, բայց որքա՜ն դժվար է նման պարագայում մխիթարանքի խոսք գտնելը: Մեզ հետ սննդամթերք էինք տարել, գումար էլ տվեցինք: Դե, հայի ադաթ է, ընտանիքն էլ՝ Կերակրողին կորցրած… Կազմակերպության անունից սգո ծաղկեպսակ դրեցինք Դիանայի նկարի մոտ:

27.04.2009

❁

Այս տխրություններին վերջ չի՞ լինելու… Միերի կինը՝ Սուսաննան, վախենալով մյուս աղջկա կյանքի համար, տղայի՝ Վահանի հետ լիովին տեղափոխվեց Երեւան: Աստված պահի Սեյրան Օհանյանին, օգնեց՝ աշխատանքի դասավորեց նրան: Ծեր տատը մնաց իր օջախում… Ժողովրդական դրամայի անվերջանալի թվացող շղթայի եւս մեկ օղակ:

25.05.2009

❁

…Առաջին անգամ նշվում էր ԼՂՀ Ոստիկանության (ոչ թե միլիցիայի) օրը: Ռոզա Աթասյանի, Անգին Աղաջանյանի եւ իմ ստորագրությամբ հանրապետական թերթում շնորհավորական ուղերձ հղեցինք ՆԳՆ հասցեով: Երեքիս որդիներն էլ՝ իմ Սպարտակը, Ռոզայի Մովսեսն ու Անգինի Գառնիկը, ծառայում էին ՆԳ համակարգում… Հանդիսավոր ժողովը հեռուստատեսությամբ դիտելուց հետո Ռոզան թե՝ եկեք գնանք նախարարի մոտ: Ես ու Անգինը. «Ինչի՞ համար»: Ռոզան. «Նրան ասելիք ունեմ: Գալի՞ս եք, թե՞ ոչ»: Գնացինք: Նախարարը, որ Բակո Սահակյանն էր, նորմալ ընդունեց մեզ: Ռոզան շարադրեց ասելիքը. «Պարոն նախարար, մեր տղաները այս շենքից են իրենց հերթական, բայց, ինչպես պարզվեց՝ վերջին մարտին գնացել… Վատ չէր լինի, չէ՞, եթե հանդիսավոր ժողովում տրվեին եւ նրանց անունները»: Կոռեկտ, բայց ներսից թեժ խոսք էր… Նախարարը մեղմ արձագանքեց. «Ոչ նրանց, ոչ էլ ձեր մասին մենք չենք մոռանում: Դուրս գալուց հերթապահի մոտ բան կա՝ կվերցնեք ու կհավատաք, որ իրո՛ք չենք մոռացել»: Հետո նա հարցուփորձ արեց կազմակերպության մասին՝ ինչ ծրագրեր ունենք, ինչով կարող է օգտակար լինել եւ այլն: Պայմանավորվեցինք, որ սկզբի համար կհոգա ԱԿԱՀՄ եւ տղաների մասին

պատմող գրքի տպագրության ծախսերը: (Խոստացավ եւ կատարեց խոստումը): Իսկ հերթապահի մոտ յուրաքանչյուրիս ծրար էր սպասում՝ 100-ական դոլարով:

Հետագայում էլ ՆԳՆ-ից և պետավտոտեսչությունից այս կամ այն տոնի կամ որեւէ իրադարձության հետ կապված՝ նույն, ավել կամ պակաս չափի գումար երբ ստանում էինք, ես դրանք, հենց առաջինից սկսած, չէի ծախսում, եւ ահա կուտակվել էր մոտ 300 հազար դրամ: Երկար մտածելուց հետո, նույնիսկ մեր թաղի բնակիչների հետ խորհրդակցելով, վճռեցի իրագործել մեր թաղի փոքրիկ հրապարակում աղբյուր-հուշարձան կանգնեցնելու մտահղացումը: Գումարային տարբեր ծախսեր արեցի՝ հուշարձանի նախագծի ստեղծման եւ այլ անհրաժեշտ հարցերի լուծման համար, բայց երբ եկավ նախագծին գործնականորեն կյանք տալու պահը, չգիտեմ ով՝ «խոփը քարին դեմ տվեց»… Դարեր ի վեր մեր նախնիները բարի կամքի թելադրանքով անձնական միջոցներով եւ անգամ սեփական ձեռքերով նման աղբյուրներ են կառուցել-թողել սերունդների համար, այդպիսով պահելով նահատակների, հայրենյաց նվիրյալների հիշատակը: Ինչո՞վ էր տարբերվում իմ ցանկացածը նրանց արածից: Ինչու այնքա՜ն պարզ հարցը վերածվեց թնջուկի՝ մինչեւ հիմա էլ չեմ հասկանում: Մեղավորներ չեմ փնտրում, ուղղակի հարցնում եմ:

Մարդկային սրտի ցավն ինչպիսի՜ գույներ կարող է ունենալ…

20.06.2010

❁

Այսօր ցերեկով փողոցում հանդիպեցի Հայր Հակոբին: Վերհիշեցինք հուշաթանգարանի բացման օրը: Օրհնող-օծողն ինքն է եղել…Ասացի՝ այն ժամանակ երբ բոլորը ցրվեցին գնացին ու ես մենակ մնացի սրահում, ինձ թվաց, թե լսում եմ Աստծո ձայնը, որն ասում էր.«Նրանք դեռ կան, մի հուսահատվիր, ձեր համբերելուն քիչ է մնացել»: Եվ Հայր Հակոբը բացատրեց, որ դա իմ ներքին ձայնն է եղել, որ հնչել է Աստծո բերնով: Ահա թե հավատն ինչ ուժ ունի: Գրեցի այս տողերը, հիմա էլ Պարգեւ Սրբազանի խոսքը հիշեցի: Հուշարձանի մոտ զույգ թվով ծաղիկներ դնողներ եղան, եւ նա դիտողություն արեց. «Ողջերին ու նահատակներին մի խառնեք, ով հավատում է տղաների վերադարձին, այստեղ գալուց թող կենտ թվով ծաղիկներ վերցնի ձեռքը»: Մտածեցի, թե աթեիստի համար որքան դժվար պիտի լինի կորստին դիմանալը…Դարեր շարունակ մեր հավատքն է պահել մեզ ամենածանր պահերին:

12.09.2010

❁

Անակնկալ. պարոն Խաչատուր Դոդաքյանն է եկել: Փարիզից: Ավելի շուտ՝ Ալֆորվիլից, որին Սենա գետը եւ ընդամենը 2 կիլոմետրն են բաժանում Ֆրանսիայի մայրաքաղաքից:

Եկել է Երեւան՝ մասնակցելու Հայաստանի անկախության հռչակման 20-ամյա հոբելյանին եւ որոշել, որ Արցախն էլ պիտի տեսնի: Ինձ համար հաճելի լուր էր դա, ախր ժամանակին մոտ մի ամիս ապրել եմ իրենց տանը… Աչքիս առաջը եկան տիկին Ալիսի մեղմանուշ դեմքն ու ձայնը, երբ հուսադրում էր ինձ՝ լավ կըլլա, Վերա ջան, ամեն ինչ լավ ըլլալու է…

Պարոն Խաչատուրն էր ու Գագիկ անունով մի երիտասարդ: Նրանց տարա մեր տուն: Երեք օր հյուրընկալվեցին մեր հարկի տակ: Բնության գրկում եղանք, արցախյան խորոված ըմբոշխնեցին, վերհիշեցինք ալֆորվիլյան իմ օրերը: Տխրեց, երբ իմացավ, որ Սպարտակի հարցում առաջխաղացում չկա… Երբ միս գնելու էի գնում, ետեւիցս կանչեց. «300 գրամ, տիկին Վերա»: Շուրան ծիծաղեց. «Սա ձեր Ֆրանսիան չի է՞, պարոն Խաչատուր, 300 գրամը արցախցու սեղանին մեկ հոգու բաժինն է»: Երբ խորոված՝ արդեն վայելում էինք, ուտել-խմելում շատ զուսպ Դոդաքյանն ասաց. «Ճիշտ էիք, ջանըմ, ղարաբաղյան սա քեբաբը

մոռնալու փան չէ»:

Եղան մեր թանգարանում: Գիտեի, որ պարոն Խաչատուրն ընդհանրապես չի սիրում ցույց տալ իր զգացմունքները, բայց տեսա՝ շատ է հուզվում…

Կարծում եմ Արցախից ու մեզնից գոհ գնացին:

22.09.2010

❁

Մեր «Գթասրտության ժամանակը» ֆիլմն արժանացավ Եղիշեի անվան կառավարական մրցանակի: Մրցանակը, չգիտես ինչու, շնորհվել է ոչ թե ստեղծագործական խմբին, այլ միայն ռեժիսորին: Բայց մեկ է, անչափ ուրախ ենք, որովհետեւ կարեւորը փաստն է, եւ ապա ռեժիսորն էլ ոչ այլ ոք է, քան՝ մեր սիրելի Հրայր Ավետիսյանը: Նա մեզ շատ է օգնում:

Ժամանակին Հրայրի ընտանիքում դժբախտություն էր պատահել. մահացել էր առաջնեկը… Եվ ահա 10 տարի անց, երկու աղջկա գլխին, նրանց հարկի տակ նորից մանչ երեխայի ձայն հնչեց: Գնացինք սրտանց կիսելու Հրայրի, տիկնոջ՝ Նանարի եւ նորածնի հորական տատի՝ հանրապետության վաստակավոր ուսուցիչ Իրինա Գաբրիելյանի գոհությունն ու հրճվանքը: Իսկ երբ նորամա-

նուկն անցավ կյանքի առաջին 40 օրվա սահմանագիծը, եւ նրան տարան Շուշիի Ղազանչեցոց եկեղեցի՝ մկրտելու, կնքահոր ու կնքամոր դերում մեր ամուսնական զույգն էր…

Ի՜նչ խորհրդավոր ու հոգելից երեւույթ է հատկապես մանկան մկրտությունը: Ասես այդ օրն է միայն օրինականացնում նրա մուտքը մարդկության աշխարհ:

18.01.2011

❁

Օրերս ԿԽՄԿ Ստեփանակերտի գրասենյակի աշխատակազմի ղեկավար Էդգար Սարգսյանի եւ հումանիտար օգնության բաժնի պետ Միերի հետ եղանք Հադրութի շրջանում. Տրախտիկ, Ազոխ, Տումի գյուղերում եւ Հադրութ քաղաքում: Մեր նոր ծրագիրը մեկնարկ է վերցրել: Անհայտ կորած ազատամարտիկների 3 ընտանիքի տրամադրեցինք. մեկին՝ կթան կով հորթի հետ միասին, երկրորդին՝ 6 ոչխար, երրորդին 6 մեղվաընտանիք՝ փեթակով: Մեծթաղերցի Խաչիկ Բեջանյանի ընտանիքը գերադասեց բեռնաձի ստանալ՝ ապահովեցինք: Հադրութցի Փիրուզ Գասպարյանը նույնպես հրաժարվեց կովից (տանը տղամարդ չկա՝ անասնակերի հարցն ու հարակից խնդիրները լու-

ծի), փոխարենն ստացավ գերմանական մակնիշի կարի մեքենա, 60 մետր գործվածք, 6 կգ թել, 6 տուփ էլ ասեղ:

Դրանք բոլորն էլ ապրուստի «վերարտադրողական» միջոցներ են, ու հենց դա է նոր ծրագրի առավելությունը նախկիններից:

15.06.2011

❋

Այս էլ քանիերո՞րդ անգամ վարչապետ Արա Հարությունյանը մեզ նյութապես օգնեց՝ անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների երեխաների Ամանորյա տոնը ԱԿԱՀՄ դահլիճում պատշաճ նշելու:

Աստված երկար կյանք տա նրան:

24.12. 2011

❋

1994 թվականի ապրիլի 14-ին, երբ մոտալուտ պարտության դառնությունը ճաշակող Ադրբեջանի վարձած օտարերկրյա օդաչուները հերթական անգամ ռմբահարեցին Ստեփանակերտը, իրար ետեւից 2 ռումբ ընկավ մեր շենքի (Առաքելյան, 2ա) վրա: 49 բնակիչներ վիրավորվեցին:

Պատերազմն ավարտվելուց «որոշում» կայաց-

րինք՝ ամեն տարի այդ օրը հավաքվելու ենք բակի տաղավարում՝ միասին թեյ ու սուրճ խմելու եւ մեր գոհությունը հայտնելու Աստծուն առ այն, որ ռմբահարությունից մեր շենքից մահացողներ չեղան:

Որոշեցինք՝ այդպես էլ անում ենք: Դա մեզ համար վերածվել է յուրատեսակ ծեսի:

13.04.2012

❁

Այսօր 15-րդ անգամ պետականորեն նշեցինք մեր տղաների հիշատակի օրը: Պարզ երկինք էր, բայց արարողությունը նոր սկսված՝ մեկեն այնպիսի հորդ անձրեւ տեղաց, որ մտածեցինք՝ հիմա ժողովուրդը կնետվի դես ու դեն՝ գլուխը փրկելու համար: Արի ու տես, որ ոչինչ էլ չեղավ. ամեն ինչ շարունակեց ընթանալ նախագծված հունով:

Երկրի նախագահը եւ պետական մյուս այրերը նույնպես անհողդողդ կանգնել՝ լսում էին ելույթ ունեցողներին: Երբ Պարգեւ Սրբազանը խոսում էր, դեմքով առվակներ էին հոսում… Այդ պատկերը մինչեւ հոգուս խորքը ցնցեց ինձ: Միջոցառումն անխափան հասավ ավարտին:

Լավ ժողովուրդ ունենք, լավ էլ պետություն, Աստված տա, որ այն շուտով ճանաչվի աշխարհի երկրների կողմից: Չճանաչվի էլ, փույթ չէ, մենք

կանք մեր հողի վրա, կարողացել ենք պահել այն՝ կպահենք այսուհետեւ էլ: Այդ գործում մեզ կօգնի մեր հիշողությունը:

29.06.2012

❁

«Մեր» ռեժիսոր Հրայրի եւ օպերատոր (ՆԳՆ-ից) Արա Միրզոյանի ընտանիքների հետ Գանձասար՝ պատարագի էինք գնացել: Երկուսի երեխաներն էլ (այս անգամ՝ Հրայրի աղջիկները) մկրտվեցին այն-տեղ, եւ բոլորի կնքահայրը նորից Շուրան էր, կն-քամայրը՝ ես: Հոգեկան մեծ բավականություն եմ զգում, երբ Աստծո տանը մասնակցում եմ հոգեւոր արարողության:

7.07.2012

❁

Թաղավարդում էինք: Արցախյան պատերազ-մում զոհված թաղավարդցիների մարտական փառքի թանգարանի հանդիսավոր բացումն էր: Շատ բովանդակալից անցավ: Միջոցառման ավարտից հետո «Գոյամարտի» հեռուստալրագ-րողների հետ եղա Նինելենց տանը: Երեխաների համար քաղցրավենիքի ու էլի դեսուդենի «հոգե-պահուստ» էի տարել ինձ հետ: Ամուսինն էլ, երե-

խաներն էլ ջերմ դիմավորեցին մեզ: Չլիներ պատերազմը, նրանք իմ թոռները կարող էին լինել… բայց էլի իմն են, իմն էլ եմ համարում: Նրանց խաղաղ մանկության եւ ապագա հասուն կյանքի երջանկության համար աղոթում եմ համարյա այնպես՝ ինչպես Ինգայիս երեխաների համար: Նստեցինք, զրուցեցինք, համատեղ ապրած անցյալը հիշեցինք: «Գոյամարտցիները» զարմացել էին մեր մտերմության չափով, բայց զարմանալու բան չկա. Նինելը եղել է իմ հարսը, այդպիսին էլ մնալու է իմ սրտում եւ ուղեղում, նա ինձ իմ Սպարտակի մասին է հիշեցնում… Եվ շնորհակալ եմ, որ ամուսինը՝ Եղիշն էլ հասկանում եւ ընդունում է դա: Լավ տղա է, Աստված հաջողության մեջ պահի նրան:

Ստեփանակերտ վերադառնալու ճանապարհին, Սարուշենի մոտ եգիպտացորեն էին խաշում՝ տաք-տաք վաճառում անցորդներին: ՊԲ ռազմահայրենասիրական բաժնի ավագ սպա Կարո Համբարձումյանը մեզ պատվեց այդ բարիքով, իսկ մայոր, պատմական գիտությունների թեկնածու Միեր Հարությունյանը կես-կատակ, կես-լուրջ ասաց. «Գիրս մնա հիշատակող… Լավ է ասված, չէ՞: Տեսնես որեւէ մեկն ինչ-որ ժամանակ-որեւէ տեղ կհիշի-հիշատակի՞ սրա մասին»:

Երբ տուն հասա, հասկացա, որ այդ տեղը պիտի լինի հենց այս օրագիրը…

20.08.2012

❁

Տատս կենդանի լիներ, կասեր՝ ճակատդ շա՞ն ճակատ է, բալա… Այս մի քանի տարում մեդալի համար, հաշվել եմ, ուղիղ 36 անգամ Երեւան եմ գնացել, շուրջ 100 անգամ էլ զանգել՝ բանակցել, հետաքրքրվել, խնդրել, շտապեցրել… Մի մասը Երեւանում են պատրաստում, մյուսն էլ, ասում են, եվրոպական արտասահմանի ինչ-որ երկրում: Երբ ստանան՝ իմաց կտան: Օրը օրվա ետեւից, ամիսն՝ ամսվա, տարին՝ տարվա անցնում են, խոստացողը՝ խոստանում, իսկ ապրանքը չկա ու չկա: Գիտեմ, որ բազարից կուլա առնել չէ, բայց, մեկ է, նեղվում եմ:

30.08.2012

❁

2006 թվականի մարտին էր: Երկու պատանիների հետ թանգարանային սրահի դռան առջեւ կանգնած մարդը հարցրեց. «Վերան Դո՞ւք եք»: Ասացի՝ այո: Թե՝ կարելի՞ է մտնել սրահ: Իհա՜րկե: Նրանք դիտեցին ամեն ինչ, հետո տղամարդը հարցրեց. ուզում եմ Ձեզ համար ուրեւէ բան անել, առավել ինչի՞ կարիք ունեք: Ասացի՝ տղաների մասունքների տեղադրման համար (անձնական իրեր, փաստաթղթեր, պարգեւներ եւ այլն) դարա-

կով ցուցասեղանների: Գրպանից հանեց 300 հազար դրամ, թե՝ կիերիքի՞: Ասացի փողը պետք չէ, շնորհակալ կլինենք, եթե ցուցասեղանները բերվեն… Քանի՞ հատ է պետք: Երեք: Երեք օր անց դարակասեղանիկները Մարատ անունով մի տղա բերեց, տեղադրեց (ինչպես պարզվեց՝ տղամարդու զարմիկն է): Բայց վերջապես պիտի՞ նշեմ բարերարիս անուն-ազգանունը, թե՞ ոչ. Ալեքսանդր Ղազարյան: Ստեփանակերտում շատերը պարզապես «Շուրիկ» են ասում:

…Ցուրտ ձմեռ էր: Կուչ եկած՝ աշխատում էինք գրասենյակում, դուռը բացվեց ու ներս մտավ Շուրիկը: Իսկույն նկատեց լաբորատորայինից քիչ մեծ երկու էլեկտրական սալիկները, գլուխն օրորեց. «Սրանցո՞վ եք տաքանում»: Տղան՝ Դավիթը, հետն էր, հրամայեց՝ թռիր մոտակա խանութից էն մեծ էլեկտրական վառարաններից, «Հառլեմ» մակնիշի, երկուսը բեր: Վազեց, բերեց:

Անցավ մեկ ամիս՝ Շուրիկը նորից երեւաց մեզ մոտ: Հայրենասիրական երգեր «երգող» ծաղիկներ էր բերել թանգարանի համար: Ասաց՝ գիտե՞ս ինչ, Վերա, չգիտեմ՝ ուրիշներն ինչպես, իսկ ես մեր զոհվածներին ու անհայտ կորած տղաներին հիշելուց ասես մեղավոր եմ զգում ինձ, որ… նրանք չկան, իսկ ես կամ: Է՞լ ինչի կարիք ունեք: Ասացի՝ ուղեգորգերի՝ թանգարանային սրահում մեկնելու համար: Ժամանակ անց դա էլ բերեց: Բալի գույնի,

գեղեցիկ նախշերով մետրովի ուղեգորգ էր, հերիքեց ե՛ւ թանգարանային գլխավոր սրահին, ե՛ւ գրադարանին:

Այդպիսի սրտի տեր մարդու համար ինչպե՞ս չաղոթես Աստծուն, չասես՝ նրա լավի մեկը հազար արա… Երկար ժամանակ մտմտում էի, թե ինչպես կամ ինչով եմ մարելու այդ մարդու հանդեպ ունեցածս «պարտքը»: Երբ վարչությունը որոշեց «Հայրենիք եւ Հավատ» մեդալն ստեղծել ու պետության կողմից նախաձեռնությունը հավանության արժանացավ, առաջին միտքս Ալեքսանդր Ղազարյանին էլ պարգեւատրելն էր (մենք Որոշման մեջ հատուկ կետ ունենք՝ մեր կազմակերպության հետ սերտորեն համագործակցողներին, ծրագրերի կատարմանը նպաստողներին, շարունակական բարերարներին պատվոգրով ու մեդալով երախտահատույց լինելու վերաբերյալ): Եվ ահա երեկ՝ ԼՂՀ անկախության հռչակման 20-ամյա հոբելյանի օրը, մեր գրասենյակում, վարչության անդամներով, պարգեւը հանձնեցինք Շուրիկին: Թոռնիկի հետ էր: Հուզված ասաց՝ ախր ի՞նչ եմ արել է, ընդամենն ապրողիս պարտքն եմ կատարել…

2.09.2012

❋

Վերջապե՜ս: Երեւանի ոսկերչական գործարան - 1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ից զանգեց Աղասի Գաբրիելյանը եւ հայտնեց, որ մեդալը պատրաստ է, կարող եք գալ վերցնել: Առաջին քանակությանն անհրաժեշտ գումարը ԼՂՀ կառավարությունն ապահովել էր, փոխանցումը կատարեցինք: Երեք օր չանցած՝ ԼՂՀ նախագահի աշխատակազմից զանգեցին՝ եկեք բեռը ստացեք: Ինձ թվաց, թե մեջքիս ծանր քարերից մեկն ընկավ…

10.09.2012

❋

Այսօր մեր վարչության անդամների ներկայությամբ, հանդիսավոր պայմաններում «Հայրենիք եւ Հավատ» մեդալ հանձնեցի երկրի նախագահի աշխատակազմի ղեկավար Մարատ Մուսայելյանին, ԱԱԾ պետ Վիկտոր Քոչարյանին, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանին, քաղաքապետարանի կրթության, գիտության եւ սպորտի բաժնի պետ Կառլեն Մարգարյանին, ՀՀ Զինվոր-հասարակություն համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանին:

Նրանցից յուրաքանչյուրն իր գծով, ի պաշտոնե, սերտորեն համագործակցում է մեզ հետ, այս կամ այն չափով նպաստում մեր հարցերի լուծմանը:

1.11.2012

❁

Կազմակերպությանը հատկացված սենյակները խայտառակ վիճակում էին, հրետակոծություններից ավերված: Սանհանգույցն էլ էր ահավոր վիճակում: Հաշվարկ կատարելուց հետո գնացինք «ՍԲՍ» ընկերության տնտեսական ապրանքների խանութ՝ գնումներ կատարելու: Խանութի տեր Բորիս Բարսեղյանը կտրականապես հրաժարվեց փող վերցնելուց: Ասաց՝ ընտրեցեք ինչը որքան պետք է ու տարեք, մեր անհայտ կորած տղաների հարազատներից 1 դրամ իսկ չեմ վերցնի, թող իմ լուման լինի ձեր մեծ կարիքներին…

Հետո նա եկավ գրասենյակ՝ իր աչքով տեսնելու արդեն պատրաստ հուշաթանգարանը: Եկավ թանկարժեք նվերով՝ երկու զավակին գրկած մոր դրվագազարդ հուշարձանիկով: Ասաց՝ Աստված տա, այս մոր պես դուք էլ գտնեք ու գրկեք ձեր կորած զավակներին: Բորիս Սերգեեւիչը, կարելի է ասել՝ ավանդույթի է վերածել ԱԿԱՀՄ-ին նյութապես օգնելը, ու մենք շատ ենք շնորհակալ նրանից: Երեկ մենք վարչության կազմով ինքներս այցելեցինք նրան եւ հանձնեցինք արդեն հայտնի մեդալը:

Ժողովուրդը լավ խոսք ունի՝ «մեղքը՝ լալով, պարտքը՝ տալով»…

25.12.2012

Կամո Ներսիսյանի արածը կարելի է որակել իսկական արարք: Մարդը ԱԿԱՀՄ հաշիվն է փոխանցում 500 հազար դրամ՝ որպես տարեմուտի նվեր… Այդ փողով մենք անկողնուն գամված 30 հոգու համար մթերքներ ու մարտիության նվեր տարանք, ընդսմին հայտնելով, թե ում միջոցներով: Օրհնանքներ տեղացին «Արցախբանկի» վարչության նախագահ Կամո Սերգեյի Ներսիսյանի հասցեին: Այդ դեպքը միակը չեղավ. հետագայում էլ նույնպիսի գումարով պարոն Ներսիսյանը մի անգամ եւս օգնեց մեզ. ու մեր նիստերից մեկում որոշում կայացվեց առ այն, որ նա էլ պետք է պարգեւատրվի ԱԿԱՀՄ մեդալով:

Մեր վարչության անդամներով պարգեւը տիրոջը հանձնեցինք 2012 թվականի դեկտեմբերի 26-ին՝ բանկի գրասենյակում, իր աշխատողների ներկայությամբ:

28.12.2012

❋

Այսօր մեզ համար «հայտնության» օր էր…

Ինչքա՜ն գեղեցիկ անցավ ԼՂՀ պաշտպանության նախարար, պաշտպանության բանակի հրամանատար, Արցախի հերոս Մովսես Հակոբյանին մեր «Հայրենիք եւ Հավատ» մեդալը հանձնելու արարողությունը: Գեներալ լեյտենանտը մեր գրասենյակ եկավ «Գոյամարտ» ծրագրի ստեղծագործական խմբի հետ: Մեդալն ստանալով՝ նա զինվորական պատվի բռնեց, ասելով. «Ծառայում եմ Հայրենիքիս»: Մեր մայրերն անասելի հուզվեցին այդ տեսարանից, իսկ անհայտ կորած բուժքույր Նադյա Բաղդասարյանի ամուսին Հրանտ Հակոբյանը կատակեց՝ կասե՞ք, թե մեզնից ո՞վ է հայրը, ո՞վ՝ տղան, պարոն նախարար, ես Հրանտ Մովսեսի Հակոբյանն եմ, Դուք՝ Մովսես Հրանտի Հակոբյանը… Ներկաները լիաթոք ծիծաղեցին, այդ թվում բոլորից բարձր՝ նախարարն ինքը:

Անհայտ կորած ազատամարտիկ, հայտնի ֆուտբոլիստ, իսկ ինչպես պարզվել է վերջերս՝ նաեւ հիանալի բանաստեղծությունների հեղինակ Վարուժան Բաբայանի եղբայր Ռոբերտ Բաբայանը հուզիչ ելույթ ունեցավ. «Մենք գիտենք, պարոն նախարար, թե ինչպիսի մարտական ուղի եք Դուք անցել պատերազմի ընթացքում եւ ինչ գնահատականի արժանացել՝ եթե այդ մասին Արցախյան

շարժման իդեոլոգներից անգամ խստապահանջ Զորի Բալայանն է անվերապահորեն փաստում իր «Սուրեն Ադամյանի գումարտակը» հոդվածում… Մենք այն կարդացել ենք:

Մովսես Հակոբյանը շատ անգամ է օգնություն ցույց տվել մեր կազմակերպությանը: Մարդկանց դուր է գալիս նրա անկեղծությունն ու անմիջականությունը, որոնք վերջին պարագան չեն պետական պաշտոնյայի եւ շարքային քաղաքացու փոխհարաբերություններում:

31.12.2012

❋

Երեկ այն մուտքում, որտեղ մեր բնակարանն է, հարսանիք կար: Որքա՜ն եմ ուրախանում, երբ քողը գլխին հարսնացու եմ տեսնում, մտածում եմ՝ տարի անց Արցախում նոր բալիկ կծնվի, նոր օջախի հիմք է դրվում… Ես այս մտքի մեջ՝ հարսնաքավորների միջից հանկարծ տղամարդու մի ձայն՝ բարեւ, տյոտ Վերա, ո՞նց ես… Նայում եմ խոսողին, չեմ ճանաչում: Չե՞ս հիշում ինձ՝ կշտամբալից ասում է նա: Այդ պահին աչքս ընկնում է նրա վերնաշապկի բաց օձիքին, եւ կրծքի խոր այրվածքից մնացած սպին վերադարձնում է հիշողությունս: Մաքսի՜մ՝ նվագի աղմուկից «խլացած»՝ գոռում եմ

ես, այդ ե՞րբ ես եկել: Գրկախառնվում ենք: Ասում է՝ հենց հարսանիքի առիթից եմ օգտվել՝ եկել… հայրենիքս տեսնեմ: Այնտեղ խեղդվում եմ կարոտից, տյոտ Վերա, բայց դե ինչ արած, ճակատագրի հարց է… Վատ չեմ տեղավորվել, թեեւ, մեկ է, այնտեղ էլ ապրելը փափուկ բարձի վրա քնել չէ: Արդեն ընտանիքս էլ եմ տարել: Իսկ գլխավորը՝ որ բավականին բուժվել եմ: Ձեզանից պատմեցեք է՞, ի՞նչ կա, ի՞նչ չկա, տղաներից խաբար… է՞հ, Մաքսիմ ջան, ասացի, «չկա»-ն շատ է, «կա»-ն էլ չկա: Ում մասին ինչ գիտենք՝ մեկ է, ազատելու ճանապարհը ցաքով է պատած, վախենում ենք անունները հայտնենք՝ թուրքերը վերջ տան նրանց…Կախարդական շրջանի մեջ ենք, տղա ջան: Իսկ դու երկա՞ր ես մտադիր հեռվում մնալ… Դե, ասաց, երեխաներին ոտքի կանգնեցնեմ, մի կտոր հացի տեր դարձնեմ… Որ ամեն ինչ լավ լինի՝ մնացողը չեմ, մեր հողը ձգում է:

Հարսանիքը գնաց, ես էլ ասես հարազատ տղայիցս բաժանվեցի: Աստված հաջողության մեջ պահի քեզ, Մաքսիմ ջան, շատ ես տանջվել:

3.05.2013

Ստեփանակերտում շահագործման հանձնվեց եւս մեկ հրաշալի շենք, որը պատիվ կբերեր ցանկացած զարգացած երկրի մայրաքաղաքի: Նորակառույցին նայելուց թվում է, թե հայտնվել ես հռոմ-փարիզներում կամ էլ ամենաքիչը Սանկտ Պետերբուրգում…

«Արցախի ազատամարտիկների միության» նստատեղին է: Շենքում տեղ է հատկացված եւ (կարելի է ասել՝ հարակից) «Արցախի ազատամարտիկների միության» երիտասարդական թեւը հանդիսացող «Հայրենյաց պաշտպան», «Հայրենական պատերազմի եւ աշխատանքի վետերանների միություն», «ԼՂՀ զոհված ազատամարտիկների ծնողների ընկերություն», «ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն», «Մայրություն» եւ այլ հասարակական կազմակերպությունների:

Երեկ տեղի ունեցավ նորամուտի հանդիսավոր արարողությունը, որին, բնականաբար, ներկա էր եւ ԼՂՀ գլխավոր դատախազ ու Արցախի հերոս Արշավիր Ղարամյանը, որին ժողովուրդը պատերազմական տարիների հիշողությամբ դեռ «Արշո» է կոչում՝ «մեր Արշոն»… Ո՛ր վերին աստիճանն էլ զբաղեցնում է Արշոն հիերարխիայի բուրգի վրա, պաշտոնը նրան պահանջվածից ավել չի «կոշտաց-

նում», չի խլում նրանից հոգու պարզությունն ու մարդկային սրտացավությունը: Հենց արարողության ժամանակ Գլխավոր դատախազը, նկատելով Արցախյան պատերազմի հաշմանդամ, երկու աչքով կույր Սերգեյ Բեգլարյանին, քայլ արեց, մոտեցավ եւ իր ափի մեջ առնելով նրա ձեռքն՝ ասաց. «Շնորհավորում եմ քո Մայիսի 9-ը, Սերգեյ ջան: Ես եմ՝ Արշոն…»:

Հանդիպմանը առիթ եղավ, հենց ոտքի վրա, վերհիշելու 1997 թվականի հուլիսը, երբ Ղարվանդում բանակցում էինք թուրք Զաքիրի հետ (վերջինիս իսկ նախաձեռնությամբ) Սպարտակին էլշանով փոխանակելու խնդրով: Զաքիրը մեզ ցույց էր տվել Սպարտակի նկարը… Այն տեսնելով՝ Արշոյի աներձագ Օլեգ Աղաբեկյանը, լսելով Զաքիրի բացատրությունն առ այն, թե ինքը պիտի բանակցի անձամբ Ադրբեջանի ՊԱԿ-ի ղեկավար Նամիկ Աբասովի հետ, «Զաքիր մուալիմին» շահագրգռելու համար ասաց, որ, հանուն վստահության, ինքը պատրաստ է որպես կամավոր «պատանդ»՝ անցնել ադրբեջանական կողմն ու այնտեղ սպասել փոխանակմանը, պայմանով՝ որ իրենց խմբից մեկն էլ նույնը կանի՝ անցնի հայկական կողմը: Ես ցնցվել էի Օլեգի անկեղծությունից ու համարձակությունից…

- Նա միշտ էլ այդպիսին է եղել,- հիշեցմանս վրա ժպտաց Արշավիր Սուրենովիչը,- լավ զինվոր ու

լավ հայրենասեր: Հետո էլ զարմանալու ի՞նչ կա, ախր Սպարտակին ճանաչելու օրվանից երկուսս էլ հարգում էինք: Նա իրոք լավ տղա է, այն ժամանակ մեզ չհաջողվեց արդյունքի հասնել, բայց թող բարով հաջողվի՝ մի օր իրոք երեւա, վերադառնա…»:

Նա խոսում էր, իսկ ես արդեն մտովի ուրիշ օր էի վերհիշում: Էլի բանակցելու էինք գնացել, մեր կողմից 7 հոգի էինք, թուրքերի կողմից՝ մոտ 30… Բանակցության կեսին թուրքական դիրքերից կրակոցներ հնչեցին մեր ուղղությամբ: Արշոն իսկույն բերնին տարավ ձեռքի ռադիոսարքն ու թիկունքի մերոնց հրամայեց. «Եթե պարզվի, որ սա ծուղակ է, եւ լուրջ «պայթյուն» լինի, յուրային ու թշնամի չասեք՝ առանց ժամանակ կորցնելու գնդացիրներից կրակ կուղղեք մեզ վրա…»: Ես սկզբում չհասկացա Արշոյի պահանջի իմաստը, բայց երբ հասկացա, անկեղծ եմ ասում, վախենալու փոխարեն հպարտության ու հիացմունքի զգացում ունեցա նրա վճռականության համար:

Մեկ-մեկ զարմանում էլ եմ, թե այսքան դրամատիկ հուշերն ինչպես եմ տեղավորվել-մնացել մի փոքրիկ ու տառապած գլխում:

10.05.2013

…2012թ. հոկտեմբերի 14-ն էր: Տոնական տրամադրություն: Հերթական անգամ նշվում էր Ստեփանակերտի Օրը: Առավոտյան մեր գրասենյակ եկավ քաղաքապետի տեղակալ Արմեն Հակոբյանը եւ քաղաքապետի անունից կազմակերպությանը հանձնեց ծաղիկներ, մայրաքաղաքի զինանշանով դրոշակիկներ ու 100 հազար դրամ: Այն իսկույն փոխանցեցինք «Հայրենիք եւ Հավատ» մեդալի թողարկման արժեքի (դեռ պարտք ունենք) մասնակի մարմանը:

«Պյատաչոկ» պուրակում սպորտային եւ այլ միջոցառումներ էին ընթանում, այնտեղ հանդիպեցի «Արփեն» ծննդաբեր մայրերի հիմնադրամի ներկայացուցիչ Սարգսին: Նրա կողքին մի անձնավորություն էլ կար, ներկայացավ «Ալեք Բաղդասարյան»: Այցելեցին մեր հուշաթանգարանը: Այն մեծ տպավորություն թողեց Ալեքի վրա: Հրաժեշտից առաջ նա 340 դոլար հանեց գրպանից ու թե՝ տիկին Գրիգորյան, սա հենց այնպես… եթե նախապե՞ս իմանայի այս ամենի մասին…

Գումարն իսկույն մուտքագրեցինք:

Անցավ ժամանակ, եկավ 2013թ. մայիսի 8-ը: Անկախության հրապարակում Եռատոնն էինք տոնում՝ տեսա նույն Ալեքին: Մոտեցա, հիշեցրի այն 340 դոլարի մասին եւ իրազեկելով, թե մուտքագր-

ված գումարը կազմակերպության ինչ ծրագրի կատարմանն է նպաստել, մի անգամ էլ շնորհակալություն հայտնեցի: «Ախր ինչի՞ համար,- նեղվեց Ալեքը,- դա ի՞նչ գումար էր՝ մարդուն այսպես մեծարելու համար… Դրան Դուք եք արժանի՝ Ձեր կատարած գործով»: Ասացի՝ բարեգործական անգամ մեկ լուման մեզ համար մեծ նշանակություն ունի ամենից առաջ հենց այն պատճառով, որ բարեգործական է՝ սրտից բխած բարոյական քայլ, հետո միայն՝ ֆինանսական միավոր…

Դա իրոք այդպես է: Մեր ցավող սիրտը գոնե մասնակիորեն մխիթարվում է պետության ու հատկապես հասարակության ուշադրությամբ…

Գրեցի այս տողերը եւ հիշեցի, որ տարիներ առաջ, դեռ 1999 թվականին, մի անգամ էլ մեր համաքաղաքացի գործարար Էդուարդ Վերդյանն է 100 հազար դրամ նվիրել կազմակերպության կարիքներին: Գուցե կգտնվի մեկը, որ կասի՝ մի անգամ մի բան է արել՝ մեծարո՞ւմ եք… Մեծարում եմ, այո, որովհետեւ այդ մարդը, մեկ թե բազմակի անգամ՝ շատերին է օգնել, այդ թվում՝ զոհվածների, վիրավորների, գրողների, արվեստագետների եւ այլոց: Երախտամոռությունը մարդու ամենաբացասական հատկանիշն է:

11.05.2013

❁

2003 թվականի մայիսի 28-ից իմ կյանք մտավ մի անձնավորություն, որը ճանաչածս ժամից մինչեւ գրիչ շարժելուս այս պահն իր սրտի լույսով ջերմացնում է հոգիս:

Նրա՝ Մարգարիտա Խաչատրյանի, հետ ծանոթացա, երբ Երեւան էի մեկնել ոչ միայն Առաջին հանրապետության տոնին մասնակցելու, այլեւ որոնողական աշխատանքի հետ կապված որոշ հարցերով զբաղվելու: Օրվա Հանդիսավոր արարողությունից հետո Մարգարիտայի տուն գնացինք երեքով՝ «Արաբո» ջոկատի հրամանատար Մանվել Եղիազարյանը, ես, Վաչիկ Հարությունյանը: Գիտեի, որ տիկին Մարգարիտայի Արսեն որդին խաղաղ օրով զոհվել է պարտադիր զինծառայության ժամանակ, եւ որ մայրը գլխավորում է «Զինվոր» հասարակական կազմակերպությունը:

Այդ կինն ինձ ցնցեց իր դիտողունակությամբ եւ հաստատակամությամբ, ճշմարտությունը երեսին ասելու (եթե խոսակիցն անգամ երկրի առաջին դեմքն է) կարողությամբ: Եվ ընդհանրապես՝ իր ամբողջական խառնվածքով ու բնավորությամբ: Մարգարիտայի խոսքն ունակ է ծակելու ամենապինդ զրահն անգամ (պատահական չէ, որ զինվորականների շրջանում շատերը նրան կատակով

«տիկին Մորոզ» են ասում), իսկ եռանդին նախանձել կարող է ցանկացած ոք:

2006 թվականին Մարգարիտա Խաչատրյանն ընտրությունների արդյունքում դարձավ եւ Բանակ-հասարակություն համակարգող խորհրդի նախագահ (ի դեպ, Արցախից երեք հոգի՝ ես, Գալյա Առստամյանն ու Գեղամ Ստեփանյանը այդ կազմակերպության անդամներից ենք) եւ առայսօր պատվով է կատարում իր պարտականությունները: Քանի անգամ էլ որ նա լինում է Արցախում, իսկ դա բավականին հաճախ է պատահում, այցելում է մեզ, օգնում՝ ինչով կարող է, նպաստում հասարակական կազմակերպության հեղինակության բարձրացմանը, Երեւանում էլ՝ ամեն կերպ օժանդակում մեր այս կամ այն կարեւոր հարցի լուծմանը: Նա ինձ համար ավագ քույր լինի կարծես եւ իմաստուն խորհրդատու: Ես ուրախ եմ, որ հայրենիքն ունի նրա նման արժանի դուստր, ինչպես նաեւ հպարտ եմ, որ վայելում եմ նրա սերն ու հարգանքը: Իսկ ինչ իմ սիրուն ու հարգանքին է վերաբերում՝ հանդեպ նրա, ասելն անգամ ավելորդ է…

Ես հաստատ գիտեմ, որ մեր կազմակերպության շատ անդամներ, իսկ ամենից շատ՝ հենց վարչության անդամները, իրենց ստորագրությունները սիրով կդնեին այս տողերի տակ, որովհետեւ բազ-

մակի շփման ընթացքում իրենք էլ են համոզվել, թե ինչպիսի աննման մարդ ու քաղաքացի է տիկին Մարգարիտան, ու թե որչափ խորն է ցավում նրա սիրտը մեր Խնդրի ու գործերի համար: Ութ տարվա ծանր ու պարտավորեցնող աշխատանքը վերջերս անդրադարձավ նրա առողջության վրա՝ ամիսներ առաջ ծանր ինսուլտ տարավ… Ով էլ լիներ նրա տեղ՝ կկոտրվեր, խեղճանար, բայց ո՞չ՝ այսօր նա էլի նախկին «Մորոզն» է եւ շարունակում է առաջ տանել գործը: Այդ կնոջ կամքն ու արիությունը տառացիորեն փառաբանման են արժանի: Ապրիր երկար, մեր զինվորների եւ նրանց ծնողների մեծ բարեկամ, մեր բոլորի քույր:

18.05.2013

❋

Պառկել էի, որ քնեմ, բայց չկարողացա: Նման դեպքերում Շուրային չարթնացնելու համար կամաց գնում եմ խոհանոց, լույսը վառում ու մի բանով զբաղվում: Ամենից հաճախ՝ օրագիրս բացում… Անկողին մտնելուց առաջ, հեռուստացույցով, ռուսական մի կինոֆիլմ էի դիտել, որում իրա-

դարձությունները տեղի են ունենում տայգայում: Դա էլ հիմա ինձ հիշեցրեց «մեր կենու» պատմությունը…

…2008 թվականի ուշ աշնանն էր, մեր վարչության անդամ, անհայտ կորած ազատամարտիկ Արսեն Աբալյանի մայր, սումգայիթից բռնագաղթած Ժենյա Մայիլյանը զանգեց, ասաց՝ ամուսինն անտառում քիչումիչ փայտ է մթերել, Շուրայի հետ մեքենայով կարո՞ղ եք գնալ բերել: Սիրտս ճմլվեց: Սերգեյ քեռին, ախր, անբուժելի հիվանդ էր եւ նրան քիչ էր մնացել ապրելու, ինչպե՞ս է անտառում վառելափայտ հայթայթել: «ՈՒԱԶ»-ի նստատեղիները հանեցինք, գնացինք ու բերինք:

Ետդարձի ճանապարհին միտս ընկավ մի ուրիշ դեպք, որը տեղի էր ունեցել ավելի վաղ՝ 2002 թվականի ապրիլի սկզբներին: Մարտակերտ օգնություն էինք տարել մեր կազմակերպության անդամներից երեքին, ու ետ վերադառնալիս, Տիգրանակերտին չհասած՝ կենու թփեր տեսանք:Հարցրի՝ Շուրա, կենին լավ վառվում է, չէ՞: Թե՝ վառվելն էն խոսքը չի՝ դռդոռանչ ա անում: Ասացի՝ ուրեմն, մեքենան կանգնեցրու եւ կացինը ձեռքդ առ… Իսկույն հասկացավ միտքս: Բանն այն էր, որ մեր անդամներից Ժաննա Թավրիզյանը, Արփեն Մեհրաբյանը, Էմմա Հայրապետյանը, Լենա Ալուխանյանը

եւ Կարո Բաղդասարյանը փայտի ու հատկապես «ակնավառիչի» դժվարություններ էին քաշում: 8 մեշոկ լիքը կենու ճյուղեր բերեցինք Ստեփանակերտ, որից մեկը մեզ թողեցինք, մեկը՝ Ինգայիս, մյուսները բաժանեցինք նրանց:

Ի դեպ, կենու հետ կապված այլ պատմություն էլ հիշեցի, որ վերաբերում է երջանկահիշատակ Լենա Ալուխանյանին (ծանր եւ անբուժելի հիվանդությունից մահացել է 42 տարեկանում): Մի օր եկավ, լաց եղավ: Վախեցած հարցրի՝ ի՞նչ է պատահել, թե՝ քո տված կենու ճյուղիկներով հաթայաթին վառարանը տաքացրել եմ՝ տակը ճուտիկներ հանել ոտքի կանգնեցրել, դուրս հանել բակ, մուտքի հարթակում բնակարանը վերանորոգող հարեւանիս թափած ցեմենտը կերել՝ համատարած կոտորվել են: Եվ դրա համար լա՞ց ես լինում՝ կշտամբեցի նրան, բա ջհանդամը թե կոտորվել են: Հառաչեց. «է՜, Վերա, չգիտես է՜ ինչ եմ մտածել՝ նրանց դիակները թափված տեսնելով: Ինձ թվաց, թե իմ առջեւ մարտի դաշտն է ու...»: Հասկացա նրան: Ահա եւ մեր մեջ շարունակվող պատերազմը: Կյանքի վերջին շրջանում առանձնապես էր զգայուն դարձել Լենան, ընդամենը քսանքանի տարեկան է եղել ու երեք երեխայի մայր, երբ ամուսինը գնացել է հերթական մարտի ու ետ չի եկել:

Չեմ կարողանում մոռանալ այն երեկոն, երբ լսեցի նրա մահվան լուրը: Շրջանից էի եկել, մեր սանդղահարթակի կիսախավարում զիվորի համազգեստով մեկը մոտեցավ ինձ ու դողացող ձայնով թե՝ տյոտ Վերա, այսօրվանից երկկողմանի որբ եմ… մաման մահացել է: Մարատն էր՝ Լենայի կրտսերը, որ պարտադիր զինծառայության մեջ էր:

Աստված իմ, ինչերի՜ միջով ենք անցնում: Ու մեր տառապանքի ծայրը չի երեւում:

15.07.2013

❁

«Մեսրոպ Մաշտոց» համալսարանում մի անգլիացի կա, դասախոս է: Արդեն քանի տարի է Ստեփանակերտում՝ բարեկամացել է եւ մեր կազմակերպության հետ. գնում-գալիս է, հետաքրքրվում մեր ծրագրերով: Մտադրվել է օգնության ուղի գտնել դրանցից մեկի իրականացման համար: Չգիտեմ՝ կստացվի թե ոչ, բայց բոլոր դեպքերում հաճելի է, երբ օտարերկրացին այդչափ ուշադրություն է հատկացնում մեր խնդիրներին («մեր» ասելով միայն մեր կազմակերպությանը չէ, որ նկատի ունեմ):

Հետաքրքիր մարդ է: Նրանից կարելի է երկրի

քաղաքացի լինելու… արվեստը սովորել: Բացատրեմ. պետթատրոնի դիմացի հինգհարկանի շենքի (Լուսավորչի, 8) մոտ մի պատկառելի, հրաշալի ուռենի կար, առջեւը՝ հուշարձան եւ աղբյուր: Գործարար մեկը տարածքն ընդլայնելու համար վերեւից գլխատեց ծառը եւ պատրաստվում էր լիովին ոչնչացնել այն: Մեր քաղաքն, այո, դարձել է շինհարթակ, բայց դա չի նշանակում, թե բնակչությանը, հատկապես նրա ամենախոցելի 2 խավին՝ ծերերին ու երեխաներին, կարելի է զրկել կանաչից ու նրա հովից… Ինչո՞ւ չգտնվեց մեկը, որ կանխեր ծառի գլխատումը (կամ՝ գուցե այդպիսին եղել է, բայց իշխանությունը չի անսացել նրա բողոք-արձագանքին): Բոլոր դեպքերում գործին խառնվել՝ հարցը լուծել է օտարերկրացի Նիք Վեգները: Նա փրկեց կիսասպան եղած ծառը: (Նամակ էր պատրաստել՝ հղելու անգամ երկրի նախագահին, չգիտեմ՝ հղե՞լ է, թե՞ ոչ): Այժմ ուռենին նորից է քամուց օրորում իր կանաչ վարսածամերը, բայց քանի՞ տարի կպահանջվի, որպեսզի այն առաջվա պես կատարը հասցնի հինգերոդ հարկի բարձրությանը…

Կեցցեք, պարոն Վեգներ, դուք մեզ բոլորիս լավ դաս տվեցիք:

Վերջերս Նիքը եղել է հանրապետության շրջան-

ներում, շրջանային ու գյուղական դպրոցներում: Երկու օր առաջ մեզ մոտ եկավ դիտողությամբ. ինչո՞ւ դպրոցներում կան Արցախյան պատերազմում զոհվածների ստենդներ, անկյուններ, անհայտ կորած տղաների՝ ոչ: Դա ճիշտ չէ եւ անարդար է՝ թարգմանչուհու օգնությամբ բացատրում էր (տեսեք ու՞մ) Վեգները: Ի՞նչ պատասխանեինք: Ես չէ, որ պետք է այդ ծուռը շտկեմ, այլ, հավանաբար, մեր ուսուցիչները, դասղեկները, դաստիարակչական աշխատանքների գծով տվյալ դպրոցի պատասխանատուն: Իսկ մենք մեր հերթին կարող ենք ու պատրաստ ենք նրանց օգնել:

15.07.2013

❁

Արդեն մայիսն էլ սպառվեց, առջեւում քիչ ժամանակ մնաց. հոկտեմբերի 10-ին լրանում է մեր կազմնակերպության հիմնադրման 15-ամյակը: Կամաց-կամաց պատրաստվում ենք մեզ համար կարեւոր այդ իրադարձությունը հանդիսավոր պայմաններում նշելուն: Որոշել եմ հոբելյանին նվիրված փաստավավերագրական ֆիլմ պատրաստել:

Բայց մինչ այդ երկու խոշոր միջոցառում էլ ու-

նենք անցկացնելու. հունիսի 29-ի ՕՐԸ եւ օգոստոսի 10-ին՝ մեր արդեն 6-րդ համագումարը: Աստված զորավիգ լինի այնպես, որ առաջին հերթին ինքներս գոհ լինենք մեր կազմակերպածից: Ես այդ հարցում շատ եմ խիստ, ու եթե ձեռնարկվածը ինձ դուր եկավ, գիտեմ, որ հաստատ դուր կգա ուրիշներին էլ:

20.07.2013

Երբ պատառը կուլ չի գնում
(«Արաբո» ջոկատի անհայտ կորած ազատամարտիկներ Կամոյի եւ Արմենի հայր Ժորա Կարապետյանը՝ ետպատերազմյա հինգերորդ տարում)



Սպասումը դառնում է քար
(անհայտ կորած ազատամարտիկ Սպարտակ Գրիգորյանի հայր Շուրան՝ մինչեւ ԱԿԱՀՄ ծնունդը)

Եվ կարոտն է սիրտդ ճմլում
(Արցախյան պատերազմի մասնակից Արգեն Գրիգորյանը զինվորյալ մոր՝ անհայտ կորած Զինայի նկարի մոտ)

«Այս ավերակներու վրա ինչպե՞ս «թագավորեմ»...
Սեզամ, բացվի՞ր... ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասյանի եւ նախագահի աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ Բորիս Ալավերդյանի հետ՝ ապագա հուշաթանգարանի տեղում: 2002թ.:

Եթե կարողանայի՞ն խոսել ճանապարհները...
Ստամբուլ: 2006թ., նոյեմբեր: Պատմական թշնամու փակ դարպասի առջեւ...:



Որդեգրի՞ն է՞լ կխլեն, Աստվա՞ծ...
Աջից՝ անհայտ կորած ազատամարտիկ Էդուարդ Ավանեսյանը: Որտեղի՞ց իմանային ծնողները, թե իրենց ինչ է սպասում առջեւում:

Շատերն էին այս տարիքին, երբ զենք վերցրին՝ պաշտպանելու Հայրենիքը:
Անհայտ կորած ազատամարտիկներ Նորայր Միրզոյանը (ձախից) եւ Արմեն Կարապետյանը:

Որտե՞ղ չի տանում կարոտյալի ուղին... Ստավրոպոլ, 16.11.2012թ.
Ստավրոպոլի «Նաիրի» հայկական ազգային մշակութային ինքնավարության տնօրեն Անտոն Վարդանյանի հետ:

Առանց բացատրության, 10.08.2012թ.
կամ՝ Բարոնուհին՝ մեր քույրը «մշուշների երկրից»:



Արվեստում եւ կյանքում...
Անհայտ կորած ազատամարտիկ Հրաչ Գալստյանը (ձախից) երբեմնի Ղարմետաքսկոմբինատի ժողթատրոնի բեմում՝ եւ կրտսեր մարտական ընկերոջ հետ՝ 1991 թվականին:

Մրցույթում 1-ին տեղ գրված հուշարձանի մանրակերտը

Հուշարձանային «ոդիսական»
կամ՝ երբ ստացվում է ռուսական առածի պես. лучше синица в руках, чем журавль в небе...
Աջից՝ ՀՀ անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի հուշարձանը Եռաբլուրում: 19.09.2003թ.

Այց պապիկին...
Լարիսա տատը Լարիսա թոռան հետ՝ անհայտ կորած ազատամարտիկ Վագիֆ Սաֆարյանի նկարի մոտ:

Կա՛ հուշաթանգարանը, ու թող երկար կեցցեն բոլոր նրանք, ովքեր նպաստել են նրա կայացմանը:

Անակնկալ:
Պարոն Հակո՛բն է /Գույումճյան/ եկել Ստեփանակերտ ու մեր հուշաթանգարան: Փարիզյա՛ն հուշեր... 2001թ.

Հոգու պարտք:
Անհայտ կորած ազատամարտիկ Արկադի Հովնանյանի եղբորորդի Անդրեն է տատի՝ Սեդա Առաքելյանի հետ հուշաթանգարան այցելել: Նույն ինքը՝ հայ երաժշտական բեմի փայլուն աստղ Անդրեն:

Մոռացության չտրվելիք մասունքներ:
Այստեղ դիտելու եւ խորհելու շատ բան կա...

Տուր՝ եւ կստանաս (Աստվածաշունչ):
Լինում են այցելուներ էլ, որ դատարկաձեռն չեն գալիս: Ինչպես Ռուսաստանում ապրող՝ ղարաբաղցու արմատով Գալստյան ընտանիքից այս երեքը՝ Լենսերը (ձախից), հայրը՝ Սուրենը եւ զարմիկը՝ Հրանտը: Բարենպատակ տուրքին մեծ ու փոքր չի լինում: 25.08.2012թ.

Տաք սիրտը տաք էլ ժպիտ է ծնում...
Ալեք Բաղդասարյանն ուղեկիցների հետ՝ ԱԿԱՀՄ գրասենյակում: 14.10.2012թ.

Կինոերախայրիք:
Արցախի հեռուստատեսությունում: «Անունդ հայտնի՝ ճակատագիրդ անհայտ» փաստավավերագրական ֆիլմի առաջին ցուցադրումից հետո:

ՀՈՒՆԻՍԻ 29: Այց: Անհայտ կորած ազատամարտիկների հուշարձանին:

Պարտավորվածություն՝ հայրենիքից բացակա եւ նույն ժամանակ «ներկա» զինվորի հանդեպ:

Փոխայցելություններ:
Զինվորականները սիրում են լինել մեզ մոտ, մենք էլ՝ իրենց: Եվ պատահում են շփման այնպիսի պահեր, որոնք դրդում են այսպիսի պատկերի…

ԴԵՄՔ:
Տառապագին որոնումներում, բանակցություններում իմ զորավիգը՝
կորովի Արշոն...

Շաղբուլաղ 15.12.1993թ.
Արշավիր Ղարամյանի գումարտակը:

Հերոսը հերոս է բոլոր ժամանակների համար:
Անհայտ կորած ազատամարտիկ, ԼՂՀ 1-ին եւ ՀՀ 2-րդ աստիճանի մարտական խաչերի շքանշանակիր Կարոտ Մկրտչյանի անվան գրադարանի բացումը ԱԿԱՀՄ գրասենյակում:

Կարոտի հայր Հովհաննեսը (կենտրոնում) մեր հուշաթանգարանում, որդուն նվիրված գրքի շնորհանդեսից հետո:

Օտար հարազատներ:
ԿԽՄԿ Ստեփանակերտի գրասենյակի ղեկավար Սոֆյա Պակսլին (2010-2011) ձախակողմյա նկարում (առաջինն աջից) եւ Ջորջ Դրընդարսկին (2006) գործընկերների հետ (կենտրոնական նկարում՝ ձեռնափայտով) եւ Բարդայից Ստեփանակերտ ժամանած՝ Բարդայի գրասենյակի ղեկավար Հելեն Փլենևա՝ աջակողմյա նկարում:

Մշտահոս կաթիլը քարն էլ է ծակում:
Վերջապե՜ս...Սեղանին է «Հայրենիք եւ հավատ» մեդալը, որով շուտով կպարգեւատրվեն արժանի շատերը:

Պարգեւը՝ տեղում:
«SBS» ընկերության նախագահ Բորիս Բարսեղյանը մեդալն ընդունեց նույնքան արժանապատվորեն, որքան արժանապատվորեն բազմիցս օգնել է մեզ...

Երբ դու մենակ չես...
ԱԿԱՀՄ կողմից եռատոնյան նվերների հանձնում անհայտ կորած ազատամարտիկների մի խումբ հայրերի (2008թ.):

Այցելություն, օգնությամբ հանդերձ, անհայտ կորած ազատամարտիկ Արմեն Մելիքյանի՝ անկողնուն գամված մորը՝ Լենորային (ձախից առաջինը):

Մեր հաղթաթեւ արծիվը:
Կլինի եւ ա՛յն օրը, երբ թագը քիպ նստի նրա գլխին:
Նրանց եւ բոլորի ջանքերով…

Ճակատագրի հուշածով:
Նրանք կարող էին լինել ի՛մ թոռները... բայց նրանք նաեւ իմ թոռներն են, ու ես աղոթում եմ նրանց արեւշատության համար:



Խոտը՝ քեզ, կաթդ՝ ինձ...
ԱԿԱՀՄ եւ ԿԽՄԿ Ստեփանակերտի գրասենյակի համատեղ նոր ձեռնարկումը՝ «Միկրոտնտեսական նախաձեռնություն» ծրագիրը, գործողության մեջ:

Պետական ուշադրությունը՝ սպեղանի:
Հուշաթանգարանի դիտարժան ցուցանմուշները շատ են...

«Դրսի» սուր հայացքը:
Անգլիացի Նիկ Վեգները հաճախ է այցելում մեզ: Ուզում է օգնած լինել եւ սիրում է խորհուրդներ ու հարցեր տալ: Նրա վերջին, ամենաթարմ հարցը. «Ինչո՞ւ Արցախի դպրոցներում կան պատերազմում զոհվածների վահանակներ, անկյուններ, իսկ կորած ազատամարտիկների՝ ոչ: Դա տգեղ է եւ անարդար»:

«Մի ունեցիր 100 ռուբլի, այլ ունեցիր հարյուր բարեկամ»:
Գեներալ մայոր Վարդան Ավետիսյանն ինձ շատ է օգնել «Հայրենիք եւ Հավատ» մեդալի կայացման հենց նախասկզբում:

Վարդանը Ավոյի եւ մարտական մյուս ընկերների հետ…

ԼՂՀ անկախության օրը՝ տղաների հուշարձանի մոտ:

Զինվորների մոտ՝ զինվորների համար:
ԼՂՀ բանակ-հասարակություն համակարգող խորհրդի անդամները Ն.զորամասի խոհանոցում…

Հաղթանակի գինը:
Այն նույնը չէ բոլորի համար: Ու՞ր է թե իմ որդին էլ վերադառնար եւ ապրեր այսպես՝ սայլակին գամված: Գլուխ խոնարհել է պետք այս տղաների առջեւ…

Ստեփանակերտ, 2013թ. ապրիլի 9:

Հայացք:
Դիտումից հետո:

Հայրենյաց Պաշտպանի օրը:
ԱԿԱՀՄ-ի հյուրերն են ՀՄՊՎ, ԱԱՄ եւ «Լուսաբաց» կազմակերպությունների մի խումբ անդամներ. հրավիրվել են համատեղ նշելու թանկագին տոնը:

Բարեկամի ձեռքը:
«Արցախի երիտասարդական կենտրոն» կազմակերպության տնօրեն Սուսաննա Պետրոսյանը եւ ՀՕՄ Արցախի մեկուսի մասնաճյուղի ատենապետուհի Կարինե Դաղայանը շնորհավորելու է եկել ԱԿԱՀՄ անդամ 15 մայրերի: 7 ապրիլի, 2013թ.:

Գործի նվիրյալներ: Տիկին «Մորոզ»:
Նրան՝ Մարգարիտա Խաչատրյանին, սիրում եւ միաժամանակ նրանից պատկառում են անգամ տղամարդիկ՝ արտակարգ գործունյա, նույնքան էլ պահանջկոտ լինելու համար:

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՈՂԸ ԵՏ ՔԱՇԱԾ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Խմբագիր՝	Միքայել Բալյան
Սրբագրիչ՝	Իրենա Մարտիրոսյան
Համակարգչային շարվածքը՝	Գայանե Խաչատրյանի
Էջադրումը՝	Թամար Հարությունյանի
Կազմի ձևավորումը՝	Գոհար Ավանեսյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16,
ծավալը՝ 12.5 տպ. մամուլ, տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ-2014